

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ԱՃՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԳԼ ԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ժ.02.07 - «ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ,
ՊՐՈՖԵՍՈՐ Ա. Է. ՉՈՒԲԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ.....	1
ԳԼՈՒԽ1 ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒՄԸ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ. ՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	11
1.1. Լեզվակրան տնտեսում և խոսքում.....	11

1.2. Խոսքման հոգել էզվաբանական, գործաբանական և հանրամշակույթային հիմքերը.....	24
ՄԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՄՆԵՐ	47
ԳԼՈՒԽ2 ԼԵԶԻԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ	51
2.1. Ձեռն ու մը՝ որպես էզվական տնտեսման շարահյուսական միջոց.....	51
2.2. Երկրորդական ստորոգում պարունակող կառույցները՝ որպես էզվական տնտեսման դրսևորում.....	70
2.3. Դերբայական դարձվածների կիրառույթ ու նը որպես էզվական տնտեսման միջոց.....	77
2.4. Լեզվական տնտեսման վերառույթային դրսևորումները.....	96
ՄԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՄՆԵՐ	104
ԳԼՈՒԽ3 ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵԶԻԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ	108
3.1. Փոխաբերույթ ու նը՝ որպես իմաստի խոսքման էզվաճանաչողական կաղապար.....	108
3.2. Փոխաբերույթան գործառույթանյուրահարկույթ ու նները գիտական դիսկուրսում.....	115
ՄԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՄՆԵՐ	150
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	153
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	156

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Խոսքային գործունեության ընթացքում խոսակիցների կողմից հաղորդակցական միջոցներ ընտրելու և դրանք համապատասխանաբար գուժակցելու հարցում կարևոր դեր է կատարում լեզվական տնտեսման սկզբունքը, որը, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրության արդյունքները, ունի բավականին երկարատև հետազոտական պատմություն: Այս երևույթը դրսևորվում է լեզվի տարբեր հայեցակետերում՝ ինչույնիս, բառային, ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական: Ավանդաբար լեզվական տնտեսումը լուսաբանվել է տարածմանակյա հայեցակետով, մասնավորապես՝ լեզվի պատմական զարգացման ընթացքում լեզվի ինչյունական կազմի կրած փոփոխությունների մեկնաբանության լույսի ներքո: Ավելի ուշ շրջանի լեզվաբանության ուշադրության կենտրոնում առավել հաճախ հայտնվել են լեզվական տնտեսման սկզբունքի իրացման կոնկրետ միջոցները, որոնք, որպես կանոն, ուսումնասիրվել են նկարագրական լեզվաբանության դիրքերից: Ընդ որում, հաճախ նույնիսկ չի ել գիտակցվել դրանց մեծ հաղորդակցական ներուժը և տեքստակազմիչ նշանակությունը: Սակայն վերջին շրջանի հետազոտությունները, և մեր աշխատանքն այդ թվում, ցույց են տալիս, որ լեզվական տնտեսման միջոցները, թեև ձևի առումով սեղմ, բայց իմաստային առումով տարողունակ կառույցներ են: Այսինքն՝ դրանք թույլ են տալիս ձևավորել զանազան ներակա իմաստներ և կանխենթադրույթներ, որոնք միտված են արտահայտելու առավել ազույն տեղեկատվություն և լեզվական միավորների նվազագույն կազմով՝ ապահովելով մտքի կուռ և տրամաբանական կառուցվածք, հակիրճություն, տեղեկատվական հագեցվածություն, ժամանակի և տեղի տնտեսում և այլն: Թերևս դրանով էլ կարելի է բացատրել լեզվական տնտեսման միջոցների լայն կիրառությունը տարբեր գործառական ոճերում, այդ թվում՝ գիտական խոսքում:

Սույն աշխատանքում մեզ համար ելակետային են լեզվաճանաչողական և լեզվագործաբանական հայեցակետերը: Ինչպես հայտնի է, ճանաչողական լեզվաբանությունը լեզվական

միավորներն ուսումնասիրում է լեզվական ձևի և իմաստային կառուցվածքի կուռ կապի լույսի ներքո, որտեղ ձևը ծառայում է իմաստաստեղծման գործառույթին, ընդ որում՝ իմաստի ձևավորումը, ինչպես նաև համարժեք վերծանումը պայմանավորված են մարդուն բնորոշ ճանաչողական մեխանիզմներով, հաղորդակցության գործաբանական, գործառական, հանրամշակութային ու այլ առանձնահատկություններով: Գործաբանական լեզվաբանությունն ուսումնասիրում է խոսքը՝ որպես հասարակական գործունեության և համագործակցության միջոց, որը խոսողը գործարկում է՝ օգտվելով ներլեզվական օրենքների և արտալեզվական օրինաչափությունների ընձեռած հնարավորություններից: Լեզվական տնտեսումը ենթադրում է լեզվական միավորների հատուկ ընտրության և դասավորության հաշվին տեքստի իմաստային կառուցվածքի խոսացում, որը թելադրված է հաղորդակցության գործաբանական առանձնահատկություններով և ծառայում է տվյալ խոսքային իրադրությունում կոնկրետ հաղորդակցական նպատակների իրականացմանը: Եվ քանի որ մեր նպատակն է բացահայտել լեզվական միավորների՝ խոսցման արդյունքում իրականացրած կոնկրետ գործառույթները, որոնք, որպես կանոն, պայմանավորված են շարահյուսական կառուցվածքի փոփոխության արդյունքում առաջ եկած իմաստաբանական առանձնահատկություններով, միանգամայն տրամաբանական է, որ լեզվական տնտեսման լիարժեք ու համակողմանի ուսումնասիրությունը կարող է առավել արդյունավետ իրականացվել նշված երկու մոտեցումների կիրառմամբ:

Ինչպես ցույց է տալիս մեր կողմից կատարված հետազոտությունը, լեզվական տնտեսման միջոցների դերում շարահյուսական մակարդակում հաճախ հանդես են գալիս զեղչված կառույցները, դերբայական դարձվածները և տեղեկատվությունը սեղմ դարձնելուն ուղղված՝ վերասույթային մակարդակի կրճատումները, ինչպես նաև փոխաբերությունը՝ իմաստաբանական-ճանաչողական մակարդակում, որոնք կազմում են սույն ուսումնասիրության բուն առարկան: Մասնավորապես՝ ուրույն

շարահյուսական կառուցվածքի շնորհիվ վերջիններս ներակայում են ասույթի հաղորդած տեղեկատվությանը՝ մեծացնելով իրենց տեղեկատվական բեռնվածությունը: Այսպիսով՝ Լեզվական միավորների ձևական կառուցվածքի կրճատմանը զուգահեռ առաջ են գալիս գանազան թաքնված իմաստներ, ներակայումներ, կանխենթադրույթներ, որոնք ապահովում են տեքստի իմաստային ամբողջականությունը: Յետևաբար սույն աշխատանքի շրջանակներում անգլերեն գիտական խոսքում Լեզվական տնտեսման միջոցների գործառույթների ուսումնասիրությունը կատարվում է խոսքաստեղծման ու խոսքընկալման գործընթացում այդ թաքնված իմաստների ձևավորման և ճանաչման մեխանիզմների վերհանման միջոցով՝ դիսկուրսի շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական առանձնահատկությունների փոխհարաբերության դիտանկյունից:

Աշխատանքի համար **տեսական հիմք** են ծառայում ճանաչողական և գործաբանական Լեզվաբանությունը, որոնցից առաջինի հիմնական խնդիրն է ուսումնասիրել խոսքը՝ որպես խոսող անհատի կողմից իրականությունը ճանաչելու և Լեզվական միավորներով ներկայացնելու միջոց, մինչդեռ երկրորդ մոտեցումը խոսքային գործունեությունը դիտարկում է որպես խոսողի կողմից գիտակցաբար կառավարվող և խոսքին հատուկ օրենքներով կանոնակարգվող գործընթաց: Նման մոտեցումը թույլ է տալիս խոսքային գործունեության առանձնահատկություններն ուսումնասիրել նաև արտալեզվական Լայն համատեքստում:

Լեզվական տնտեսման տեսությունն ունի հետազոտական որոշակի պատմություն: Այդուհանդերձ թե՛ Լեզվական համակարգի, թե՛ խոսքային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում հանդես եկող այս կարևորագույն Լեզվական երևույթի քննությունը մինչև այժմ հիմնականում սահմանափակվել է կամ զուտ տեսական բնույթ կրող աշխատանքներով, որոնց ուշադրության կենտրոնում եղել է Լեզվական տնտեսման սկզբունքի ընդհանուր ուսումնասիրությունը՝ առանց կոնկրետ խոսքային դրսևորումներին անդրադարձ կատարելու, կամ Լեզվական տնտեսման այս կամ այն միջոցի ուսումնասիրությունը

որևէ կոնկրետ հայեցակերպով (շարահյուսական, իմաստաբանական, ոճական և այլն)՝ հպանցիկ կամ առանց տնտեսման գործառույթի մասին հիշատակելու: Բացի այդ, չնայած լեզվական տնտեսումը էական դեր է կատարում անգլերեն գիտական խոսքում, որտեղ հանդես է գալիս բավականին արտահայտված կերպով, և, կարելի է ասել, դարձել է տվյալ գործառական ոճի բնորոշ առանձնահատկությունները պայմանավորող կարևոր գործոն, այն երբևէ նման համակողմանի վերլուծության չի ենթարկվել որպես գիտական դիսկուրսում կիրառվող երևույթ: Այլ կերպ՝ անգլերեն գիտական խոսքում որպես լեզվական տնտեսման միջոց հանդես եկող կառույցների լեզվական կարգավիճակի որոշարկումը և տեղեկատվության խոսքման հատկանիշով պայմանավորված կոնկրետ գործառույթների վերհանումը գործաբանական լեզվաբանության դիրքերից լեզվաճանաչողական մոտեցմամբ միանգամայն **արդիական** է և հնարավորություն է տալիս նորովի մեկնաբանելու այդ կառույցների հաղորդակցական-գործաբանական արժեքը: Այս հանգամանքով էլ պայմանավորված է լեզվական տնտեսման միջոցների մեր ուսումնասիրության **արդիականությունը**:

Ատենախոսության ուսումնասիրության **առարկան**, ինչպես արդեն նշվել է, անգլերեն գիտական խոսքում հանդես եկող լեզվական տնտեսման սկզբունքի իրացումներն են շարահյուսական (զեղչված կառույցներ, դերբայական դարձվածներ, տեղեկատվության սեղմման վերասույթային միջոցներ) և իմաստաբանական-ճանաչողական (փոխաբերություն) մակարդակներում:

Աշխատանքի **նպատակն** է իրականացնել անգլերեն գիտական խոսքում հանդես եկող լեզվական տնտեսման միջոցների գործառույթային համալիր վերլուծությունն ճանաչողական և գործաբանական լեզվաբանության դիրքերից, գնահատել դրանց դրսևորումների հաղորդակցական արժեքը անգլերեն գիտական դիսկուրսում և վերհանել դրանց նշանակությունը անգլալեզու գիտական տեքստերի ստեղծման և ընկալման հարցում: Այս նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. համադրելով լեզվական տնտեսման ուսումնասիրության և առնչվող մոտեցումները՝ ձևավորել լեզվական տնտեսման գործաբանական-հաղորդակցական արժեքի վերհանման համալիր մոտեցում, որը թույլ կտա դիտարկել խոսացումը՝ որպես խոսքում լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց, ինչպես նաև հստակեցնել խոսցման և ներհամատի ձևավորման փոխաբերության բնույթը,

2. որոշարկել տեղեկատվության խոսացումը պայմանավորող ներլեզվական և արտալեզվական գործոնները, լուսաբանել գիտական դիսկուրսի առանձնահատկությունները լեզվական տնտեսման տեսանկյունից,

3. մեկնաբանել գեղջված կառույցների կոնկրետ գործառնություններն անգլերեն գիտական խոսքում դրանց հաղորդակցական, գործաբանական և տեքստակազմիչ նշանակության տեսանկյունից,

4. վերլուծել դերբայական դարձված պարունակող կառույցները որպես լեզվական տնտեսման միջոց և վերհանել նրանց գործառնության առանձնահատկությունները անգլերեն գիտական խոսքում,

5. լուսաբանել տեղեկատվությունը սեղմելուն ուղղված՝ վերասույթային մակարդակի կրճատումների տեքստակազմիչ նշանակությունն անգլերեն գիտական դիսկուրսում,

6. դիտարկել փոխաբերությունը՝ որպես տեղեկատվության խոսցման լեզվաճանաչողական կաղապար՝ վերլուծելով դրա կոնկրետ գործառնություններն անգլերեն գիտական խոսքում,

7. պարզել ուսումնասիրության առարկա կառույցների՝ որպես լեզվական տնտեսման միջոցների գործածության հաճախականությունն անգլերեն գիտական դիսկուրսում՝ ըստ վերջինիս համապատասխան տարատեսակների և դրսևորումների:

Աշխատանքի **նորույթն** այն է, որ լեզվական տնտեսման վերլուծությունն առաջին անգամ իրականացվում է կառուցվածքային-իմաստաբանական, գործաբանական և գործառական յուրահատկությունների քննության լույսի ներքո, ընդ որում՝ խոսքում գործառական-հաղորդակցական առանձնահատկությունների

իրացման համար ելակետային համարելով լեզվական միավորի կառուցվածքը: **Նոր** է նաև լեզվական տնտեսման տեքստակազմիչ դերի արժևորումն ընդհանրապես և գիտական դիսկուրսում մասնավորապես, դրա իրացման միջոցների՝ որպես լեզվաճանաչողական կառույցների որակումը, ինչպես նաև լեզվական տնտեսման գործառույթի համատեքստում դրանց վերլուծությանը գործաբանական-ճանաչողական դիրքերից:

Տեսական առումով հետազոտության արդյունքում մշակված դրույթները, առաջադրված հարցադրումները հնարավորություն են ընձեռում նորովի գնահատելու խոսքաստեղծման ու խոսքընկալման ներքին մեխանիզմները, որոշարկելու լեզվական տնտեսման տեքստակազմիչ դերը անգլերեն գիտական խոսքում՝ դրանով իսկ նպաստելով խոսքի հաղորդակցական, ճանաչողական-գործաբանական տեսության հարստացմանը ու հետագազարգացմանը:

Ուսումնասիրության արդյունքները նաև **կիրառական արժեք** ունեն և կարող են ներդրվել գործաբանական լեզվաբանության, տեքստի լեզվաբանության, գործառական քերականության, ոճագիտության դասընթացներում, ինչպես նաև օգտակար լինել ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի դասավանդման շրջանակներում, անգլալեզու գիտական աշխատություններ գրելիս, գիտական թեմաներով անգլերեն լեզվով ելույթներ պատրաստելիս և հայերենից անգլերեն գիտական թարգմանություններ կատարելիս: Այլ կերպ՝ դրանք կնպաստեն նաև գիտական անգլերեն բանավոր և գրավոր խոսքի արդյունավետ կառուցման հմտությունների յուրացմանն ու զարգացմանը:

Աշխատանքի **մեթոդաբանական հիմքը** պայմանավորված է ատենախոսության մեջ առաջադրված նպատակներով և խնդիրներով: Ուսումնասիրությունը կատարվել է համատեքստային-նկարագրական, համեմատական, իմաստային և գործաբանական վերլուծության մեթոդների համադիր կիրառմամբ, ինչը թույլ է տալիս իրականացնել գիտական հաղորդակցության տարբեր իրադրություններում հանդես եկող լեզվական տնտեսման կառույցների գործառույթային համակողմանի հետազոտություն:

Յետագոտված **փաստական նյութը** գիտական դիսկուրսի գրավոր և բանավոր դրսևորումներն են միջազգային անգլալեզու գիտական հոդվածներում, ակադեմիական և գիտահանրամատչելի ուղղվածության աշխատություններում և բանավոր ելույթներում (շուրջ 820 նմուշ): Մասնավորապես՝ հետագոտվել են բուն գիտական կամ ակադեմիական և գիտահանրամատչելի անգլալեզու տեքստեր: Գիտական խոսքի նշված երկու տարատեսակների ընտրությունը պայմանավորված է դրանց գրավոր և բանավոր դրսևորումներում ուսումնասիրության առարկա կառույցների գործածության բարձր հաճախականությամբ: Իսկզբանե հետագոտությունը նպատակ չի հետապնդել դիտարկելու վերջիններս անգլերեն գիտական խոսքի ժանրային դասակարգման և դրանից բխող տարբերությունների համատեքստում: Իսկ ընդհանուր առմամբ գիտական խոսքի՝ որպես ուսումնասիրության նյութի ընտրությունը բացատրվում է այն հանգամանքով, որ գիտության լեզվի բնական պահանջն է փոխանցել առավելագույն տեղեկատվություն՝ օգտագործելով հնարավորինս քիչ լեզվական միջոցներ, ինչն էլ իր հերթին թելադրվում է գիտական հաղորդակցության միջարք պահանջներով, այդ թվում՝ մտքի կուռ և տրամաբանական կառուցվածքի ապահովում, հակիրճություն, տեղեկատվական հագեցվածություն, ժամանակի և տեղի տնտեսում և այլն:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթազույգներով, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության հիմնահարցերը, սահմանվում՝ նպատակն ու խնդիրները, հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունն ու նորույթը, կատարված հետազոտության տեսական և գործնական արժեքը, մեթոդաբանական հիմքը:

Աշխատանքի առաջին գլխում ամփոփ ներկայացվում են լեզվական տնտեսման քննության տեսական հիմքերը, որոշարկվում են ուսումնասիրության ելակետային դրույթներն ու

մոտեցումները: Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է Լեզվական տնտեսման շարահյուսական մակարդակում կիրառվող միջոցների գործառույթների վերհամանը վերջիններիս իմաստակառուցվածքային, գործաբանական և գործառական առանձնահատկությունների տեսանկյունից: Աշխատանքի երրորդ գլխում քննության է առնվում փոխաբերությունը՝ որպես իմաստաբանական-ճանաչողական մակարդակում տեղեկատվության խոսքման միջոց, սահմանվում են վերջինիս իրականացրած գործառույթներն անգլերեն գիտական խոսքում:

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները:

ԳԼՈՒԽ 1

ԼԵՉՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ ՄԸ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒ Մ. ՔՆՆՈՒ ԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Լեզվական տնտեսում և խոսցում

Դեռևս հին ժամանակներից մարդը նկատել է բառի՝ տեղեկատվությունը տրամաբանական-բովանդակային մակարդակում «խոսցնելու» կախարդական հատկությունը: Դա նախնառաջ կապված է բառի անվանողական գործառնությի հետ: Հին աշխարհի մարդկանց հիացնում էր լեզվական նշանի՝ իր մեջ ընդհանրացված լայն հասկացություններ ամփոփելու գարմանալի կարողությունը, ինչի շնորհիվ նրանք աստվածացնում էին բառը: Այսպես՝ «Ավետարան ըստ Հովհաննեսի» գրքում կարդում ենք. «Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստված էր»: Այսինքն՝ բառն է ընկած աշխարհի՝ որպես մեկ ամբողջության կայացման հիմքում, բառի մեջ տեղավորվում է մի ամբողջ աշխարհ: Այս իմաստով մենք գործ ունենք տեղեկատվության խոսցման հնագույն «մեկնաբանություններից» մեկի հետ:

Լեզվաբանությունը «խոսցում» տերմինը (լատիներեն *compressio* - սեղմում) փոխ է առել 20-րդ դարի 60-ական թվականների սկզբին ռադիոկապի տեսություններից, որտեղ այն նշանակում է «խոսքային ազդանշանը սեղմ դարձնելու գործընթաց՝ առանց դրանում պարունակվող տեղեկատվության ծավալի կորստի» (Харкевич 1957: 13): Այսպիսով՝ երբ սկսեցին հետաքրքրվել կապի ժամանակակից միջոցներում գերհաղորդիչների գործածման շնորհիվ տեղեկատվությունը սեղմելու եղանակներով, «խոսցում» տերմինը գրավեց նաև լեզվաբանների ու շարժությունը, որոնք նմանություն տեսան բազմուղի հեռահաղորդակցման և լեզվական հաղորդակցության միջև: Շուտով «խոսցում» տերմինը համատարած ճանաչում գտավ լեզվաբանների շրջանում, ինչն ունեցավ նաև իր բացասական հետևանքները: Մասնավորապես, ինչպես իրավամբ նշում են Գ.Վ. Գլուխովը և Ս.Ս. Կոմարովան՝ դիտարկելով լեզվական կառույցների խոսցումը խոսքում որպես ներակա իմաստների առաջացման կարևոր աղբյուր [1], «խոսցում» տերմինը բազմաթիվ նշանակությունների, որոնք երբեմն վերաբերում են տարբեր

գիտությունների (Глухов, Комарова 2004: 47-48), իսկ Ս.Ի. Լիտվինը նկատում է, որ «խտացում» տերմինը բավականին լայն և կամայական մեկնաբանվում, հաճախ բուն հասկացության սահմանումը փոխարինվում է խտացման մասնավոր միջոցների նկարագրությամբ (Литвин 2003: 19): Օ.Յ. Յաստրեբն իր հերթին նշում է, որ «տեղեկատվության խտացման երևույթը որպես այդպիսին ընդհանրապես սահմանում չունի լեզվաբանական գրականության մեջ» (Ястреб 2006: 4): Ավելին, խտացման վերաբերյալ տեսական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խտացումը կարող է վերաբերել տեքստին (text compression) (Kazík, Lánský 2011), խոսքին (speech compression) (De Marcken 1996, Chernov 2004), նախադասությանը (sentence compression) (Jing, McKeown 2000, Lin 2003), իմաստաբանության ոլորտին (semantic compression) (Ceglarek 2014), լեզվաճանաչողության ոլորտին (conceptual compression) (Fauconnier, Turner 2003) և այլն: Այսպիսով՝ լեզվաբանական գրականության մեջ մինչ օրս չկա «խտացում» տերմինի միանշանակ սահմանում:

Լեզվաբանների մեծ մասը խտացումը կապում է տնտեսման սկզբունքի հետ:

Բ.Պ. Դյունդիկն ասում է. «Լեզվում և խոսքում տնտեսման սկզբունքի ուսումնասիրության հետ կապված՝ առաջ քաշվեց լեզվական խտացման՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման միջոցի հասկացությունը» (Дюндик 1971: 6): Վերջինս, ուսումնասիրելով խտացումը ժամանակակից անգլերեն լեզվի շարահյուսական մակարդակում՝ պարզա ստորադաս նախադասությունների նյութի հիման վրա, սահմանում է խտացումը որպես «երկրորդական կարգի օրինաչափ ձևափոխություններ, որոնք նպաստում են լիակառույց բարդ կառույցները նվազ բարդ տեսքի բերելուն՝ հաղորդելով նույն ծավալի տեղեկատվություն, ինչ լիարժեք (полные), լիակառույց (развернутые) շարահյուսական կաղապարները» (Дюндик 1971: 7-8): Տվյալ ձևակերպման մեջ ուշադրություն է գրավում այն, որ խտացումն այստեղ սահմանվում է որպես բանավոր խոսքին հատուկ երևույթ («խոսողների կողմից կիրառվում են»), չնայած ակնհայտ է, որ խտացումը բավականին ընդարձակ և համապարփակ երևույթ է, որը նմանապես տարածվում է գրավոր խոսքի տարբեր

տեսակների վրա: Ն.Վ. Վասիլևան, Վ.Ա. Վինոգրադովը և Ա.Ս. Շախնարովիչն իրենց՝ լեզվաբանական տերմինների բառարանում տեքստի խտացումը սահմանում են որպես «տեքստի սեղմում նվազագույն ավելորդաբանությամբ (избыточность) սահմաններում, որը բավարար է տեքստի ընկալման համար...»՝ ավելացնելով, որ «... տեքստի խտացումը ջանքերի տնտեսման սկզբունքի իրացումն է» (Васильева, Виноградов, Шахнарович 2003: 62): Մի խումբ լեզվաբաններ էլ, խտացումը դիտարկելով Ջ. Չիպֆի նվազագույն ջանքերի սկզբունքի (principle of least effort) համատեքստում (Zipf 1949), նկատում են. «Լեզվում կիրառվող ասույթներն ուղղված են նվազեցնելու խոսողի ջանքերն այնքանով, որքանով դա չի անդրադառնում ունկնդրի համար խոսքի հստակության վրա: Այս երևույթը կարելի է բացատրել *խտացման* համատեքստում» (Kirby, Tamariz, Cornish, Smith 2015: 88): Ն.Ա. Գլուխովան, խտացումը սահմանելով որպես «երկրորդական գործընթաց և արդյունք, որով լիակառույց լեզվական կառավարող փոխարինվում է սեղմ կառույցով՝ պահպանելով փոխանցվող տեղեկատվության ծավալը» (Глухова 1987: 28), այն համարում է տնտեսման տեսակ: խտացման և տնտեսման նույնացման միտում նկատվում է նաև Ե.Վ. Գրուդևայի մոտ, ով, հակադրելով խտացումը ավելցուկային տարրերի կիրառմանը, նշում է, որ «եթե խտացումը խոսողի ջանքերի տնտեսումն է հաղորդման պլանավորման որոշակի փուլում, ապա ավելցուկային տարրերի կիրառումը (ավելորդաբանությունը) յուրատեսակ «շռայլություն» է՝ ի շահ հաղորդման հասցեատիրոջ» (Грудьева 2008: 3): Սակայն հարկ է նշել, որ անընդունելի է խտացման և տնտեսման նույնացումը: Բանն այն է, որ խտացումը մեծապես պայմանավորված է խոսողի/գրողի՝ լեզվական միջոցները հնարավորինս արդյունավետ օգտագործելու և դրանով իսկ հաղորդակցական մտադրությունն ավելի հեշտ ու արագ իրականացնելու ձգտմամբ: Սակայն լեզվական միջոցների արդյունավետ օգտագործումը ոչ միայն ենթադրում է այդ միջոցների պարզ խնայողություն, հետևաբար և խոսողի/գրողի ջանքերի տնտեսում, այլ և մի շարք այլ խնդիրների իրականացում, ինչպես օրինակ՝ տեքստին արտահայտչականության և հուզականության հաղորդում կամ ինչ-ինչ արտալեզվական

գործունեությունը պայմանավորված՝ փոխանցվող տեղեկատվության որոշակի հատվածի ներկայացում ներակա կերպով: Յետևաբար լեզվական տնտեսումը սահմանելով որպես նվազագույն լեզվական միջոցներով առավելագույն հաղորդակցական արդյունքի հասնելու ձգտում՝ մենք այն կարծիքին ենք, որ խոսցումը, հանդես գալով որպես խոսքում լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց, տարբեր է տնտեսումից: Այս համոզմունքը հիմնավորվում է այն փաստով, որ տեղեկատվության խոսցման գործաբանական-հաղորդակցական նպատակները հաշվի առնելու դեպքում պարզ է դառնում, որ անկախ հաղորդակցության ոճային և ժանրային առանձնահատկություններից՝ **հաղորդման ամբողջականությունն ու արդյունավետությունը որոշվում է ոչ թե օգտագործվող խոսքային միավորների ծավալով, այլ վերջիններիս իրադրային և գործառնական նպատակահարմարությամբ:**

Վերադառնալով խոսցումը սահմանելու խնդրին՝ հիշեցնենք, որ գոյություն ունեն բազմաթիվ տեսակետեր վերջինիս բնույթի վերաբերյալ: Այսպես՝ խոսցումը հաճախ դիտարկվում է որպես գրավոր և բանավոր թարգմանության ժամանակ գործածվող հնարք, որի կիրառումը հնարավոր է այն ավելցուկային լեզվական տարրերի շնորհիվ, որոնցով ներկայացված է դիսկուրսի թեմատիկ բաղադրիչը, և որը հնարավորինս խնայողաբար ապահովում է տեքստի արդյունավետ ձևակերպումը՝ առանց արավաղելու սկզբնաղբյուր տեքստի բովանդակության անփոփոխ բաղադրիչը (Chernov 2004, Полуян 2011, Беляева, Турин 2007, Сухенко 1973):

Խոսցումը դիտարկվում է շարահյուսական մակարդակում (Baicchi 2004, Nasta 2015, Uriagereka 2000)՝ երբեմն սահմանվելով որպես գեղարվեստական գրականությանը բնորոշ շարահյուսական ոճական հնարք (Литвин 2003): Խոսցումը դիտարկվում է ձևաբանական մակարդակում՝ որպես մեկ ձևույթում մեկից ավելի իմաստների համատեղում (van Gelderen 2008, Степанова 1968): Այն դիտարկվում է բառակազմության մակարդակում, որտեղ դրսևորվում է հապավումների միջոցով (Zhou 2012, Комарова 2005), ինչպես նաև հնչյունաբանական մակարդակում՝ հնչյունափոխության համատեքստում (Kul 2007, Vicentini 2003, Zhou 2012):

Գ.Վ. Գլուխովը, խոսքումը սահմանելով որպես կառուցվածքային-իմաստային սեղմում, կարևոր լրացում է կատարում՝ նշելով, որ խոսքված բառակազմական միավորները պետք է դիտարկել գործառական հոմանշության դիրքերից (Глухов 1992):

Մի շարք ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ ժամանակակից անգլերենում խոսքումն ազդում է լեզվի ողջ քերականական կառուցվածքի վրա՝ պարզ նախադասությունից մինչև վերասույթային մակարդակի շարահյուսական միավոր (Halford 1996, Chomsky 1995, Нелюбин 1968):

Մ.Վ. Նիկիտինը սահմանում է խոսքումը որպես «լեզվի շարահյուսական կառույցների՝ բովանդակային առումով համարժեք խոսքային ձևափոխությունների դաս, որոնց իրականացումը ենթադրում է այդ կառույցների որոշ տարրերի բացթողում և որոշ տարրերի պահպանում» (Никитин 1976: 67):

Անգլալեզու գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *compression* տերմինի փոխարեն երբեմն կիրառում են *condensation* տերմինը (մենք որևէ էական տարբերություն չենք տեսնում այս երկու տերմինների միջև և երկուսն էլ հայերեն թարգմանում ենք «խոսքում»)՝ վերջինս սահմանելով որպես սույնի կառուցվածքային վերադասավորում (Biber, Johansson, Leech, Conrad, Finegan 2000): Վ. Մառեզիուսը, կիրառելով *condensation* տերմինը, խոսքումը սահմանում է որպես ստորադաս նախադասության փոխարինում անվանական արտահայտության ամբ (nominal phrase) (Mathesius 1975) [2]:

Համաձայն Կ.Ա. Բոբրովայի սահմանման՝ խոսքումը «տեքստի լեզվական միավորների իմաստային և կառուցվածքային վերադասավորման գործընթացն է, որի արդյունքում լեզվական միավորները երկրորդային անվանման շնորհիվ ավելի հարուստ բովանդակություն են հաղորդում հաղորդակցությանը, քան նրանց հատուկ է հարացուցային մակարդակում» (Боброва 1986: 30):

Ն.Դ. Պրիմերովան խոսքումը սահմանում է որպես «լեզվական միավորի կառուցվածքի կրճատման գործընթաց, որը տեղի է ունենում առանց դրանում պարունակվող տեղեկատվության կորստի, և որը կրում է պարբերական բնույթ, ոճական առումով

նշույթավորված չէ, իրականանում է ինչպես ավելցուկային տարրերը գիտակցելու, այնպես էլ վերջիններս պակաս ընդարձակ միավորներով փոխարինելու հաշվին» (Примерова 1988: 4):

Վերջին շրջանում հատկապես անգլալեզու գրականության մեջ բավականին շատ են հետազոտությունները, որոնցում տեղեկատվության խտացումը դիտարկվում է համակարգչային ծրագրերի համար լեզվական տեքստի սեղմ տարբերակներ մշակելու փորձերի համատեքստում (Clarke, Lapata 2006a, 2006b; Corston-Oliver 2001; McDonald 2006; Turner, Charniak 2005; Vandeghinste, Pan 2004): Այս համատեքստում խտացումը բնութագրվում է որպես տրված նախադասության նից որոշակի բառեր հանելու միջոցով այդ նախադասության այնպիսի ամփոփ տարբերակի մշակում, որը բերականորեն ճիշտ է, և որում պահպանված է տեղեկատվության կարևոր մասը (Clarke, Lapata 2007: 1):

Տարբեր լեզվաբանների կողմից առաջարկված վերոնշյալ սահմանումներն ունեն մեկ ակնհայտ ընդհանրություն, այն է՝ խտացումը սերտորեն առնչվում է ձևի և բովանդակության գոյաբանական հակադրամիասնությանը [3]: Մասնավորապես՝ տեղի է ունենում լեզվական միավորի ծավալի կրճատում կամ կառուցվածքի սեղմում, որը միաժամանակ ուղեկցվում է դրա իմաստային բեռնվածության աճով: Այլ կերպ՝ **խտացումը դրսևորվում է նշանակող տարրերի կրճատմամբ և նշանակյալի, տլյալ դեպքում՝ ասույթի ձևականորեն չարտահայտված հատվածի ընդհանուր բովանդակության պահպանմամբ**: Յետևաբար խտացումը պետք է դիտարկել երկու մակարդակներում՝ ձևի և բովանդակության, ընդ որում՝ մի շարք ներակա իմաստային բաղադրիչների վերականգնումը կատարվում է համատեքստի, խոսքային իրադրության, հաղորդման հասցեագրողի և հասցեատիրոջ համատեղ գիտելիքի և տեքստային կանխենթադրույթների հիման վրա: Խոսքը խտացման տրամաբանական-բովանդակային հարթության մասին է:

Ամփոփելով խտացման տարբեր սահմանումները՝ ակնհայտ է դառնում նաև այն, որ տլյալ խնդրի ուսումնասիրության մեջ զբաղվող լեզվաբանների մեծ մասն այն կարծիքին է, որ «խտացման արդյունքները դրսևորվում են լեզվի բոլոր մակարդակներում՝

սկսած հնչյունաբանությունից, վերջացրած բառի իմաստաբանությամբ, ընդ որում՝ յուրաքանչյուր մակարդակում դրանք յուրօրինակ դրսևորում են գտնում» (Мурзин 1974: 77): Սակայն ինչպես իրավամբ նշում է Ս.Ս. Կոմարովան (Комарова 2005: 23), ընդունելով խոսցման առկայությունը գրեթե բոլոր լեզվական մակարդակներում՝ տարբեր լեզվաբաններ տարբեր թվով մակարդակներ են առանձնացնում և խոսցման տարբեր օրինակներ են բերում:

Այս ուղղությամբ մեծ աշխատանք են կատարել Ա.Պ. Վասիլևսկին և Յ.Ս. Էդմիևան (Василевский, Эдмина 1967: 37-38), որոնք առանձնացնում են խոսցման դրսևորման հետևյալ վեց մակարդակները. 1. հնչույթաբանական կամ գրույթի մակարդակ (հնչույթի կամ գրույթի բացթողում) [4], 2. ձևաբանական (հապավումների առաջացում), 3. շարահյուսական (նվազագույնս լիակառույց կադապարների գործածություն), 4. բառային (տեքստում բառերի բացթողում), 5. շարահյուսական-բառային (սպասարկող և օժանդակ բառերի բացթողում) և 6. իմաստաբանական (տեղեկատվության պակաս կարևոր մասի բացթողում) [5]:

Ընդհանուր առմամբ ընդունելով Ա.Պ. Վասիլևսկու և Յ.Ս. Էդմիևայի դասակարգումը՝ հարկ ենք համարում շարահյուսական մակարդակի սահմաններում առանձնացնել նաև տեքստային կամ վերասույթային մակարդակը և տեքստի շրջանակում կանխենթադրույթների հիման վրա տեղեկատվության որոշակի հատվածների ներակայումը կամ տեղեկատվությունը սեղմելու նպատակով որոշակի տեքստային հատվածների կրճատումը դիտարկել որպես խոսքի խոսցման դրսևորում հենց այս մակարդակում: Բանն այն է, որ որքան էլ տեղեկատվության բացթողումը պայմանավորված լինի հաղորդման ընդհանուր իմաստային կառուցվածքով, բացթողնված կամ խոսցման արդյունքում որպես ներակա ընկալվող տեղեկատվության վերականգնումը հնարավոր է միայն տեքստի՝ որպես կուռ ամբողջության հարթության վրա: Ըստ էության, մեր կողմից առաջարկվող տեքստային կամ վերասույթային մակարդակն ինչ-որ առումով մոտ է վերոնշյալ դասակարգման մեջ նշված իմաստաբանական մակարդակին: Սակայն մենք ավելորդ ենք

համարում, որպես այդպիսին, իմաստաբանական մակարդակի առանձնացումը, քանի որ, ինչպես ցույց է տալիս հետագա վերլուծությունը, իմաստաբանական կամ տրամաբանական բնույթի հարաբերություններ նկատվում են նաև շարահյուսական մակարդակում (օրինակ՝ դերբայական դարձվածակազմությունը): Փոխաբերությունը առաջարկում ենք դիտարկել իմաստաբանական-ճանաչողական մակարդակը, որտեղ խոսցման դրսևորման լավագույն օրինակը փոխաբերությունն է, որը իմաստի խոսցման տեսանկյունից սկսել է դիտարկվել հատկապես վերջին տարիներին՝ պայմանավորված ճանաչողական լեզվաբանության նկատմամբ աճող հետաքրքրությունով: Այսպես՝ փոխաբերությունն ավանդաբար ընկալվել է որպես խոսքին հուզականությունն հաղորդող ոճական հնարք: Սակայն Ջ. Լակոֆն ու Մ. Ջոնսոնն իրենց «*Metaphors We Live By*» աշխատությամբ կոտրում են այս կարծրատիպը՝ ապացուցելով, որ մենք «ապրում ենք» փոխաբերություններով, այսինքն՝ փոխաբերությունը կազմում է մեր առօրյա լեզվի անբաժանելի բնական մասը: Ավելին՝ այն վերաբերում է ոչ միայն բառերի, այլև մտածողության ոլորտին (Lakoff, Johnson 1980): Այլ կերպ փոխաբերությունը իրականության խոսցված պատկերն է: Որպես տվյալ մտքի ապացույց՝ կարող ենք մեջբերել վերջիններիս առաջարկած փոխաբերության օրինակը՝ Time is money, որն իր մեջ խոսցնում է մեր առօրյային բնորոշ մի շարք երևույթներ, այն է՝ հեռախոսային խոսակցության տևողության դիմաց կատարվող վճարումներ, աշխատանքի վարձատրությունն՝ ըստ ժամաբանակի, որոշակի վարձատրվող աշխատանքի կամ պարտականությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակ և այլն: Է.Վ. Գուբերնատորովայի մեկնաբանմամբ, ով ուսումնասիրում է փոխաբերության խոսցնող գործառույթը թարգմանության համատեքստում, փոխաբերությունը ներկայացվում է որպես իմաստի խոսցման մտավոր-ճանաչողական մեխանիզմ: Այլ կերպ փոխաբերությունն իր մեջ խոսցնում է իրականության ոչ կարծրատիպային ճանաչողությունը և լեզվի հուզական էներգիան: Փոխաբերությամբ ներկայացված ճանաչողական կաղապարը հանդես է գալիս որպես նյարդաֆիզիոլոգիական համակարգերին բնորոշ

տնտեսման լեզվամտածողական համահարաբերական (Губернаторова 2003: 11):

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք առանձնացնել խոսքման հետևյալ բնորոշ առանձնահատկությունները.

ա) խոսքումը լեզվական տնտեսման սկզբունքի իրացումն է, սակայն նույնական չէ վերջինիս հետ,

բ) խոսքման հիմքում ընկած է ձևի և բովանդակության գոյաբանական հակադրամիասնությունը,

գ) խոսքումը դրսևորվում է լեզվի բոլոր մակարդակներում,

դ) խոսքումն ուղղված է հաղորդակցության առավելագույն արդյունավետության ապահովմանը՝ ըստ հաղորդակցության իրադրային, գործառական և գործաբանական պահանջների:

Չե տևաբար խոսքումը սահմանելու համար ելակետային համարելով վերոնշյալ չորս առանձնահատկությունները՝ առաջարկում ենք հետևյալ սահմանումը: **խոսքումը լեզվական տնտեսման սկզբունքով պայմանավորված օրինաչափ գործընթաց է, որը ներառում է լեզվական համակարգի բոլոր մակարդակները և դրսևորվում է լեզվական միավորների կրճատմամբ և ընդհանուր բովանդակության պահպանմամբ: Այն ուղղված է առավելագույն արդյունավետ հաղորդակցություն և ապահովելուն՝ ըստ հաղորդակցության գործառական և գործաբանական պահանջների:**

Այսպիսով՝ լեզվական տնտեսման միտումն արտացոլում է ոչ միայն ներլեզվական, այլև արտալեզվական միջարք օբյեկտիվ հակասություններ, որոնք լեզվի գործառության տարբեր ոլորտներում տարբեր դրսևորում են ստանում: Չիմնական հակասություններից է ներլեզվական և սոցիալական գործոնների փոխազդեցությունը և հակազդեցությունը: Մասնավորապես՝ տեղեկատվության անդադար հոսքը ծառայում է որպես տեղեկատվության հաղորդման գործընթացում տնտեսման սկզբունքի ազդեցության բնական հիմք: Տնտեսման ձգտումը համապատասխանաբար ծնում է դրա իրականացման եղանակներ և միջոցներ: Բայց տնտեսման սկզբունքը լեզվում ոչ թե ինքնանպատակ է, այլ ծառայում է տեղեկատվության հաղորդման գործընթացն արագացնելուն ու հեշտացնելուն՝ մի կողմից, և

լեզվական արտահայտության նվազագույն միջոցներով առավելագույն հաղորդակցական արդյունք ապահովելուն՝ մյուս կողմից: Որպես տնտեսման սկզբունքի իրացման արդյունք հանդես է գալիս տեքստի խոսացումը և հաղորդակցական հագեցվածությունը [6]:

Խոսելով խոսցման՝ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոցի մասին՝ չենք կարող չանդրադառնալ խոսացումներակայում (ներիմաստի ձևավորում) փոխարարությունը [7]: Ըստ ներկայացման ձևի՝ տեքստում ամփոփված տեղեկատվությունը լինում է երկու տիպի՝ արտակա և ներակա: Ընդ որում՝ տեքստի տեղեկատվական կառուցվածքում արտակա և ներակա տեղեկատվության համադրությունը այն դարձնում է ավելի սեղմ և միևնույն ժամանակ՝ հագեցած: Խոսելով տեղեկատվության ներկայացման այս երկու հիմնական ձևերի մասին՝ հարկ է ուշադրություն հրավիրել այն կարևոր փաստի վրա, որ «արտակա» և «ներակա» տերմինները կիրառելի չեն ո՛չ լեզվական արտահայտությունից դուրս, առանձին վերցրած մտքերի, ո՛չ էլ զուտ լեզվական միավորների նկատմամբ, որոնցով դրանք արտահայտվում են: Չուտ մտածողության առումով՝ լեզվական արտահայտությունից դուրս, միտքը կա՛մ գոյություն ունի, կա՛մ ոչ: Մտքերն ինքնին արտակա կամ ներակա չեն կարող լինել: Արտակա և ներակա լինում են դրանց արտահայտման ձևերը: Յետևաբար արտակա-ներակա հակադրամիասնությունը իմաստալից և տեղին է դառնում միայն մտքի գոյության և դրա լեզվական արտահայտության մակարդակների միասնության համատեքստում: Պարզապես, ի տարբերություն արտակա իմաստի, ներակա իմաստը գտնվում է ոչ թե տեքստի արտաքին, մակերեսային, այլ ներքին, խորքային մակարդակում՝ այսպիսով հանդես գալով որպես լեզվական միջոցներով մտքի արտահայտման միջնորդավորված ձև: Ընդ որում՝ այդ միջնորդավորումը տեղի է ունենում արտակա ձևով փոխանցված տեղեկատվության, համատեքստի, ինչպես նաև մի շարք այլ գործոնների հաշվին: Յետևաբար խոսելով տեղեկատվության հաղորդման ներակա ձևի մասին՝ պետք է նկատի ունենալ, որ «ներակա» տերմինը ենթադրում է ոչ լիարժեք խոսքային արտահայտություն կամ խոսքային արտահայտության իսպառ

բացակայ ու թյուր ուն: Ընդ որում՝ մտքի ներակայումը, ինչպես նաև ներակա կերպով ներկայացված տեղեկատվության վերծանումը կատարվում է արտակա տեղեկատվության հիման վրա: Այլ կերպ ասած՝ ներական դիտարկվում է որպես արտակայից ածանցված, արտակայից կախված, արտակային ուղեկցող ոչ ինքնուրույն երևույթ: Եվ ինչպես իրավամբ նշում է Վ.Խ. Բադասարյանը (Багдасарян 1983: 6-7), քանի որ խոսել է լեզվում մտքի արտահայտության արտակա ձևի մասին նույնն է, թե խոսել «պատերազմի ժամանակ բանակի դերի» կամ «մարդկանց տեղաշարժման հետիոտնային եղանակի» մասին, արտակայի հարցը գիտական հետաքրքրությունն է չի ներկայացնում: Արտակա-ներակա փոխհարաբերության մեջ առավել կարևոր և գիտականորեն հիմնավորված է տեղեկատվությունը ներակա ձևով հաղորդելու առանձնահատկությունների բացահայտումը, որը մտնում է մեր ուսումնասիրության խնդիրների շրջանակի մեջ:

Ընդհանուր առմամբ տեքստի մակարդակում դրսևորվող ներիմաստը կարելի է սահմանել որպես դրա կառուցվածքում պարունակվող տեղեկատվության այն հատվածը, որը կա՛մ ուղղակիորեն ներկայացված է լեզվական միջոցներով, կա՛մ ունի ոչ լիարժեք խոսքային արտահայտության ձև, բայց ենթադրվում է և կարող է վերականգնվել խոսքի հասցեատիրոջ կողմից արտակա բովանդակության, համատեքստի և այլ գործոնների համադրմամբ [8]:

Դատելով ներիմաստի վերոնշյալ ընդհանուր սահմանումից՝ դժվար է նկատել այն անմիջական կապը, որ գոյություն ունի տեքստի խոսքման և ներակայման միջև: Մասնավորապես՝ Գ.Վ. Գլուխովը և Ս.Ս. Կոմարովան լեզվական կառույցների խոսքումը դիտարկում են որպես ներակա իմաստների առաջացման գլխավոր աղբյուրներից մեկը (Глухов, Комарова 2004: 47): Մյուս կողմից՝ կարելի է պնդել նաև, որ տեղեկատվության որոշակի հատվածը ներակա կերպով հաղորդելու նպատակը, իսկ երբեմն՝ նաև չգիտակցված արդյունքը տեքստի խոսքումն է: Սակայն ինչպիսին էլ որ լինեն ձևակերպումները, խոսքման և ներակայման էությունն ու փոխհարաբերությունը դրանից չեն փոխվում, ընդ որում՝ այս երկու լեզվական երևույթները միավորվում են իրենց գործառական առանձնահատկությունների ուսումնասիրության լույսի ներքո,

որտեղ կենտրոնական նշանակություն ունի այն հարցը, թե ինչ նպատակի են դրանք ծառայում և ինչ միջոցներով են իրականանում:

Ինչպես գիտենք, հաղորդակցության ժամանակ գործում է Փ. Գրայսի կողմից առաջ քաշված քանակի կարգախոսը, համաձայն որի՝ ասույթը պիտի պարունակի ո՛չ ավելի քիչ, ո՛չ էլ ավելի շատ տեղեկատվություն, քան պահանջվում է (Grice 1975): Ասվածից հետևում է, որ արտակա կերպով պետք է ներկայացվի միայն տեղեկատվության այն մասը, որն անհրաժեշտ է բավարարել հաղորդակցության որոշակի պայմաններում հաղորդակցական նպատակի իրագործման համար: Չետևաբար տեքստատեղծման գործընթացում խոսողը մշտապես կանգնում է ընտրության առաջ, այն է՝ տեքստի բովանդակության որ հատվածին տալ արտակա լեզվական ձևակերպում: Այստեղ առաջ է գալիս տեղեկատվությունը ներկայացնող հաղորդելու խնդիրը, որը ենթադրում է այնպիսի լեզվական միջոցների ընտրություն, որոնք արտակա կերպով տեղեկատվության որոշակի հատվածն այնպես կարտահայտեն, որ միևնույն ժամանակ ձևականորեն կամ լեզվական միավորներով ուղղակիորեն ներկայացված այդ հատվածից հնարավոր կլինի վերականգնել տեղեկատվության մյուս՝ թաքնված հատվածը: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի տեքստի համարժեք ընկալումը հասցեատիրոջ կողմից, հետևաբար և հաղորդակցական ակտի հաջող իրականացումը: Այսպիսով՝ տրամաբանորեն հանգում ենք բովանդակության արտահայտման համար առավել սեղմ, տնտեսող և արդյունավետ ձևի որոնման խնդրին [9], ասել է թե՛ լեզվական կառույցների խոսցմանը, որը հանդես է գալիս որպես ներիմաստի ձևավորման միջոց: Եվ քանի որ խոսցումն իրացվում է կոնկրետ լեզվական միավորների միջոցով, իսկ այդ լեզվական միավորները պատկանում են լեզվի տարբեր մակարդակներին, հետևաբար ներիմաստի դրսևորման ձևերն էլ կլինեն տարբեր՝ պայմանավորված խոսցման դրսևորման տարբեր մակարդակներով և իրացման միջոցներով: Ընդ որում՝ հարկ է նշել, որ ինչպես տեղեկատվության խոսցումը, այնպես էլ «ներակայումը բավականին լայն ընդգրկում ունի, այն դրսևորվում է բազմազան եղանակներով, խոսքի տարբեր մակարդակներում, ինչպես նաև լեզվի գործառնության գրեթե բոլոր ոլորտներում» (Багдасарян 1983: 23):

Մյուս կողմից, ինչպես նկատում է Վ.Խ. Բաղդասարյանը, կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ որոշ դեպքերում խոսքի գլխավոր կամ նույնիսկ միակ նպատակը ոչ թե արտակա տեղեկատվության, այլ ներիմաստի հաղորդումն է, այսինքն՝ ուղիղ ձևով ասվածի տակ թաքնված, արտակա ձևով ասվածից ենթադրվող մտքի փոխանցումն է հասցեատիրոջը [10]: Բացի այդ, հաճախ մենք դիմում ենք տեղեկատվության հաղորդման ներակա ձևին՝ ոչ միայն լեզվական տևտեսման սկզբունքով թելադրված, այլև ներիմաստների իրացումն օգտագործելով որպես արտահայտչականության միջոց (ինչպես ասում են, լեզուն ծառայում է ոչ միայն մտքերի արտահայտմանը, այլև դրանց քողարկմանը) (Horn 1996, Bach 1994, Bertucelli 1995):

Ներակայում-խոսացում կապի էությունն առավել պարզորոշ երևում է, երբ անդրադառնում ենք հասցեատիրոջ դիրքերից տեքստի վերլուծության ժամանակ ներակա բովանդակության ընկալման և մեկնաբանման մեխանիզմի առանձնահատկություններին: Այս կապակցությամբ նախառաջ հարկ է ընդգծել այն կարևոր փաստը, որ հասցեատիրոջ դիրքերից տեքստի վերլուծությունը տեղի է ունենում ձևից դեպի բովանդակություն ուղղությամբ: Այսինքն՝ հաղորդակցության գործընթացում որպես նպատակ ունենալով հասցեագրողի կողմից փոխանցվող տեղեկատվության համարժեք ընկալումը՝ հասցեատերն առաջին հերթին վերլուծում է այն լեզվական միավորները, որոնցով հաղորդվում է համապատասխան տեղեկատվությունը, և տեքստի ձևական կառուցվածքում հայտնաբերելով տեքստի խոսցման միջոցներ՝ կատարում է խոսցման ենթարկված տարրերի վերականգնում: Դրանց վերականգնմանը զուգահեռ՝ հասցեատերը նաև ստանում է իրեն անհրաժեշտ, այդ թվում՝ ներակա կերպով հաղորդված տեղեկատվությունը: Այլ խոսքով՝ տեքստատեղծման գործընթացում, այսինքն՝ տեքստը հասցեագրողի դիրքերից դիտարկելիս, երբ բովանդակությունից ենք անցնում դեպի ձևը, առաջնային է տեղեկատվության ներակայման խնդիրը, մինչդեռ հասցեատիրոջ դիրքերից դիտարկելիս, այսինքն՝ տեքստի ընկալման ժամանակ, երբ գնում ենք հակառակ ուղղությամբ՝ ձևից դեպի բովանդակություն, առանցքային է դառնում խոսցման խնդիրը, քանի որ ներակա կերպով

հաղորդված տեղեկատվության վերծանումը տեղի է ունենում խոսքման ենթարկված տարրերի ճանաչման և վերականգնման շնորհիվ: Այսպիսով՝ խոսքում մի կողմից հանդես է գալիս որպես ներհմաստի իրացման, մյուս կողմից՝ ներակա տեղեկատվության վերականգնման միջոց [11]:

Այնուամենայնիվ՝ հարկ է ընդգծել այն կարևոր փաստը, որ հաղորդակցության գործընթացում ներակա կերպով հաղորդված տեղեկատվության արտածումը, ինչպես նաև հենց արտակա կերպով ներկայացված տեղեկատվության համարժեք ընկալումը գրեթե անհնար է միայն զուտ լեզվական միջոցների ճանաչմամբ և ընկալմամբ: Բանն այն է, որ ցանկացած հաղորդակցության դեպքում անպայմանորեն գործում են ինչպես հասցեատիրոջ հենքային գիտելիքների պաշարը, այնպես էլ շատ հաճախ հասցեագրողի իրազեկվածությունը հասցեատիրոջ գիտելիքների առկայության մասին: Ինչպես նկատում է Վ.Խ. Բաղդասարյանը, «...հասցեատերը ներակա իմաստը դուրս է բերում ոչ թե հենց բուն արտակայից, այլ արտակա իմաստի և իր սեփական գիտելիքների համադրությունից...» (Багдасарян 1983: 122): Յետևաբար, հետևելով Վ.Խ. Բաղդասարյանի օրինակին, ներակայի վերծանման բանաձևը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ՝ (Ա — Գ) → Ն, որտեղ Ա-ն արտակա կերպով ներկայացված բովանդակությունն է իր լեզվական, խոսքային ձևակերպումով, Գ-ն՝ հասցեատիրոջ մոտ առկա լրացուցիչ արտալեզվական գիտելիքները, իսկ Ն-ն արտակա իմաստի և լրացուցիչ գիտելիքների համադրությունից վերականգնվող ու վերծանվող ներակա տեղեկատվությունը: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ **խոսքում հանդես է գալիս որպես ներհմաստի իրացման, ինչպես նաև ներակա կերպով հաղորդված տեղեկատվության վերականգնման միջոց**, և այս երկու գործընթացներում էլ առանցքային դեր են կատարում համատեքստը և այն արտալեզվական գործոնները, որոնց առկայությամբ տեղի է ունենում հաղորդակցությունը:

1.2. Խոսքման հոգելեզվաբանական, գործաբանական և հանրամշակութային հիմքերը

Խոսքում խոսքման միջոցով դրսևորվող լեզվական տնտեսում-ավելորդաբանությունն հակադրամիասնությունը բնորոշում և

կարգավորում է մարդկային հաղորդակցության ողջ գործընթացը: Չարցն այն է, թե ինչպես է որոշվում տնտեսում-ավելորդաբանությունն հարաբերակցությունը տվյալ խոսքային իրադրու-թյունում, խոսքաստեղծման որ փուլում է տեղի ունենում խոսքի խտացումը, ինչպես են խտացված կառույցները վերծանվում խոսքի հասցեատիրոջ կողմից և այլն: Այլ կերպ՝ գործ ունենք խտացման՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման գործընթացի վրա ազդող լեզվական և արտալեզվական գործոնների քննության հետ: Այս և մի շարք այլ հարցերի պատասխանները, ինչպես և բազմաթիվ լեզվական օրինաչափությունների բացատրությունը կարելի է գտնել ժամանակակից լեզվաբանության և այլ գիտությունների շփման ոլորտում, մասնավորապես՝ այնպիսի միջգիտակարգային ուղղություններում, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը, գործաբանական լեզվաբանությունը և այլն: Յետևաբար սույն ենթագլխում քննության կառնենք խտացման հոգելեզվաբանական, գործաբանական և հանրամշակութային հիմքերը:

խտացման հոգելեզվաբանական հիմքերը

Չաղորդակցության մասնակիցների հոգեբանական վարքի հետ կապված տեսական հարցերը մեծ նշանակություն ունեն տվյալ ուսումնասիրության համար: Խոսքաստեղծման և խոսքընկալման գործընթացի ուսումնասիրությանն են նվիրված հոգելեզվաբանության տարբեր դարոցների ներկայացուցիչների աշխատություններ, որոնք ներկայացնում են հոգելեզվաբանության հիմնական խնդիրների քննության տարբեր միտումներ և մոտեցումներ: Այսպես՝ Չ. Օսգուդը գտնում էր, որ խոսքաստեղծումը և խոսքընկալումը հիմնված են բնական ճանաչողական կառույցների վրա, որոնք առաջանում են լեզվական և ոչ լեզվական տեղեկության փոխներգործության արդյունքում (Osgood 1957): Նա առանձնացնում է խոսքաստեղծման չորս հիմնական փուլ .

1. մոտիվացիոն մակարդակ, երբ խոսողն ընդհանուր որոշումներ է կայացնում, օրինակ՝ խոսել կամ չխոսել, կատարել հարցում, կիրառել հաստատում կամ ժխտում և այլն,

2. իմաստաբանական մակարդակ, որտեղ խոսողն առանձնացնում է բառերի մոտավոր հաջորդականությունները նախադասության մեջ,

3. հաջորդականությունների մակարդակ, որում տեղի է ունենում հնչյունային հաջորդականությունների ճանաչում, բառերի հաջորդական դասավորության որոշում և քերականական հաջորդականությունների մեխանիզմի գործակցում: Այլ կերպ ասած՝ տվյալ մակարդակը համապատասխանում է ասույթի ներքին ծրագրավորման և կազմակերպման փուլին,

4. ինտեգրացման մակարդակ, որում գործում են կոդավորման շարժական մեխանիզմները, և կատարվում է մշակված արտահայտության հնչյունային վերջնական ձևակերպումը: Այս մակարդակը համապատասխանում է արտաքին խոսքի փուլին:

Չ. Օսգուդի՝ խոսքաստեղծման փուլերի տեսությունից կարելի է եզրակացնել, որ լեզվական միջոցների ընտրությունը և կազմակերպումը նախորդում են հնչող խոսքին: Ժամանակակից հոգելեզվաբանության մեջ ընդունված է նաև Վ. Լևելտի կողմից 1989թ. առաջարկված խոսքաստեղծման կադապարը: Համաձայն Վ. Լևելտի տեսության՝ խոսքաստեղծման գործընթացը ներառում է մտադրությունը, արտահայտվող տեղեկության ընտրությունը և կադապարումը, ինչպես նաև նախապես ասվածի հետդրակապակցումը: Ընդ որում, խոսքաստեղծման առումով կարևոր է իրադրային տեղեկությունը, որը ենթադրում է գիտելիք խոսքի համատեքստի, զրուցակցի, միջավայրի և խոսքի ընթացքի մասին: Վ. Լևելտը տարբերակում է խոսքաստեղծման գործընթացի հասկացության թաղադրիչը, վերջինիս հաջորդող ձևակերպման փուլը, որում ձևավորվում է մինչխոսքային հաղորդումը: Մինչխոսքային հաղորդման մշակումից հետո տեղի է ունենում դրա արտաբերումը: Այլ կերպ ասած՝ հասկացական կառուցվածքը փոխարինվում է համապատասխան լեզվական կառուցվածքով: Ընդ որում, սկզբում տեղի է ունենում քերականական, ապա՝ հնչյունական կոդավորումը: Քերականական կոդավորումը, ըստ Վ. Լևելտի, ենթադրում է համապատասխան լեզվական միավորների ընտրություն և շարահյուսական հենքի ձևավորում: Այս ամենը նախապարաստական փուլ է մակերեսային կառույցի ձևավորման համար (Levelt 1993):

Վերոնշյալ տեսությունները համեմատելով Լ.Ս. Վիգոտսկու և նրա հետևորդների կողմից մշակված խոսքաստեղծման առանձին տեսությունների հետ՝ դժվար չէ նկատել մի ընդհանրություն, այն է՝ լեզվական միջոցների ընտրությունը և շարադասումը նախորդում է արտաքին խոսքին: Լ.Ս. Վիգոտսկին, ով համարվում է խոսքաստեղծման ներքին հոգեբանական կազմակերպման կադապարի մշակման հեղինակը, խոսքային գործունեությունը դիտարկում է որպես փուլային հաջորդականություն, որում խոսքաստեղծման առաջին օղակը մոտիվացիան է: Երկրորդ փուլում գոյանում է միտքը, որը ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված տերմինաբանությամբ համապատասխանում է խոսքային մտադրությանը: Այնուհետև տեղի է ունենում մտքի միջնորդավորումը ներքին խոսքի միջոցով, ինչը ժամանակակից հոգելեզվաբանության մեջ համապատասխանում է ասույթի ներքին ծրագրավորմանը: Ներքին ծրագրավորմանը հաջորդում է խոսքաստեղծման չորրորդ փուլը, երբ միտքը միջնորդավորվում է բառերի իմաստների միջոցով: Հինգերորդ և վերջին փուլը մտքի միջնորդավորումն է բառերի միջոցով կամ խոսքի արտասանական իրացումը (Комарова 2005: 39):

Լ.Ս. Վիգոտսկու հետևորդներից Ա.Ռ. Լուրիան խոսքային ասույթի ձևավորման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերին.

1. իմաստի ամրակայման կամ նախնական ծրագրի ձևավորման փուլ, որում տարրորոշվում են թեման և ռեման, այսինքն՝ ելակետային այն կապերը, որոնք շուրջ կառուցվելու է ասույթը,

2. ներքին խոսքի փուլ, որում կատարվում է ասույթի ներքին իմաստի փոխանցումը շարահյուսորեն կազմակերպված խոսքային նշանակությունների համակարգ,

3. այնպիսի ծավալուն ասույթի ձևավորում, որը, մի կողմից, ներառում է տեղեկության փոխանցումն ու հաղորդակցման գործընթացը, մյուս կողմից՝ ընդգրկում է ոչ միայն մեկ, այլ մի քանի միմյանց հետ փոխկապակցված նախադասություն (տե՛ս Առաքելյան 2007: 54):

Ի.Ա. Չիմնյայան լեզվախոսքային գործունեության ընթացքը բաժանում է երեք հիմնական փուլերի.

1. մոտիվացիոն փուլ, որը, իրագործվելով դրդումների, մոտիվների և նպատակների համադրությամբ, հանդես է գալիս որպես լեզվախոսքային գործունեության աղբյուր՝ հաղորդակցական ճանաչողական պահանջմունք, որը որոշում է լեզվախոսքային գործունեության բնույթը և ընթացքը,

2. կողմնորոշման կամ ներքին ծրագրավորման փուլ, որում որոշվում են գործունեության ուղղվածությունը, իրականացման ձևերն ու միջոցները:

3. իրականացման, կատարողական փուլ (տե՛ս Առաքելյան 2007: 52-53):

խոսքաստեղծման ընդհանրացված կադապար է մշակվել Ա.Ա. Լեոնտևի և Տ.Վ. Րյաբովա-Ախուտինայի կողմից, որը ներառում է այնպիսի օղակներ, ինչպիսիք են պահանջմունքը, մոտիվացիան, նպատակը, ներքին ծրագրավորման և ասույթի ծրագրի իրացման փուլերը, անհրաժեշտության դեպքում՝ նաև շտկման փուլը (Komarova 2005: 41): Այսպիսով՝ նշված հեղինակները ներկայացնում են խոսքաստեղծման գործընթացի ընդլայնված կադապար՝ առաջ քաշելով խոսքաստեղծման տեսանկյունից բավականին կարևոր մի հասկացություն, որն է ներքին ծրագրավորումը: Ներքին ծրագրավորումը, ասույթի առաջացման առաջին երեք փուլերի տրամաբանական հետևանքը լինելով, ներառում է ասույթի շարահյուսական ձևավորումը, այսինքն՝ խոսքաստեղծման այն փուլը, որում տեղի է ունենում խոսքային մտադրության իրականացմանն ուղղված լեզվական միջոցների ընտրության և կազմակերպման գործընթացը: Ներքին ծրագրավորումը ենթադրում է համապատասխան լեզվական միավորներով ասույթի, ինչպես նաև ամբողջական տեքստի ձևավորում և պահպանում:

Ս.Դ. Կացնելսոնը խոսքաստեղծման գործընթացում երեք մակարդակ է առանձնացնում՝ խոսքամտային (իմաստաբանական), բառային-ձևաբանական և հնչույթաբանական: Առաջին մակարդակում տեղի են ունենում բուն իմաստաբանական գործընթացները, այդ թվում՝ խորքային իմաստային-շարահյուսական կառույցների ձևավորումը: Երկրորդ մակարդակում տեղի է ունենում բառային միավորների և քերականական ձևերի ընտրությունը, որով

միջնորդավորվում է անցումը նախորդ մակարդակի իմաստային-շարահյուսական կառույցներից կոնկրետ նախադասու-թյունների: Երրորդ մակարդակում տեղի է ունենում արտասանական սխեմաների մշակումը և հնչյունական իրացումը, որն էլ եզրափակում է նախադասության առաջացման ողջ գործընթացը (Качнельсон 1972: 123): Ս.Դ. Կացնելսոնի սահմանած բառային-ձևաբանական մակարդակը համապատասխանում է ասույթի ներքին ծրագրավորման փուլին:

Այսպիսով, ընդհանրացնելով խոսքաստեղծման գործընթացի վերոնշյալ կադապարները, գալիս ենք եզրակացության, որ խոսքաստեղծման գործընթացում անհրաժեշտ է լեզվական միջոցների ընտրությունը և շարահյուսական կազմակերպումը նախորդում է արտաքին խոսքին, որը կարող է իրացվել բանավոր կամ գրավոր տարբերակով: Արտաքին խոսքին նախորդող փուլը տարբեր հոգեվեզվաբանների կողմից տարբեր անվանում է ստացել, մասնավորապես՝ հաջորդականությունների մակարդակ (Չ. Օսգուդ), խոսքաստեղծման գործընթացի ձևակերպման փուլ (Վ. Լևելտ), մտքի միջնորդավորում ներքին խոսքի միջոցով (Լ. Վիգոտսկի), ներքին խոսքի փուլ (Ա. Լուրիա), կողմնորոշման կամ ներքին ծրագրավորման փուլ (Ի. Չիմնյայա), ներքին ծրագրավորման փուլ (Ա. Լեոնտև և Տ. Րյաբովա-Ախուտինա), բառային-ձևաբանական մակարդակ (Ս. Կացնելսոն): Ելնելով մեր ուսումնասիրության առանձնահատկություններից՝ առավել նպատակահարմար ենք գտնում գործածել խոսքի «ներքին ծրագրավորման փուլ» տերմինը, քանի որ այն առավել համապարփակ, ամբողջական և ընդհանրացված կերպով է ներկայացնում խոսքաստեղծման տվյալ փուլում տեղի ունեցող հոգեբանական-լեզվական գործընթացները: Ինչպես արդեն նշել ենք, համապատասխան բառային և շարահյուսական միջոցների ընտրության գործընթացը մշտապես ուղեկցվում է խոսողի՝ հաղորդակցական նպատակն առավել արդյունավետ իրագործելու ցանկությամբ, ինչը ենթադրում է, մի կողմից, նվազագույն, մյուս կողմից՝ իրադրային և ոճական առումով արդարացված լեզվական միջոցներով առավել ագույն հաղորդակցական արդյունքի հասնելու ձգտում: Այսինքն՝ գործ ունենք լեզվական տնտեսման սկզբունքի հետ, որը խոսքում իրացվում է խոսքման միջոցով: Յետևաբար մենք

այն կարծիքին ենք, որ **տեղեկատվության խոսքումը տեղի է ունենում խոսքաստեղծման գործընթացի ներքին ծրագրավորման փուլում՝ տրամաբանական-բովանդակային մակարդակում՝ արտաքին խոսքում դրսևորվելով բոլոր լեզվական մակարդակներում:**

Այսպիսով՝ պարզեցինք, թե հաղորդակցական մտադրության իրականացման համար անհրաժեշտ լեզվական միջոցների ընտրությունը խոսքաստեղծման գործընթացի որ փուլում է տեղի ունենում: Հաջորդ հարցն այն է, թե ինչ գործոններ են ազդում այդ ընտրության վրա: Ս.Գ. Կացնելսոնը նկատում է, որ «տեքստերի կառուցվածքը պայմանավորված է ոչ միայն դրանց բովանդակությամբ և խոսքաստեղծման գործընթացում գիտակցության մեջ առկա ելքային կառույցներով, այլ և խոսքի իրադրային պայմաններով և հստակորեն չորոշարկվող միշտաբայլ գործոններով» (Казнелсон 1972: 121): խոսքաստեղծման գործընթացը սկսվում է հաղորդման թեմայի և ռեմայի սահմանմամբ, այսինքն՝ խոսողը, որպես կանոն, գիտի, թե ինչի մասին է խոսելու, որքանով է խոսքի հասցեատերը տեղյակ խոսքի առարկայի մասին, հաղորդման որ մասն է տեղեկատվական առումով առավել կարևոր: Ըստ այդմ՝ նամշակում է խոսքային վարքի իր ռազմավարությունը, որոշում շարադրանքի մանրամասնության աստիճանը, ինչն էլ ենթադրում է համապատասխան լեզվական միջոցների ընտրություն: Ն.Ի. Ժինկինը առաջարկում է ամբողջական տեքստի նախնական ծրագրի և տեքստաստեղծման՝ որպես այդ նախնական ծրագրի ծավալման հասկացող թները: Մասնավորապես՝ տեքստի բովանդակային պլանը ենթաթեմաների և ենթա-ենթաթեմաների (տարբեր մակարդակի ստորոգումների) ստորակարգությունն է, որի իրացումը ենթադրում է ուղղվածություն դեպի հաղորդակցության հասցեատերը, այսինքն՝ վերջինիս այնպիսի գիտելիքների առկայություն, որոնք, ընդհանուր լինելով խոսողի հետ, արտակա արտահայտությունն չեն ստանում տեքստում, սակայն «վերծանվում» են հասցեատիրոջ կողմից (Жинкин 1982: 188-189): Վ. Մատեգիուսը, խոսելով ասույթի ձևավորման մասին, նշում է, որ լեզվի բառային կազմը հանդես է գալիս որպես անվանողական ակտերի հիմք, մինչդեռ շարակարգային ակտերի հիմքում ընկած են նախադասությունների

կաղապարները: Սրանք այն «աղյուսներն» են, որոնցով կառուցվում է կոնկրետասույթը, որի իմաստային կառուցվածքը հավասար չէ դրամեջ մտնող լեզվական տարրերի առանձին նշանակությունների մեխանիկական գումարին (Mathesius 1975): Իմաստային կառուցվածքը բաղկացած է սույթի առարկայական բովանդակությունից (вещественное содержание), իրադրային բաղադրիչից, խոսողի՝ կոնկրետ իրականության և լսողի հանդեպ վերաբերմունքից: Յետևաբար սույթի համատեքստում, իմաստային կառուցվածքում է, որ տեղի է ունենում լեզվական միավորների (բառերի իմաստների և նախադասությունների կաղապարների) յուրահատուկ իրացումը (Ахутина 2007: 27): Այսպիսով՝ հանգում ենք այն մտքին, որ խոսողի կողմից լեզվական միջոցների ընտրությունը, ինչպես նաև այդ ընտրությամբ պայմանավորված խոսցումը, որ տեղի է ունենում խոսքաստեղծման ներքին ծրագրավորման փուլում, կատարվում է համատեքստի գործոնների հաշվառումով: Այս առումով՝ հատկապես կարևորվում են հաղորդակցության առարկայի մասին հասցեագրողի և հասցեատիրոջ տեղեկացվածության աստիճանը, ինչպես նաև կենսափորձով, ստացած կրթությամբ, հետաքրքրությունների շրջանակով պայմանավորված հենքային գիտելիքների մակարդակը: Բանն այն է, որ հաճախ հենց ընդհանուր տեղեկացվածության մակարդակով է պայմանավորված այն, թե խոսողը ինչպիսի հմտությամբ է կարողանում տեղեկատվության հաղորդման առավել արդյունավետ տարբերակ ընտրել, իսկ խոսքի հասցեատերը՝ համապատասխանաբար վերծանել այն [12]:

խոսցման գործարանական հիմքերը

Տեքստաստեղծման գլխավոր նպատակը տեղեկատվության հաղորդումն է: Ցանկացած տեքստ տեղեկատվության կրող է (Togeby 1998): Սակայն ինչպես «խոսցում», այնպես էլ «տեղեկատվություն» տերմինի սահմանումը միանշանակ չէ: Ի.Ռ. Գալպերինը նշում է, որ «տեղեկատվություն» տերմինն օգտագործվում է երկու իմաստով՝ ընդհանուր (առօրյա/կենցաղային) և տերմինաբանական: Առաջին իմաստով տեղեկատվություն ասելով՝ նկատի ունենք ցանկացած հաղորդում՝ ձևակերպված որպես անվանողական բնույթի

բառակապակցություն, փաստեր հաղորդող նախադասություն, նախադասությունների ամբողջություն (վերասույթային միասնություն և պարբերություն) կամ ամբողջական տեքստ: Այս մեկնաբանմամբ տեղեկատվությունը սովորաբար նույնացվում է անվանման, իմաստի, բովանդակության հետ: Երկրորդ նշանակությամբ «տեղեկատվություն» տերմինը ենթադրում է միայն օբյեկտիվ իրականության իրերի, երևույթների, հարաբերությունների և իրադարձությունների մասին նոր տեղեկությունների հաղորդում (Гальперин 2004: 26): Լ.Գ. Լուզինան, խոսելով տեքստում տեղեկատվության բաշխման ճանաչողական և գործաբանական հայեցակերպերի մասին, ներկայացնում է «տեղեկատվություն» տերմինի երեք մեկնաբանություն: Առաջին դեպքում նա տեղեկատվությունը նույնացնում է լեզվական միավորների իմաստի և բովանդակության հետ: Երկրորդ դեպքում նա, ներկայացնելով «տեղեկատվություն» տերմինի՝ ճանաչողական լեզվաբանության մեջ ընդունված մեկնաբանությունը, այն սահմանում է որպես հաղորդակցության ընթացքում լեզվական միջոցներով ներկայացվող և փոխանցվող գիտելիք: «Տեղեկատվություն» տերմինի՝ Լ.Գ. Լուզինայի առաջարկած երրորդ սահմանումը համապատասխանում է Ի.Ռ. Գալպերինի կողմից ներկայացվող նեղ տերմինաբանական սահմանմանը (Лузина 1996: 22): Տեքստում ամփոփված տեղեկատվության ընդհանուր ծավալը ընդհանուր առմամբ սահմանվում է որպես տեքստի տեղեկատվական հագեցվածություն կամ տեքստի տեղեկատվայնություն: Այսպես՝ Տ.Վ. Ժերեբիլոյի «Լեզվաբանական տերմինների բառարանում» տեղեկատվայնությունը (информативность) սահմանվում է որպես տեղեկատվության խտություն, հագեցվածություն բովանդակությամբ կամ միավոր ժամանակում փոխանցվող տեղեկությունների և գիտելիքների քանակ (Жеребило 2005: 89): Սակայն, հետևելով Ի.Ռ. Գալպերինի կողմից առաջարկված՝ տեղեկատվության նեղ տերմինաբանական սահմանմանը, պետք է նշենք, որ հաղորդակցության տեսանկյունից առավել արժեքավոր է նոր տեղեկատվությունը, և հենց վերջինով է պայմանավորված տեքստի տեղեկատվայնությունը: Այլ կերպ ասած՝ հակված ենք

տեղեկատվայ նու թյ ու ն հասկաց ու թյ ու ն ը դիտարկել ոչ թե պարզապես որպես տեքստում պարունակվող ամեն տեսակի տեղեկու թյ ու ն ների ամբողջ ու թյ ու ն և դրանով իսկ տեքստի որակի բացարձակ ցուցիչ, այլ հարաբերական կարգ, քանի որ հաղորդակց ու թյ ան գործընթացում հաղորդվող տեղեկատվ ու թյ ան մեջ նոր բաղադրիչ ը կամ տեղեկատվայ ն ու թյ ան աստիճանը «չի կարող դիտարկվել հասարակական, հոգեբանական, գիտատեսական, հանրամշակ ու թյ այ ին, տարիքայ ին, ժամանակայ ին և այլ գործ ու ն ներից դուրս: Մի հասցեատիրոջ համար հաղորդ ու մ ը կարող է լինել նոր և այդ իսկ պատճառով նոր տեղեկատվ ու թյ ու ն պարունակել, մինչդեռ մեկ ուրիշի համար նույն հաղորդ ու մ ը կարող է գուրկ լինել որևէ տեղեկատվ ու թյ ու նից (մեր կողմից ընդ ու ն ված տերմինաբան ու թյ ամբ՝ տեղեկատվայ ն ու թյ ու նից), քանի որ հաղորդման բովանդակ ու թյ ու ն ը նրա համար արդեն հայտնի է կամ ընդհանրապես անհասկանալի: Այն, ինչ որ ոչակի ժամանակահատվածի համար նոր էր, հաջորդ պահի դր ու թյ ամբ արդեն հայտնի է» (Гальперин 2004: 27): Այստեղ է, որ առաջ է գալիս «հասցեագրող-տեքստ-հասցեատեր» բաղադրիչ ների եռամիասն ու թյ ան՝ որպես տեղեկատվայ ն ու թյ ան կարգի ձևավորման մեջ կարևոր դեր կատարող գործ ու նի հարցը: Տեքստաստեղծման տեսանկյ ու նից հաղորդակցական ակտի կենտրոնական բաղադրիչ ը հասցեագրողն է, քանի որ հենց նա է կատար ու մ տեղեկատվ ու թյ ան հաղորդման նպատակով լեզվական միջ ոց ների ընտր ու թյ ան և խոսքայ նացման գործը: Խոսքն իր բոլոր բովանդակայ ին և գործաբանական հատկանիշ ներով անմիջականորեն պայմանավորված է հասցեագրողի ընտր ու թյ ամբ, որը նա ան ու մ է գիտակցաբար կամ ենթագիտակցաբար (Почепцов 1987: 11): Յենց հասցեագրողն է կատար ու մ լեզվական միջ ոց ների ընտր ու թյ ու ն որ ոչակի հաղորդակցական իրավիճակ ու մ՝ կոնկրետ խոսքայ ին գործ ու ն ներ ու թյ ան առանձնահատկ ու թյ ու ն ներին համապատասխան: Ինչպես նշ ու մ է Վ.Բ. Կասևիչ ը, տեղեկատվ ու թյ ու ն ը չի կարող փոխանցվել ճիշտ այն տեսքով, որով այն առաջ է գալիս, այլ պետք է ձևափոխվի, ենթարկվի յ ու ը րատեսակ խոսցման, որպեսզի հաղորդվի և համարժեքորեն ընկալվի (Касевич 1988: 14): Ի.Ռ. Գալպերինն իր հերթին նշ ու մ է, որ «ցանկացած հաղորդակց ու թյ ան մեջ զգալի դեր է

կատարում ձևը, որում ամփոփված է տեղեկատվությանը» (Гальперин 2004: 30): Ակնհայտ է, որ խոսքաստեղծման գործընթացում՝ փոխանցվելիք տեղեկատվության համար համապատասխան խոսքային արտահայտման ձև ընտրելիս, հասցեագրողն առաջնորդվում է որոշակի սկզբունքներով, որոնք էլ հենց պայմանավորում են միևնույն տեղեկատվության հաղորդմանն ուղղված տարբեր մակերեսային շարահյուսական կառույցների գոյության հնարավորությունը: Այս սկզբունքների բացատրությունը հնարավոր է գտնել գործաբանության մակարդակում (van Dijk 1981): Մասնավորապես՝ տեղեկատվության կամ տեքստի բովանդակության արտահայտման համար այս կամ այն շարահյուսական կառուցվածքի ընտրությունը, որն իր հերթին անմիջականորեն կապված է խոսքման՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման հետ, պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են տեքստում տեղեկատվության բաշխումը (թեմատեմատիկ կազմակերպումը կամ կանխենթադրույթի և նախադրույթի հարաբերակցությունը), հասցեագրողի խոսքային մտադրությունը (խոսողական ակտերի տեսակն ու հերթագայությունը), տեքստի գործաբանական ուղղվածությունը, հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունը, հաղորդակցական միջավայրը և այլն:

Ինչպես հայտնի է, խոսքային վարքագծի կարևորագույն պայմաններից է հաղորդել այնպիսի տեղեկատվություն, որը կնպաստի հաջորդի համարժեք ընկալմանն ու մեկնաբանմանը: Չետևաբար ասույթների հաջորդական շղթայում առաջնային կարևորություն է ստանում հին կամ հայտնի և նոր տեղեկատվության տարանջատումը: Ընդ որում, լեզվական միջոցների տնտեսման տեսանկյունից կարևոր է այն, որ հին կամ հայտնի տեղեկատվությունը [13], որպես կանոն, լեզվական միջոցներով ուղղակիորեն չի արտահայտվում, այլ հաղորդվում է որպես կանխենթադրույթ: Այսինքն՝ ասույթի թեման հանդես է գալիս որպես գործաբանական կանխենթադրույթի տարր (Лузина 1996: 14): Չենց այստեղ է, որ առաջ է գալիս դիսկուրսի գործաբանական համընդհանրույթ (pragmatic universe of discourse) հասկացությունը, որը ենթադրում է այն կանխենթադրույթների ամբողջությունը, որոնք

ընդհանուր են խոսակիցների համար, և որոնք վերջիններս համարում են իրենց համատեղ գիտելիքը (Kempson 1975): Ասույթի տեղեկատվայնությունը, հետևաբար և հաղորդակցության արդյունավետությունը որոշվում են ասույթի այն մասով, որը չի մտնում դիսկուրսի գործաբանական համընդհանրույթի մեջ: Յետևաբար համապատասխան խոսքային ձևակերպում ընտրելիս հարկավոր է հաշվի առնել նշված հանգամանքը:

Ինչպես հայտնի է, հաղորդակցության գործընթացը խոսողական ակտերի շարան է, այսինքն՝ խոսողի նպատակը ոչ միայն պարզապես տեղեկատվության հաղորդումն է, այլև խոսքի միջոցով որոշակի գործողություններ իրականացնելը, ինչպես օրինակ՝ ազդել տեքստի կամ խոսքի հասցեատիրոջ հետագա գործողությունների ընթացքի վրա, փոխել վերջինիս տեղեկացվածության աստիճանը և այլն (հիլոկուտիվ/պերլոկուտիվ ակտեր): Խոսքը հաղորդակցական մտադրության մասին է: Ընդ որում՝ հաղորդակցական ակտը նախագծելիս խոսողը պետք է բավարար պատկերացում ունենա ոչ միայն այն մասին, թե որքանով է խոսակիցը ընկալում խոսողի մտադրությունը, այլև թե խոսակիցն ինչ նպատակ է հետապնդում՝ դառնալով հաղորդակցական ակտի մասնակիցը (Austin 1962, Grice 1991, Levinson 1983, Searle 1969, Kempson 1989, Nuyts 1992): Սա որոշիչ դեր է խաղում հաղորդակցական ակտի ժամանակ խոսողի կողմից սեփական մտադրությունն իրագործելու նպատակով համապատասխան լեզվական միջոցների ընտրության հարցում:

Ինչ վերաբերում է տեքստի գործաբանական ուղղվածությանը, ապա այն մեծապես պայմանավորված է տեքստի տեսակով: Այսինքն, ըստ ժանրային պատկանելության, յուրաքանչյուր տեքստ ենթադրում է համապատասխան հասցեատեր, հետևաբար և վերջինիս ընկալման առանձնահատկություններին համապատասխան՝ լեզվական միջոցների ընտրությունն որոշակի ծավալի և բարդության տեղեկատվության խոսքային ձևակերպման համար:

Համապատասխան ծավալով տեղեկատվություն հաղորդելու նպատակով լեզվական միջոցների ընտրության հարցում կարևորվում է նաև խոսակիցների փոխհարաբերությունը: Հաղորդակցությունը խարսխվում է այն փաստի վրա, որ ցանկացած

անհատ սոցիալական էակ է, ով որոշակի հարաբերության մեջ է գտնվում ուրիշ անհատների հետ: Այս կապն արտացոլվում է իրականացվող յուրաքանչյուր հաղորդակցական ակտի մեջ: Յաղորդակցական իրավիճակը ինքնաբերաբար ստեղծում է կոնկրետ սոցիալական և միջանձնային իրականություն, որն ինչպես առաջարկում է շփման և փոխազդման հնարավորություններ, այնպես էլ որոշակի սահմանափակումներ և պարտականություններ է դնում հաղորդակցական ակտի մասնակիցների վրա՝ կապված վերջիններիս ստանձնած դերերի և դրանից բխող վարքագծային կադապրների հետ: Յետևաբար խոսողը հաղորդակցական ակտը առավել արդյունավետ էլ քով իրականացնելու համար պետք է ճիշտ գնահատի իր և խոսակցի փոխհարաբերությունը՝ հետևելով այդ հարաբերությամբ թելադրված կանոններին: Բնականաբար խոսողը նաև պետք է որոշակի պատկերացում ունենա այն մասին, թե ինչպես է խոսակիցը գնահատում իրենց փոխհարաբերությունը և, ըստ այդմ, ինչպիսի կանոնների պահպանում է ակնկալում խոսողից (Nuyts 1992: 51-54):

Յաղորդակցության գործընթացում լեզվական միջոցների ընտրությամբ պայմանավորված խոսման վրա մեծապես ազդում է նաև հաղորդակցական միջավայրը: Այսպես՝ հաղորդակցությունը տարածական և ժամանակային առումով մշտապես ամփոփված է որոշակի ֆիզիկական, մշակութային և սոցիալական իրադրության սահմաններում՝ կրելով այդ իրադրության կամ միջավայրի ազդեցությունը: Միջավայրը կարող է հանդես գալ որպես որոշիչ գործոն խոսքաստեղծման գործընթացում, որով պայմանավորված՝ խոսողը որոշում է իրականացնել տվյալ հաղորդակցական ակտը, թե ոչ, կամ իրականացնելու դեպքում ինչպիսի լեզվական միջոցներ գործածել առավելագույն հաղորդակցական արդյունքի ակնկալիքով: Օրինակ՝ եկեղեցու հանդես հարգանքը կարող է անհատին թույլ չտալ խոսել պատարագի ժամանակ կամ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում խոսել շշուկով՝ գործածելով կրճատ ասույթներ (Nuyts 1992: 54):

Ամփոփելով ասվածը՝ գալիս ենք եզրակացության, որ գործաբանական բնույթի տեղեկությունները խոսքաստեղծման գործընթացում պայմանավորում են լեզվական միջոցների

ընտրությունը և լեզվական միջոցների տնտեսամաք հնարավորությունն են ստեղծում ընդլայնել տեքստի տեղեկատվական ներուժը: Սա հանդես է գալիս որպես տեքստի խոսքման գործաբանական հիմք: Յենց վերոնշյալ գործաբանական գործոնների լույսի ներքո էլ դիտարկելու ենք լեզվական տնտեսման միջոցների գործառույթներն անգլերեն գիտական խոսքում:

Հանրամշակութային գործոնը՝ որպես խոսքումը պայմանավորող երևույթ գիտական դիսկուրսում

Անգլերենը «համաշխարհային ապրանք» է, որն իր մեծ պահանջարկի շնորհիվ հաջողությամբ վաճառվում և գնվում է ողջ աշխարհում (Pennycook 1994: 158): Ներկայումս անգլերենը համաշխարհային հաղորդակցության թիվ մեկ լեզուն է, և, ինչպես իրավամբ նկատում է Դ. Քրիսթալը, բոլորը չեն, որ ողջունում են այս փաստը, սակայն գերիշխում է այն տեսակետը, որ միայն այն սովորելու դեպքում է հնարավոր ստանալ ամենավերջին տեղեկությունները մարդկային գործունեության ցանկացած ոլորտի հասարակական և գիտական ձեռքբերումների մասին: Վերջին 30 տարիների ընթացքում անգլերեն լեզվի դասավանդումը վերածվել է համաշխարհային նշանակության արագ զարգացող «արդյունաբերության» (Кристал 2001: 168): Ա. Փենիքուքն իր «*The Cultural Politics of English as an International Language*» գրքում խոսում է այն մասին, որ անգլերենը, լինելով միջազգային հաղորդակցության լեզու, սոցիալապես, քաղաքականությամբ և մշակույթով չպայմանավորված չեզոք միջոց է: Մարդիկ, ովքեր խոսում են անգլերեն, ունեն հավասար իրավունքներ՝ անկախ ազգային պատկանելությունից (Pennycook 1994: 158): Ռ. Կապլանն իր հերթին նշում է, որ անգլերեն լեզվով միջազգային գիտական տեքստերն ինքնուրույն մշակույթ են, որը կապված չէ որևէ կոնկրետ երկրի մշակույթի հետ, լինի դա Ամերիկայի Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Կանադան, Ավստրալիան, թե Նոր Զելանդիան (Kaplan 1998: 17): Այս ամենը մեզ թույլ է տալիս պնդել, որ անգլերենը ոչ միայն պարզապես համաշխարհային հաղորդակցության լեզու է, այլև վերջին տասնամյակների ընթացքում ձեռք է բերել գիտության և գիտական

հաղորդակցության միջազգային լեզվի կարգավիճակ: Յենց այս փաստով է պայմանավորված մեր կողմից անգլերեն գիտական դիսկուրսի՝ որպես լեզվի այնպիսի մի ոլորտի ընտրությունը, որում լեզվական միջոցների տնտեսման ուսումնասիրությունն առավել մեծ նշանակություն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով: Սակայն նախքան վերոնշյալ լեզվաբանական խնդրի համատեքստում անգլերեն գիտական խոսքի բուն ուսումնասիրությանն անցնելը, հարկ է ամփոփ կերպով անդրադառնալ գիտական դիսկուրսի հիմնական բնորոշ առանձնահատկություններին, ինչպես նաև գիտական տեքստերում լեզվական տնտեսման միջոցների առատ գործածությունը պայմանավորող արտալեզվական գործոններին:

Տեղին է նշել, որ «դիսկուրս» տերմինը լեզվաբանության մեջ միանշանակ մեկնաբանություն չունի: Ընդհանուր առմամբ դիսկուրս ասելիս պետք է հասկանալ «կապակցված խոսք, խոսքնթացում կազմավորվող ասույթների խոսքաշար, որոնք փոխկապակցված են իմաստային և կառուցվածքային առումով, փոխառնչվում են ըստ խոսքային հաղորդակցման տրամաբանության և չեն խախտում հաղորդակցական դիտավորության բնականոն հաղորդականությունը...» (Պարոնյան 2011: 48): Սակայն, ինչպես իրավամբ նշում է Ծ.Յ. Պարոնյանը, գործաբանական լեզվաբանության մեջ կապակցված խոսքն անվանող մի քանի տերմիններ են կիրառվում (Պարոնյան 2011: 48): Մասնավորապես՝ սույն ուսումնասիրության շրջանակներում հաճախ կիրառվում են *դիսկուրս* և *տեքստ* տերմինները: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ այս երկու հասկացությունները հաճախ նույնացվում են կամ, ճիշտ հակառակը, տարբերակվում, մասնավորապես՝ դիսկուրսը նույնացվում է բանավոր խոսքի, իսկ տեքստը՝ գրավոր խոսքի հետ: Այսպես՝ Յ.Ե. Չուբարովան, խոսելով անգլերեն գիտաուսումնական դիսկուրսի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների մասին, դիսկուրսը սահմանում է որպես բանավոր խոսքին բնորոշ երևույթ, որպես «բարդ հաղորդակցական երևույթ, բանավոր խոսքային գործողություն, որը ներառում է հաղորդակցության մասնակիցների և վերջիններիս բնորոշ առանձնահատկությունների

մասին պատկերացում տվող սոցիալական համատեքստը և խոսքարտադրման ու խոսքընկալման գործընթացները»: Նեղ իմաստով դիսկուրսը սահմանվում է որպես «լեզվական միավորների կապակցված հաջորդականություն, որը ստեղծվում է խոսողի կողմից որոշակի վայրում, որոշակի պահի, որոշակի նպատակով» (Чубарова 2008: 27): Մինչդեռ մի շարք այլ լեզվաբաններ նման տարբերակում չեն մտցնում: Օրինակ՝ Տ.Ա. Ֆիլոնենկոն դիսկուրսը սահմանում է որպես «լեզվի՝ գործառապես պայմանավորված կիրառություն որոշակի հանրամշակութային իրադրության համատեքստում» (Филоненко 2005: 29): Ն.Ա. Միշանկինան, տեքստը սահմանելով որպես «լեզվական կառույց, հաղորդակցության ակտի խոսքային բաղադրիչ, ավարտուն իմաստային կաղապարի իրացում», դիսկուրսը սահմանում է որպես «հաղորդակցական և խոսքային գործոնների ամբողջություն, որոնք պայմանավորում են այս կամ այն ոլորտում ընթացող հաղորդակցության իրականացման միջոցները, որոնք իրենց հերթին նյութական իրացում են ստանում տեքստի տեսքով...» (Мишанкина 2010: 97-98): Ն.Ա. Միշանկինայի այս մեկնաբանությունը թերևս հարում է դիսկուրսի վերլուծության տեսության մեջ առավել տարածում գտած Ջ. Յուլի և Յ. Ուիդդոնսոնի տեսակետին, համաձայն որի՝ դիսկուրսը բանավոր կամ գրավոր խոսքի գործարկման գործընթացն է, մինչդեռ տեքստը՝ այդ գործընթացի արդյունքը (անգամ եթե այն բանավոր հնչելուց հետո գրիչի առնվում կամ մոռացվում է) (Widdowson 2007, Yule 2002): Մեզ համար միանգամայն ընդունելի է դիսկուրսի և տեքստի այս ըմբռնումը, հետևաբար մեր ուսումնասիրության շրջանակներում թե՛ «դիսկուրս», թե՛ «տեքստ» տերմիններն օգտագործվում են անվանելու ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքի դրսևորումները՝ իհարկե «գործընթաց-արդյունք» տարբերության գիտակցմամբ:

Ինչպես երևում է, մեր աշխատանքում հաճախ զուգահեռ կիրառվում են գիտական *խոսք* և գիտական *դիսկուրս* տերմինները: Քանի որ դրանց մեկնաբանությունը կարևոր տեսական նշանակություն ունի մեր ուսումնասիրության համար, հարկ ենք համարում նաև հստակեցնել նշված հասկացությունների մեր

ըմբռնումը: Այս նպատակով տեղին է մեջբերել Ն.Գ. Արուսյունյանի հետևյալ սահմանումը. «Դիսկուրսը կապակցված տեքստ է իր արտալեզվական՝ գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական և այլ գործոններով հանդերձ: Դա տեքստ է, որը իրադրային հայեցակերպ ունի. խոսք է, որը դիտվում է որպես նպատակաուղղված հանրական գործունեություն, որպես բաղադրիչ, որը մասնակցում է մարդկանց փոխներգործության ընթացքում և նրանց գիտակցության կառույցներում (ճանաչողական գործընթացներում): Դիսկուրսը խոսք է, որն «ընկղմված» է կյանքի հոսանքում» (Арутюнова 1990: 136): Ինչպես երևում է տվյալ սահմանումից, *դիսկուրս* տերմինը վերաբերում է գործարկվող խոսքին, խոսքային գործունեությանն իր լեզվական և արտալեզվական առանձնահատկությունների ամբողջության մեջ, մինչդեռ *խոսք* տերմինը հանդես է գալիս առավել չեզոք և ընդհանուր նշանակությամբ: Յետևաբար մեր պատկերացմամբ գիտական դիսկուրսը նույն գիտական խոսքն է, պարզապես տվյալ արտահայտության մեջ *դիսկուրս* բառի առկայությամբ ընդգծվում է այն փաստը, որ գիտական հաղորդակցությունը, ինչպես նաև ցանկացած այլ ոլորտում տեղի ունեցող խոսքային փոխներգործություն, ընթանում է որոշակի արտալեզվական գործոնների համատեքստում և մշտապես կրում է դրանց ազդեցությունը:

Դիսկուրսի տիպաբանության հարցը մինչ օրս շարունակում է մնալ դիսկուրսի լեզվաբանության առաջատար խնդիրներից մեկը: Բանն այն է, որ գոյություն ունեն դիսկուրսի դասակարգման բազմազան սկզբունքներ: Յանրալեզվաբանության տեսակետից դիսկուրսի հիմնական տեսակների դասակարգման հիմքում ընկած են հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունը, մասնավորապես՝ հանրային դերերը և կարգավիճակը, ինչպես նաև հաղորդակցական նպատակները: Այսպես՝ Վ.Ի. Կարասիկը (Карасик 2002) առանձնացնում է դիսկուրսի երկու հիմնական տեսակ՝ անձնային և ինստիտուցիոնալ: Առաջին դեպքում խոսքը կերտերը հանդես են գալիս որպես անհատներ՝ ուրույն հարուստներաշխարհով, և նրանց նպատակն է հաղորդակցության միջոցով լուծել կենցաղային,

առօրեական խնդիրներ, մինչդեռ ինստիտուցիոնալ դիսկուրսը հաղորդակցություներ է, որն ընթանում է դերային և կարգավիճակային հարաբերությունների շրջանակում: Մասնավորապես՝ դիսկուրսի այս տեսակի մասնակիցները հարաբերվում են ոչ թե որպես անհատներ, այլ որպես հասարակության այս կամ այն ինստիտուտի ներկայացուցիչներ (օրինակ՝ գիտնականները՝ գիտական դիսկուրսում, քաղաքական գործիչները և ընտրողները՝ քաղաքական դիսկուրսում, քննիչները՝ մեղադրյալը՝ իրավաբանական դիսկուրսում, ուսուցիչները՝ աշակերտը՝ մանկավարժական դիսկուրսում, բժիշկները՝ հիվանդը՝ բժշկական դիսկուրսում և այլն), և նրանց նպատակն է «հատուկ» տիպի տեղեկատվության հաղորդումն ու ստացումը, ինչպես նաև դրա արդյունքում «հատուկ» նպատակների և խնդիրների իրականացումը (օրինակ՝ գիտական տեսության տարածում և փորձի փոխանակում, քարոզարշավի իրականացում, նախաքննության կատարում, ուսուցում, բուժօգնության տրամադրում և այլն): Վ.Ի. Կարասիկը և մի շարք այլ լեզվաբաններ (Карасик 1998, Михайлова 1999, Филоненко 2005, Мишанкина 2010, Чубарова 2008 և այլն) առանձնացնում են գիտական դիսկուրսը ինստիտուցիոնալ դիսկուրսի մի շարք այլ տարատեսակների կողքին, ինչպես օրինակ՝ մանկավարժական, քաղաքական, իրավաբանական, ռազմական, քննադատական, բարոյագիտական, վարչական, կրոնական, բժշկական, գովազդային, գանգվածային-լրատվական և այլն [14]:

Գիտական դիսկուրսի ուսումնասիրության գործում մեծ ավանդ ունի Վ.Ի. Կարասիկը (Карасик 2000), ով առանձնացնում է գիտական դիսկուրսի հետևյալ բաղադրիչները.

ա. Մասնակիցներ,

բ. Նպատակներ, որոնք ենթադրում են հասցեատիրոջ կողմից հին գիտելիքի հիման վրա նոր գիտելիքի ձեռքբերմանն ուղղված գործունեություն, որտեղ հասցեագրողի նպատակը և խնդիրը հասցեատիրոջ տեղեկացվածության և հաղորդակցությունից վերջինիս ունեցած ակնկալիքների մասին սեփական պատկերացումների հիման վրա տեղեկատվության հաղորդումն է: Այլ կերպասած՝ ենթադրվում է, որ գիտական դիսկուրսի մասնակիցը

որոշ չափով ծանոթ է այլ գիտական տեքստերում ներկայացված հասկացություններին, գաղափարներին և տեսություններին, ինչը հասցեագրողին թույլ է տալիս տեղեկատվության որոշակի հատված հաղորդել ներակա կերպով՝ առանց տեքստի տեղեկատվական ամբողջականության խաթարման: Ընդ որում, ներակայվող տեղեկատվության ծավալը գիտական դիսկուրսի յուրաքանչյուր տարատեսակի և յուրաքանչյուր ժանրային դրսևորման համար տարբեր է: Ուստի գիտական դիսկուրսում տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու, հետևաբար և այն խտացնելու հարցում կարևոր դեր է խաղում միջտեքստայնությունը, որը դրսևորվում է ուղիղ և անուղղակի մեջբերումների, տերմինաբանական կապերի, հղումների և այլնի հաշվին:

գ. Քրոնոտոպը, որը ներառում է գիտական երկխոսությանը հատուկ միջավայրը և ժամանակը, որում այն ընթանում է: Ընդ որում, այս կապակցությամբ պետք է հաշվի առնել երկու կարևոր նկատառում: Գրավոր հաղորդակցության դեպքում գիտական դիսկուրսի մասնակիցների քրոնոտոպները չեն համընկնում, և գիտական դիսկուրսը միջտեքստայնության հաշվին դուրս է գալիս լոկալ ժամանակային սահմաններից:

դ. Արժեքները, որոնց շարքում Վ.Ի. Կարասիկն առանձնացնում է ճշմարտությունը, գիտելիքը և հետազոտությունը (Карасик 2004: 231): Այս շարքին կարելի է վերագրել նաև գիտականության չափանիշները:

ե. Ռազմավարությունը, մասնավորապես՝ գիտական դիսկուրսի ռազմավարական խնդիրների շարքում Վ.Ի. Կարասիկը նշում է «ստացված արդյունքները մասնագետների և ոչ մասնագետների համար ընդունելի ձևով շարադրելու» կարևորությունը (Карасик 2004: 231), որը ենթադրում է համապատասխան լեզվական միջոցների ընտրություն: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ գիտական դիսկուրսի ռազմավարությունը կախված է հաղորդակցության ձևից (գրավոր կամ բանավոր) և ժանրից (օրինակ՝ գիտական հոդված, մենագրություն, գիտաժողովի զեկույց և այլն), հաղորդակցության պայմաններից՝ իրական կամ վիրտուալ հաղորդակցություն, ինչպես նաև թիրախային լսարանից:

գ. Թեմատիկան, որը որոշվում է՝ ըստ գիտության համապատասխան բնագավառի: Վ.Ի. Կարասիկը երկու հիմնական թեմատիկ ուղղությունն է առանձնացնում՝ հումանիտար և բնագիտական (Карасик 2004: 232): Ըստ թեմատիկ ուղղվածության՝ գիտական տեքստերը տարբերվում են նաև էգզոտիկական առանձնահատկություններով:

Ե. Տարատեսակներ և ժանրեր, որոնց թվում առանձնացվում են ակադեմիական կամ բուն գիտական դիսկուրսը, գիտահանրամատչելի (գիտահրապարակախոսական) դիսկուրսը, դիդակտիկ կամ գիտաուսումնական, գիտագործնական (գիտատեղեկատվական) դիսկուրսը, գիտաքննադատական դիսկուրսը և այլն (Митрофанова 1985, Кожина 1972, Васильева 1976, Филоненко 2005, Мишанкина 2010) [15]:

ը. Դիսկուրսիվ բանաձևերը, որոնք վերաբերում են գիտական դիսկուրսի իմաստաբանական և շարահյուսական առանձնահատկություններին: Դրանք ներկայացված են գիտության ենթաէգզոտիկական գիտական ոճում, որին հատուկ է վերացականությունը, տրամաբանականությունը, միանշանակությունը և չեզոքությունը (Мишанкина 2010: 116-117): Դա պայմանավորված է գիտական գործունեության գլխավոր նպատակով, որն է՝ գիտական տեղեկատվության ճշգրիտ, տրամաբանական և միանշանակ հաղորդումը (Кожина 1993: 161):

թ. Նախադեպային տեքստերը, մասնավորապես՝ գիտական հաղորդակցությունը ենթադրում է անդրադարձ գիտության այս կամ այն ոլորտի շրջանակներում ձևավորված գիտելիքների համակարգին: Այդ իսկ պատճառով գիտական դիսկուրսի հիմնական բնութագրիչներից մեկը միջտեքստայնությունն է: Վ.Ե. Չերնյավսկայան առաջարկում է դիտարկել միջտեքստայնությունը որպես «բովանդակության մակարդակում գիտական տեքստի կառուցման համընդհանուր սկզբունք» (Чернявская 2006: 49): Տեքստի մեջ այլ հեղինակի տեքստից վերաբերության ձևով բառերի և բառակապակցությունների ներմուծումը, ըստերևույթին, գիտական դիսկուրսում տեղեկատվության խոսցման միտում է, որի դեպքում միամբողջ գաղափար, հասկացություն կամ նույնիսկ տեսությունն խոսցվում է մեկ տերմինի, տերմինաբանական արժեք ունեցող

բառակապակցության կամ ասույթի սահմաններում: Այս կերպ հղում է կատարվում դեպի գիտական իմացության մի ամբողջ ոլորտ, որը ենթադրաբար այնքան ծանոթ է խոսքի հասցեատիրոջը, որ կարիք չկա այն արտակա կերպով ներկայացնելու տեքստի մակերեսային կառուցվածքում:

Ինչպես ցույց է տալիս գիտական դիսկուրսի տիպաբանության վերլուծությունը, գիտական տեքստերի ստեղծման հարցում, բացի բուն ներլեզվական պատճառներից, մեծ է նաև արտալեզվական գործոնների դերը: Սա թույլ է տալիս հաղորդակցության հանրամշակութային առանձնահատկությունները դիտարկել որպես գիտական դիսկուրսում լեզվական միջոցների ընտրությունը և համապատասխան գուգակցումը, հետևաբար և տեքստի խոսցումը պայմանավորող երևույթ:

Ինչպես գիտենք, տեղեկատվական հագեցվածությունը, մի կողմից, և խոսքի տրամաբանականությունն ու հակիրճությունը, մյուս կողմից, գիտական խոսքի բնորոշ առանձնահատկություններից են, ինչի լավագույն ակացույցը գիտական խոսքում այնպիսի սեղմ լեզվական կառույցների առատ գործածությունն է, ինչպիսիք են դերբայական դարձվածները, անկախ կառույցները, զեղչված նախադասությունները, տարատեսակ մեջբերումները, աղյուսակները, գծապատկերները և այլն, որոնք բոլորը խոսքի խոսցման օրինակներ են: Յետևաբար կարելի է պնդել, որ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց հանդես եկող խոսցումը գիտական խոսքի անբաժան մասն է: Եվ ինչպես ցանկացած հասարակական երևույթ, այն, բացի ներքին պատճառներից, ունի նաև արտաքին պայմանավորվածություն:

Գիտական խոսքում լեզվական տնտեսման միջոցների գերակշիռ առկայությունը պայմանավորող հիմնական արտալեզվական գործոնների շարքում նախևառաջ կարելի է նշել տեղի և ժամանակի տնտեսումը: Յայտնի է, որ գիտական խոսքի յուրաքանչյուր գրավոր դրսևորում, լինի դա գիտական հոդված, հոդվածի թեզիս, թեկնածուական կամ դոկտորական ատենախոսություն, ատենախոսության սեղմագիր, մենագրություն, դասագիրք, ուսումնական ձեռնարկ և այլն, ունի հստակ ձևաչափ, որը

պարտադրում է էջերի որոշակի քանակ: Մյուս կողմից՝ հեղինակն ունի ընթերցողին հնարավորինս համապարփակ, սպառիչ և գիտականորեն հիմնավորված տեղեկատվություն մատուցելու խնդիր: Նա չի կարող պարզապես «բաց թողնել» տեղեկատվության որոշակի հատվածներ, որովհետև այդ դեպքում տեքստը կզրկվի իմաստային և կառուցվածքային ամբողջականությունից: Նա պետք է կարողանա տեղեկատվության որոշակի հատվածներ ներկայացնել ներակալերպով, այսինքն՝ կատարել լեզվական միջոցների այնպիսի ընտրություն, որի դեպքում խոսքային արտահայտությունն ստացած բովանդակության միջոցով ընթերցողը կկարողանա վերծանել տեքստի խորքային մակարդակում թաքնված, լեզվական միջոցներով ուղղակիորեն չարտահայտված մեկ այլ բովանդակություն: Ակնհայտ է, որ խոսքն այս դեպքում տեքստի խոսքման մասին է, որը ծառայում է որպես որոշակի ծավալով բովանդակությունը կոնկրետ քանակով էջերի սահմաններում հնարավորինս արդյունավետ տեղավորելու խնդրին: Բացի այդ, կարևոր է նաև հաշվի առնել այն փաստը, որ տպագրական էջն արժե որոշակի գումար, հետևաբար խնայելով տպագրական տարածք՝ հեղինակը խնայում է նաև համապատասխան գումար:

Ինչ վերաբերում է գիտական խոսքի բանավոր դրսևորումներին, ապա այս դեպքում խոսողի՝ խոսքը սեղմ դարձնելու ձգտումը հաճախ պայմանավորված է լինում ժամանակային սահմանափակմամբ: Մասնավորապես՝ յուրաքանչյուր ելույթի, լինի դա գիտաժողովի զեկույց, դասախոսություն, ատենախոսության պաշտպանություն, գիտաճանաչողական հաղորդում և այլն, հատկացվում է կոնկրետ սահմանափակ ժամանակ, որի ընթացքում խոսողը պետք է հաջողեցնի հնարավորինս համապարփակ և լիարժեք կերպով ներկայացնել իր ասելիքը: Եվ հաճախ ժամանակի տնտեսման ձգտմամբ է պայմանավորված ելույթ ունեցողի կողմից նյութի ներկայացման տարատեսակ տեսաձայնային միջոցների գործածությունը, որոնք այս դեպքում հանդես են գալիս որպես տեղեկատվության խոսքման գործիքներ (օրինակ՝ PowerPoint Presentation ծրագրի, տարբեր տեսանյութերի, լուսանկարների միջոցով արվող լուսաբանումները, որոնք ուղեկցում են բանավոր, ինչպես նաև խոսքին,

և այլն): Բացի այդ, հարկ է հաշվի առնել մարդկային հիշողության սահմանափակ բնույթը, ինչպես նաև այսպես կոչված «բնածին ծուլությունը»: Սանչանակում է, որ որքան ավելի սեղմ և դինամիկ է խոսքի կառուցվածքը, այսինքն՝ որքան մեծ է տվյալ ելույթի համար հատկացված ժամանակում փոխանցվող տեղեկատվության մեջ նոր տեղեկությունների ծավալը, այնքան ավելի հեշտ է խոսողի համար գրավել և պահել ունկնդրի ուշադրությունը, հետևաբար և ավելի արդյունավետ է ընթացող հաղորդակցությունը:

Այսպիսով՝ տեքստը սեղմ դարձնելու գործընթացը բուն էլեզվական, հոգելեզվաբանական, գործաբանական և հանրամշակութային գործոնների փոխազդեցության բարդ շղթա է, որի հաշվառումով է իրականացվել ատենախոսության հաջորդ գլուխներում ներկայացված՝ անգլերեն գիտական խոսքի բանավոր ու գրավոր դրսևորումներում հանդես եկող էլեզվական տնտեսման միջոցների քննությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսելով զեղջման մասին՝ Ն.Գ. Պրիմերովան նշում է, որ այն «ներակայմանը (ներիմաստի ձևավորմանը) առնչվում է այնպես, ինչպես մասն ամբողջին, հետևաբար ներակայման դրսևորման մասնավոր դեպք կարելի է համարել նաև խոսացումը» (Примерова 1987: 5):

2. Ե. Մխիթարյանը և Չ. Կոստանյանը նշում են, որ «լեզվական տնտեսումն իրացվում է կրճատման գործընթացի միջոցով, որը ոչ միայն ենթադրում է կառուցվածքի նախնական բաղադրիչների մեխանիկական հեռացում, այլ և նվազ բարդ և ավելի կարճ տարրերով փոխարինում... Շարահյուսական կառույցների կրճատումը տեղի է ունենում կառուցվածքի նախնական բաղադրիչների հեռացման և դրա տրամաբանական-իմաստային միջուկի պահպանման հաշվին, ինչի շնորհիվ խոսակիցները կարող են հեշտությամբ հասկանալ նախադասության լիարժեք իմաստը» (Mkhitaryan, Kostanyan 2017: 78): Ակնհայտ է, որ *կրճատում* (*reduction*) բառն այս համատեքստում հանդես է գալիս որպես *խոսացում* (*compression*) բառի հոմանիշ:

3. Գ.Վ. Գլուխովը, խոսելով բառակազմական խոսացման մասին, առաջարկում է դիտարկել ոչ միայն ձևը և բովանդակությունը, այլ և ձևի և բովանդակության փոխհարաբերությունը՝ վերջինս արտահայտելով մաթեմատիկական բանաձևի տեսքով (Глухов 1992: 21): Խոսացման բանաձևն ունի հետևյալ տեսքը.

$$F = \Delta(a \rightarrow 0) / F(a \rightarrow \infty),$$

որտեղ F -ն՝ խոսացումն է, Δ -ն՝ ձևը, F -ն՝ բովանդակությունը: Մասնավորապես, ըստ Գ.Վ. Գլուխովի, խոսացման դեպքում լեզվական միավորի ձևը ձգտում է զրոյի, այսինքն՝ նվազագույն լեզվական արտահայտության, մինչդեռ բովանդակությունը ձգտում է անսահմանության, այսինքն՝ կարող է անորոշ կերպով ընդլայնվել: Լռության դեպքում ձևը հավասար է զրոյի, այսինքն՝ լեզվական արտահայտությունն իսպառ բացակայում է, հետևաբար տեղի է ունենում խոսացման առավելագույն իրացում:

4. Առանձնացվում է հնչյունական կամ վանկային մակարդակը, որում խոսացումը դրսևորվում է հնչյունների՝ որպես հնչույթների իրացման միջոցի բացթողման տեսքով (Литвин 2003: 39):

5. Խոսացված խոսքի տարբեր տեսակներ հանդես են գալիս որոշակի լեզվական մակարդակներում: Այսպես՝ հեռագրերի ենթալեզվին բնորոշ է շարահյուսական-բառային մակարդակի խոսցում, զինվորական հրամանների ենթալեզվին հատուկ է խոսցումը գրույթային կամ ձևաբանական մակարդակում, ռեֆերատների ենթալեզվի տարբերակիչ առանձնահատկությունը իմաստաբանական խոսցումն է, վերնագրերը բնութագրվում են իմաստաբանական և շարահյուսական մակարդակի խոսցմամբ և այլն:

6. Յարկ է նշել, որ շարադրանքի հակիրճությամբ կամ բազմաբառությամբ չի որոշվում շարադրանքի ամբողջականությունն ու հստակությունը: Յետևաբար կարելի է ենթադրել, որ չկա մտքերի արտահայտման մեկ համընդհանուր «լավագույն» միջոց՝ ի դեմս տնտեսման կամ հակառակ երևույթի՝ ավելորդաբանության (избыточность): Լավագույն միջոցն այն է, որն արդարացված է իրադրային և գործառական առումով: Յետևաբար խոսցումը կարող ենք դիտարկել որպես ոչ թե պարզապես տնտեսման սկզբունքի, այլ տնտեսում-ավելորդաբանություն կարգի իրացում խոսքում: Ընդ որում, ավելորդաբանությունն այն հոլմքն է, որից, տնտեսման սկզբունքով պայմանավորված, ընտրվում են համապատասխան լեզվական միջոցներ առավելագույնս արդյունավետ հաղորդում կառուցելու նպատակով: Իսկ տեքստում «ավելորդաբանության անհրաժեշտ մակարդակը» պայմանավորված է մի շարք գործոնների ազդեցությամբ, որոնք են՝ խոսքային իրադրությունը, համատեքստը, լեզվի կառուցվածքը, տարբեր խոսքային միավորների գործածությունը և այլն:

7. Յնարավոր թյուրըմբռնումից խուսափելու նպատակով հարկ ենք համարում նշել, որ «ներակայում» ասելով՝ նկատի ունենք տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու արդյունքում ներիմաստի ձևավորման գործընթացը: Այս դեպքում «ներակայում» բառը չպետք է ընկալվի որպես ներակայույթի (implicature) հոմանիշ, որը համարվում է ներիմաստի տեսակ:

8. Ուշադրության է արժանի նաև Մ.Վ. Նիկիտինի՝ «ներակա» տերմինի մեկնաբանությունը: Այսպես՝ նա տարբերակում է տեղեկատվության նշանային և ոչ նշանային աղբյուրները: Ընդ

որում, դժվար չէ նկատել, որ նշանային աղբյուրները վերաբերում են տեղեկատվության ներկայացման արտակաձևին, իսկ ոչ նշանային աղբյուրներ ասելով՝ նա նկատի ունի ներհմաստը: Այնուհետև, ելնելով ներհմաստի ամենաընդհանուր սահմանումից, այն է՝ որպես հաղորդակցական ակտի ուղղակիորեն չարտահայտված, բայց գիտակցվող իմաստ, Մ.Վ. Նիկիտինն առանձնացնում է կանխամտածված և ոչ կանխամտածված ներակա իմաստները՝ առաջին տեսակը նույնացնելով ենթատեքստի հետ (Никитин 1988):

9. Վ.Խ. Բաղդասարյանը նշում է, որ բանավոր և գրավոր խոսքում գոյություն ունի չգրված օրենք, համաձայն որի՝ մարդիկ ձգտում են արտահայտել և փոխանցել որքան հնարավոր է շատ մտքեր՝ հնարավորինս քիչ լեզվական միջոցներ օգտագործելով, ինչը ծառայում է տեղի, ժամանակի և էներգիայի տնտեսմանը: Այս իմաստով կարելի է խոսել խոսքում լեզվական տնտեսման սկզբունքի գոյության, այսինքն՝ լեզվի գործառության ժամանակ լեզվական միջոցները խնայողաբար գործածելու ձգտման մասին: Այս դեպքում ներհմաստը հանդես է գալիս որպես այդ սկզբունքի իրացման արդյունավետ միջոց: Ներակա իմաստները խոսքին տալիս են խորություն, բազմաշերտություն, ներքին հարստություն՝ այն դարձնելով առավել սեղմ, տնտեսող և բովանդակալից (Багдасарян 1983: 11):

10. Այնպիսի հաղորդակցական ակտը, որտեղ հասցեագրողի գլխավոր նպատակը ներակա տեղեկատվության հաղորդումն է, կարելի է համեմատել սառցաբեկորի հետ, որի՝ ջրից դուրս ցցված, երևացող մասը արտակա կերպով ներկայացված տեղեկատվությունն է, իսկ ստորջրյա հատվածը՝ ներական (Мороз 1971: 9):

11. Ըստ Գ.Վ. Գլուխովի և Ս.Ս. Կոմարովայի՝ տեքստատեղծման տեքստը նկատման այսպիսի երկկողմանի (բովանդակությունից ձև, ձևից բովանդակություն) վերլուծությունը թույլ է տալիս առավել ճշգրիտ կերպով սահմանել այս երկու փոխկապված երևույթների՝ ներհմաստի ձևավորման և խտացման տեղն ու դերը հաղորդակցության գործընթացում (Глухов, Комарова 2004: 49):

12. Այս առումով Ն.Ն. Մատրոսովան առանձնացնում է տնտեսում-ավել որդաբանություն կարգի իրացման վրա ազդող

հոգել եզվաբանական գործոնները, որոնց շարքին է դասոււմ խոսողի և ունկնդրի շահերի տարբերությունը: Մասնավորապէս՝ խոսողը ստեղծոււմ է տեքստը՝ առաջնորդվելով համատեքստով և խոսքային իրադրությամբ, մինչդեռ ունկնդիրը վերծանոււմ է տեքստը՝ այդ իրադրության վերստեղծման նպատակով: Խոսողի կողմը ունի համադրական/սինթետիկ, իսկ ունկնդրի կողմը՝ վերլուծական/անալիտիկ բնույթ: Ունկնդիրը շահագրգռված է, որ ստացվող հաղորդումն ավելցուկային տարրեր պարունակի, ինչը հակադրվոււմ է խոսողի՝ ջանքերի տնտեսման ձգտմանը (Matrosova 2004: 7): Հոգեբանական գործոնների խմբին Ն.Ն. Մատրոսովան վերագրոււմ է ասույթի (տեքստի) ստեղծման և ընկալման հոգեբանական կանոնները, տեղեկատվության հաղորդման և ընդունման գործընթացում խոսողի և ունկնդրի մտածական գործողությունները, ինչպէս նաև որոշակի ծավալով տեղեկատվությունն հաղորդելու և ընդունելու հնարավորությունը՝ հիշողության կանոններին համապատասխան (Matrosova 2004: 7): Վերոնշյալ առաջին երկու գործոնները Ն.Ն. Մատրոսովայի առանձնացրած հոգել եզվաբանական գործոնների հետ միասին մենք դիտարկոււմ ենք խոսքման՝ որպէս տնտեսման սկզբունքի իրացման միջոցի ընդհանուր հոգել եզվաբանական հիմքերի շարքում:

13. Հին կամ հայ տնի տեղեկատվությունը կարող է վերաբերել ա) համատեղ և հենքային գիտելիքների պաշարին, որոնք լրացնոււմ են տեքստի իմաստային լակունաները, բ) այն տեղեկատվությանը, որը հաղորդվել է տեքստի նախորդ հատվածում, ինչպէս նաև գ) համատեքստից դուրս բերվող գիտելիքներին, որոնք տրամաբանական ամբողջականությունն են հաղորդում տեքստին:

14. Ինչպէս իրավամբ նկատոււմ է Վ.Ի. Կարասիկը, այս ցուցակը վերջնական չէ, կարող է լրացվել, ինչպէս նաև փոփոխվել (Карасик 1998):

15. Ինչպէս նշոււմ են Ս.Գասպարյանը, Գ.Մուրադյանը և Ն.Գասպարյանը, «գիտական արձակի գործառական հատկանիշները քննելիս հարկ է հաշվի առնել, որ այստեղ ներոճական բազմազանությունը մեծ է, և այն կարող է տատանվել

գիտահանրամատչելի հից մինչև խիստ գիտականը, որն էլ իր հերթին դրսևորվում է ենթաոճ-ժանր տիրույթում: Այստեղ արդեն սկսում են գործել ոճաժանրային առանձնահատկությունները և բովանդակությունն հիշող տարբերությունները...» (Գասպարյան, Մուրադյան, Գասպարյան 2011: 46):

ԳԼՈՒԽ 2

ԼԵԶԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒ ՄԼԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

2.1. Զեղչումը՝ որպես լեզվական տնտեսման շարահյուսական միջոց

Նախորդ գլխում իրականացված վերլուծությունները բավարար հիմք են տալիս անցնելու անգլերեն գիտական խոսքում լեզվական տնտեսման կոնկրետ դրսևորումների գործնական ուսումնասիրությանը: Մասնավորապես՝ սույն գլխի շրջանակներում իրականացնելու ենք շարահյուսական մակարդակում ներակա պրեդիկատիվ հարաբերության հաշվին տնտեսման գործառույթ իրականացնող կառույցների քննությունը լեզվագործաբանական և լեզվաճանաչողական մոտեցումների կիրառմամբ:

Չայտնի փաստ է, որ միևնույն նախադրույթը կարող է արտահայտվել ամենատարբեր միջոցներով [1]: Արտահայտման ձևերի այս բազմազանության մեջ հստակ առանձնանում են այսպես կոչված «տիպային» նախադրույթները, որոնք բնութագրվում են ընդհանրացված իմաստով և արտահայտման միջոցների նվազագույն կազմով: Այդօրինակ տիպային նախադրույթ կազմում են դատողության սուբյեկտը և պրեդիկատը: Դատողության սուբյեկտն ու պրեդիկատը կադապարող բառաձևերի միջև գոյություն ունեցող կապն ընդունված է անվանել պրեդիկատիվ հարաբերություն: Վերջինիս լեզվական արտահայտման ավանդական միջոցն այնպիսի երկկազմ կառույցն է, որը պարունակում է արտակա կերպով արտահայտված սուբյեկտ և պրեդիկատ: Իսկ միակազմ, ինչպես նաև ներակա պրեդիկատիվ հարաբերությունն պարունակող երկկազմ կառույցները դիտարկվում են որպես շարահյուսական մակարդակի

«ոչ տիպային», սահմանային իրողություններ: Վերջիններիս ուսումնասիրությունն ուղղակիորեն առնչվում է այնպիսի լեզվական երևույթի հետ, ինչպիսին է գեղչումը [2], որը հանդես է գալիս որպես շարահյուսական մակարդակում իրացվող խտացման ամենավառ օրինակներից մեկը լեզվի բոլոր գործառական ոճերում, այդ թվում՝ գիտական դիսկուրսում:

«*Լեզվաբանական տերմինների անգլալեզու բառարանում*» գեղչումը (ellipsis) սահմանվում է որպես «մի տերմին, որն օգտագործվում է քերականական վերլուծության մեջ՝ խոսելու այնպիսի նախադասության մասին, որի կառուցվածքի մի մասը բաց է թողնված տնտեսման, շեշտադրման կամ ոճական նկատառումներով, բայց կարող է վերականգնվել համատեքստից» (Ренц, Рыцарева 2003: 21): «*Լեզվաբանական տերմինների համառոտ բառարանում*» գեղչումը սահմանվում է որպես «ասույթի (տեքստի) որևէ տարրի բացթողում, որը կարող է հեշտությամբ վերականգնվել տվյալ խոսքային կամ իրադրային համատեքստում» (Васильева, Виноградов, Шахнарович 2003: 174): Չամադրելով այս երկու սահմանումները՝ նկատում ենք գեղչման մեկնաբանության հարցում լեզվաբանական գրականության մեջ առկա մի կարևոր տարբերություն, որն առնչվում է տվյալ լեզվական երևույթի կարգավիճակին, այն է՝ արդյո՞ք այն պատկանում է նախադասության, ասել է թե՛ լեզվի («...խոսելու այնպիսի նախադասության մասին, որի...»), թե՞ ասույթի, այսինքն՝ խոսքի ոլորտին («...ասույթի (տեքստի) որևէ տարրի բացթողում, որը...») [3]:

Ընդհանուր առմամբ նախադասությունն ունի վերացական բնույթ, այսինքն՝ այն գոյություն ունի ժամանակային հարաբերություններից դուրս և բնութագրվում է արտակա քերականական ձևակերպում ունեցող սուբյեկտ-պրեդիկատ հարաբերությամբ, մինչդեռ ասույթը դիտարկվում է որպես խոսքային իրադարձություն որոշակի ժամանակային սահմաններում: Այսինքն՝ այն ստեղծվում է որևէ մեկի կողմից որոշակի ժամանակային տիրույթում (Реунова 2000: 18) կամ որոշակի իրադրության մեջ: Այլ կերպ՝ նախադասությունը լեզվի համակարգում գոյություն ունեցող պատրաստի կառույց է, որը խոսքաստեղծման գործընթացում հանդես է գալիս որպես

ձևաբանական-շարահյուսական ձևակերպման որոշակի կաղապար: Մյուս կողմից՝ գոյություն ունի տեսակետ, որ զեղչում պարունակող կառույցները ստեղծվում են խոսքաստեղծման գործընթացում որևէ մեկի կողմից՝ տվյալ խոսքային իրադրության առանձնահատկություններով պայմանավորված և դրանց համապատասխան: Յետևաբար, այս նկատառումից ելնելով, որոշ լեզվաբաններ հակադրվում են զեղչման ավանդական մեկնաբանությանը (այն է՝ որպես լեզվի համակարգի երևույթ)՝ փոխարենն առաջարկելով զեղչված կառույցները դիտարկել որպես խոսքային միավորներ: Օ.Ի. Ռեուևովան նկատում է. «Կարելի է խոսել զեղչված և չզեղչված ասույթների, այլ ոչ թե զեղչված և չզեղչված նախադասությունների մասին: Լեզվի համակարգում չկան զեղչված կառույցներ, քանի որ դահակասում է լեզվական միավորների բուն էությունը, որոնց գոյությունը ժամանակից և տարածությունից դուրս է» (Рейнова 2000: 19): Անշուշտ, ցանկացած ասույթ հաղորդակցության գործընթացում իրացվում է նախադասության կառուցվածքի միջոցով: Սակայն եթե նախադասության համար առաջնային է կառուցվածքը սուբյեկտ-պրեդիկատ փոխարարություն ձևական արտահայտման (ենթակա-ստորոգյալ) տեսանկյունից, ապա ասույթը դիտարկվում է իմաստի ստեղծման և հաղորդման հնարավորության կամ անհնարինության տեսանկյունից: Այսինքն՝ այս դեպքում առաջնային են ասույթի իմաստաստեղծիչ և իմաստազատիչ հատկությունները: Այնհայտ է, որ զեղչված կառույցները, հանդես գալով որպես տեղեկատվության որոշակի հատված ներակա կերպով հաղորդելու միջոց, գլխավորապես ծառայում են իմաստաստեղծմանն ու իմաստազատմանը, ինչն իր հերթին արդյունավետ հաղորդակցության ապահովման գրավական է: Բացի այդ, դրանք ստեղծվում են որևէ մեկի կողմից որևէ ժամանակ՝ հաղորդակցության իրադրային առանձնահատկություններին համապատասխան: Յետևաբար զեղչված կառույցներն ունեն բոլոր այն հատկությունները, որոնք թույլ են տալիս դրանք դիտարկել ասույթի մակարդակում:

Չակառակ տեսակետի կողմնակիցները զեղչումը որպես լեզվի համակարգի երևույթ դիտարկելը հիմնավորում են այն փաստով, որ

կարելի է առանձնացնել ստանդարտ իրավիճակների մի ամբողջ շարան, որտեղ սովորաբար գործածվում են զեղչված կառույցները: Նրանք զեղչված նախադասությունները դիտարկում են որպես անփոփոխ բնույթ ունեցող կառույցներ, ինչը դրսևորվում է այդ կառույցների՝ հաղորդակցության որոշակի ստանդարտ արտաքին հանգամանքներին և լեզվական ձևերին մշտապես հատուկ լինելու փաստի միջոցով (Kazaryan 2005, Halliday 1976, 2004):

Ըստ երևույթին, տվյալ երկու մոտեցումները վերաբերում են զեղչում երևույթի երկու կողմերին, ինչը նշանակում է, որ զեղչման առավել համապարփակ և գիտականորեն հիմնավորված մեկնաբանությունը պետք է հիմնված լինի ոչ թե այս մոտեցումները միմյանց հակադրելու, այլ դրանք համադրելու և մեկը մյուսով լրացնելու վրա: Խոսքը վերաբերում է զեղչման երկու տեսակներին: Մասնավորապես՝ առաջին դեպքում գործ ունենք իրադրային կամ համատեքստային զեղչման հետ, երբ զեղչված կառույցները խոսակիցների խոսքային գործունեության անմիջական արդյունքն են՝ պայմանավորված կոնկրետ հաղորդակցական ակտի առանձնահատկություններով և պարփակված տվյալ իրավիճակի ու ժամանակի սահմաններում: Յետևաբար իրադրային կամ համատեքստային զեղչման դեպքում մեզ համար առավել ընդունելի է «զեղչված/չզեղչված ասույթ» տերմինը: Մինչդեռ երկրորդ դեպքում ակնհայտորեն գործ ունենք համակարգային (հարացուցային) զեղչման հետ, որը պետք է դիտարկել լեզվի համակարգի մակարդակում կամ հարացուցային հարաբերությունների տեսանկյունից: Ասվածից հետևում է, որ համակարգային զեղչման դեպքում մենք առավել հակված ենք գործածել «զեղչված/չզեղչված նախադասություն» տերմինը:

Չզեղչված կառույցների կարգավիճակը լեզու-խոսք երկատման տեսանկյունից հստակեցնելուց հետո տեղին է անդրադառնալ զեղչված կառույցների տեղին ու դերին այսպես կոչված «բաց թողնված» կամ «կրճատված» բաղադրիչներ պարունակող կառույցների համակարգում: Ելնելով մեր ուսումնասիրության առանձնահատկություն-ներից՝ մեր խնդիրն է հստակ տարբերակում մտցնել, մի կողմից, զեղչման, մյուս կողմից՝ այնպիսի համանման

լեզվական երևույթների միջև, ինչպիսիք են անավարտ ասույթները և միակազմ նախադասությունները [4]: Բանն այն է, որ վերոնշյալ լեզվական երևույթները միավորվում են մեկ դաշտում այն ընդհանրության շնորհիվ, որ դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է լեզվական կամ խոսքային կառույցի այնպիսի կաղապար, որին հատուկ է բազմազան լեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությամբ կառուցվածքի այս կամ այն բաղադրիչի բացթողում կամ հեռացում: «Յեռացում» կամ «Էլիմինացիա» տերմինը, որը ծագել է ֆրասերեն *elimination` վերացում, հեռացում* բառից, բավականին լայն հասկացույթ է, որն ընդգրկում է լեզվական կառույցների վերոնշյալ բոլոր տեսակները, որոնց մենք առանձին-առանձին կանդիդատնանք զեղչման` որպես լեզվական տնտեսման միջոցի լուսաբանման տեսանկյունից [5]:

Ինչպես նշում է Լ.Գ. Ղազարյանը, ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված է այն տեսակետը, որ զեղչված և անավարտ նախադասությունները կառուցվածքի և իմաստային ավարտունության/իարժեքության առումով տարբեր կառույցներ են (Kazaryan 2005: 83) [6]: Դա նշանակում է, որ այս տարբերակման հիմքում է ընկած է նախադասության ավարտունության/իարժեքության չափանիշը, ընդ որում` խոսքը ավարտունության/իարժեքության երկու տարբեր հարթությունների մասին է, այն է` 1. կառուցվածքային ավարտունություն/իարժեքություն և 2. իմաստային ավարտություն/իարժեքություն: Դասական պատկերացմամբ կառուցվածքային առումով ավարտուն կամ լիարժեք կարող է համարվել այն նախադասությունը, որի կառուցվածքում արտակալերարվ ներկայացված են ինչպես սուբյեկտը (որպես նախադասության ենթակա հանդես եկող բառաձևի միջոցով), այնպես էլ պրեդիկատը (որպես նախադասության ստորոգյալ հանդես եկող բառաձևի միջոցով): Սակայն հարկ է նշել, որ պրեդիկատիվ հարաբերությունն իր բնույթով այնքան ուժեղ շարահյուսական կապ է, որ այն գործում է անգամ այդ կապը ստեղծող երկու բաղադրիչներից որևէ մեկի ներակայված լինելու դեպքում, ինչն անշուշտ զեղչված կառույցների բնորոշ և տարբերակիչ

առանձնահատկությունն է: Եվ այս դեպքում միայն մեկ բառածևի գոյությունը նախադասության կառուցվածքում, լինի դասուբյեկտի, թե պրեդիկատի դեր կատարողը, բավարար է, որպեսզի խոսքի հասցեատերը տվյալ բառածևն ընկալի որպես ամբողջասույթի իրացում կամ ամբողջ նախադասության արտահայտություն: Ավելին, բազմաթիվ են դեպքերը, երբ զեղչված նախադասության ձևական կառուցվածքում միաժամանակ բացակայում են երկու գլխավոր անդամն էլ, սակայն դրանից հաղորդակցությունն ամենևին չի տուժում, քանի որ խոսքի հասցեատերն այդպիսի նախադասությամբ իրացված ասույթն ընկալում է հենց այնպես, ինչպես որ վերջինիս ընկալումը ենթադրվում և կանխատեսվում էր խոսողի կողմից: Նշանակում է՝ տվյալ դեպքում անավարտությունը կամ ոչ լիարժեքությունը վերաբերում է միայն նախադասության կառուցվածքին, մինչդեռ իմաստային առումով վերջինս միանգամայն լիարժեք և ավարտուն է: Ներկա պրեդիկատի վ հարաբերությունն այս դեպքում վերականգնվում է նախորդող կամ հաջորդող համատեքստի, ինչպես նաև խոսքային իրադրության շնորհիվ: Օրինակ՝

*On the one hand, there is the culture of the local courthouse, the working norms of different social and interest groups and professional associations, the networks of individuals involved in pursuing, avoiding, or mediating disputes; **on the other, international institutions and regulators and the so-called “third cultures” of international trade, communication networks, and other transnational processes.** (N.Th.L.C.: 12)*

Գիտական հոդվածի տեքստից վերցված այս օրինակը լուսաբանում է, թե ինչպես է հոդվածի հեղինակը, զեղչելով ստորոգյալը, ընդգծում հակադրությունը, որ առկա է տվյալ ասույթով ներկայացված իրողությունների միջև: Մասնավորապես՝ հեղինակի նպատակը տեղական իրավական մշակույթի (“...the culture of the local courthouse, the working norms of different social and interest groups and professional associations...”) և միջազգային ասպարեզում տիրող իրավիճակի (“...international institutions and regulators and the so-called “third cultures” of international trade...”) միջև առկա հակասությունների մասին խոսելն է: Ուստի նա նախընտրում է արտակալ երպով չնշել երկրորդ

համադաս նախադասության (“...on the other...”) ստորոգյալը՝ որպես տվյալ ասույթի տեղեկատվական կառուցվածքում արդեն հայտնի բաղադրիչ /theme, topic/, որպեսզի ընթերցողի ուշադրությունն ամբողջությամբ հրավիրի ասույթի տեղեկատվական կառուցվածքում նոր բաղադրիչի /rheme, comment/ վրա՝ դրանով հակադրությունն առավել ակնառու դարձնելով: Իսկ ընթերցողը հեշտությամբ նախորդ համադաս նախադասության (“On the one hand, there is...”) կառուցվածքից, որտեղ պրեդիկատն ունի արտակալ արտահայտություն՝ there is բառաձևով ներկայացված ստորոգյալի տեսքով, վերականգնում է ներկայված պրեդիկատը: Սրան նպաստում է նաև on the one hand...on the other կապական կապակցության իմաստի ընկալումը, որը ինքնին ենթադրում է համեմատություն, հակադրություն: Այստեղ գեղջումը միաժամանակ ծառայում է սերտորեն փոխկապված երեք նպատակի. թույլ է տալիս խուսափել կրկնությունից, դրա արդյունքում հնարավորություն է տալիս ընթերցողի ուշադրության կենտրոնում պահել տեղեկատվության նոր հատվածը, իսկ որպես վերջնաարդյունք ունենում ենք ձևական կառուցվածքի առումով հնարավորինս սեղմ և իմաստային առումով ավարտուն տեքստ: Վերջինս, մի կողմից, թույլ է տալիս տնտեսել տպագրական տարածքը, մյուս կողմից՝ ապահովում է փոխըմբռնում, հետևաբար և՛ արդյունավետ հաղորդակցություն խոսակիցների միջև:

*Update – ethics ‘just in time’: renew and update the deliberations and decisions. Choose the right time for the debate of a special issue, **not too early and not too late** (F.A.R.L.P.A.D.P.: 6)*

Երկրորդ օրինակում, որը նույնպես գիտական հոդվածից է, ներկա կերպով են ներկայացված ինչպես սուբյեկտը, այնպես էլ պրեդիկատը (“...not too early and not too late”), սակայն անմիջապես նախորդող տեքստից (“Choose the right time for the debate of a special issue...”) ընթերցողի համար պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է որևէ խնդրի քննարկման համար ճիշտ ժամանակ ընտրելուն: Հետևաբար, հենվելով նախորդող համատեքստի իմացության վրա, ընթերցողը մտովի վերականգնում է տվյալ նախադրույթի սուբյեկտն ու պրեդիկատը (“You/one should arrange the debate neither too early nor too late”): Եթե

հարցին մոտենանք հակառակ, այսինքն՝ խոսողի կամ հեղինակի տեսանկյունից, ապա վերջինս պրեդիկատիվ հարաբերությունը ներակա կերպով արտահայտելիս նույնպես հենվում է նախորդող տեքստում ամփոփված տեղեկությունների վրա: Մասնավորապես՝ վստահ լինելով, որ ընթերցողը նախորդող համատեքստից կվերականգնի ներակա սուբյեկտն ու պրեդիկատը և համարժեք կերպով կընկալի հաղորդումը՝ հեղինակը դիմում է տեղեկատվության խոացմանը՝ նպատակ ունենալով շեշտադրել, հաղորդման մնացած հատվածից առանձնացնել բովանդակային առումով կարևոր տեղեկատվությունը: Այլ կերպ ասույթի՝ զեղչում պարունակող հատվածում հեղինակը բացում է փակագծերը՝ բացատրելով, թե ինչ նկատի ունի ինքը՝ քննարկման «ճիշտ» ժամանակ ասելով: Եվ քանի որ նրա համար առավել կարևոր է այս հարցի պատասխանը, հեղինակը նախընտրում է զերծ մնալ դրանից բացի որևէ այլ կարգի տեղեկություն հաղորդելուց: Հետևաբար նա արտակա կերպով արտահայտում է միայն նոր տեղեկությունը՝ նախորդող համատեքստի միջոցով ներակա կերպով հաղորդելով հին, հայտնի տեղեկությունը: Տվյալ դեպքում զեղչման միջոցով տեղի ունեցող խոացումը, բացի նոր տեղեկության շեշտադրումից կամ առանձնացումից, այլ նպատակ էլ է հետապնդում. հատուկ ոճական երանգավորում է հաղորդում խոսքին՝ այն դարձնելով ավելի համոզիչ և ազդեցիկ:

2:47 That second red line is religion. But now religion and politics are connected, with the rise of such groups as the Muslim Brotherhood. And some people, at least, are starting to ask questions about the role of Islam in public and private life.

3:05 You know, as for that third red line, that off-limits subject, what do you think it might be?

*3:11 Audience: **Sex.***

*3:12 Shereen El Feki: **Louder**, I can't hear you.*

*3:13 Audience: **Sex.***

*3:14 SEF: **Again**, please don't be shy.*

*3:16 Audience: **Sex.** (F.L.T.S.S.: 2:47-3:16)*

Ի տարբերություն նախորդ երկու օրինակների, որտեղ պրեդիկատիվ հարաբերության վերականգնումը և հաղորդման

համարժեք ընկալու մը տեղի էր ունենում զեղչված ասույթին անմիջապես շրջապատող լեզվական համատեքստի շնորհիվ, այս օրինակը, որը բանավոր խոսքից է, լուսաբանում է, թե ինչպես է խոսքային իրադրությունը նպաստում զեղչված ասույթի պրեդիկատիվ հարաբերության վերականգնմանը և համարժեք ընկալմանը: Մեր կողմից առանձնացված հատվածում ելույթ ունեցողը խոսում է խայտաբղետ արաբական մշակույթը միավորող երեք ընդհանուր «կարմիր գծերից»՝ քաղաքականություն, կրոն և սեռականություն, որի մասին արաբական մշակույթում արմատացած պատկերացումները ելույթի բուն թեման են: Ելույթ ունեցողը քաղաքականությանն ու կրոնին մի քանի խոսքով անդրադառնալուց հետո փորձում է հող նախապատրաստել բուն թեմային անցնելու համար և որպես հռետորական հնարք կիրառում է հարց ու պատասխանի մեթոդը՝ անմիջապես դիմելով հանդիսատեսին և վերջինիս հետ երկխոսության մեջ մտնելով: Ելույթ ունեցողն առաջին անգամ հարցով դիմում է հանդիսատեսին, ինչից հետո դառնում է բավականին ցածր և ոչ այնքան հասկանալի ձայնով պատասխան (3:05 SEF “...what do you think it might be?” - 3:11 Audience: “Sex.”): Դրանից հետո ելույթ ունեցողը մի քայլ մոտենում է հանդիսատեսին, ձեռքը մոտեցնում ականջին և համապատասխան հնչերանգով ասում՝ Louder, I can't hear you, ինչին երկրորդ անգամ է հաջորդում նույն պատասխանը՝ Sex: Ինչպես տեսնում ենք, ելույթ ունեցողը արտակա կերպով խնդրանք չի արտահայտում՝ պատասխանը ավելի բարձր ձայնով կրկնելու մասին, ընդամենը մեկ բառ է օգտագործում՝ Louder: Սակայն գիտակցելով այն իրադրությունը, որում ընթանում է հաղորդակցությունը, ինչպես նաև հաշվի առնելով ելույթ ունեցողի շարժումները, ժեստերը, դիմախաղը և հնչերանգը՝ դառնում գտնվողները վերականգնում են զեղչված պրեդիկատիվ կապը, այն է՝ Speak louder, I ask you to speak louder*, և համարժեք արձագանքում: Ներակա հատվածի վերականգնմանը նպաստում է նաև հաջորդող համատեքստը, որն այս դեպքում բացատրության դեր է կատարում՝ I can't hear you: Դրանից հետո ելույթ ունեցողը երրորդ անգամ է խնդրում կրկնել պատասխանը՝ կրկին խուսափելով չզեղչված ասույթով դիմելուց (SEF: “Again, please don't be shy.”),

որպեսզի խոսքը լինի արագ և դինամիկ՝ հանդիսատեսին չհոգնեցնելու, ինչպես նաև վերջինիս ուշադրությունը պահելու համար: Դահլիճը ճիշտ նույն տրամաբանությամբ երրորդ անգամ է կրկնում պատասխանը:

Քննարկված օրինակներն ապացուցում են, որ զեղչված ասույթների դեպքում անավարտությունն ասվածը հարաբերական է, քանի որ վերաբերում է միայն նախադասության ձևական կառուցվածքին, մինչդեռ իմաստային առումով զեղչված ասույթները միանգամայն ավարտուն և ամբողջական են: Ավելին՝ անգամ կառուցվածքային անավարտությունը յուրաքանչյուր իրավիճակում ծառայում է որևէ կոնկրետ նպատակի՝ իրականացնելով այս կամ այն գործառույթը: Յետևաբար կարող ենք վստահաբար պնդել, որ զեղչված կառույցները միանգամայն տարբեր են բուն անավարտ ասույթներից: Որպեսզի տերմինաբանական շփոթմունք չառաջանա, պարզաբանենք նաև այն հարցը, թե կոնկրետ ինչպիսի ասույթներն ենք նպատակահարմար համարում անվանել անավարտ սույն ուսումնասիրության շրջանակներում:

Ինչպես արդեն նշել ենք, ասույթը, որպես կանոն, դիտարկվում է իմաստի ստեղծման և հաղորդման հնարավորության կամ անհնարիանության տեսանկյունից: Յետևաբար ասույթները կարող են լինել իմաստ պարունակող և անիմաստ: Վերջիններիս շարքում առանձնանում են այն ասույթները, որոնք այս կամ այն «աղմուկի» ազդեցության արդյունքում որևէ տեղեկատվություն չեն հաղորդում: «Աղմուկ» ասվածի տակ այս դեպքում կարելի է հասկանալ տարատեսակ հանգամանքների ազդեցությամբ խոսքային հոսքի ընդհատումը, ինչպես նաև խոսքային կամ մտավոր գործունեության անհամապատասխանությունը (Рейнова 2000: 20): Ասվածը լուսաբանելու նպատակով բերենք հետևյալ օրինակը Ն. Խոմսկու՝ Մասաչուսեթսի համալսարանում կարդացած դասախոսությունից.

Years later, McGeorge Bundy, who was the national security adviser for Kennedy and Johnson, in retrospect, he pointed out that it probably would have been a good idea to end the Vietnam War at that point, to pull out. Contrary to a lot of illusions, the Vietnam War was fought primarily to ensure that an independent Vietnam would

not develop successfully and become a model for other countries in the region. It would not -- to borrow Henry Kissinger's terminology speaking about Chile, we have to prevent what they called the -- what he called the "virus" of independent development from spreading contagion elsewhere. That's a critical part of American foreign policy since the Second World War -- Britain, France, others to a lesser degree. And by 1965, that was over. Vietnam was -- South Vietnam was virtually destroyed. Word spread to the rest of Indochina it wasn't going to be a model for anyone, and the contagion was contained. There were -- the Suharto regime made sure that Indonesia wouldn't be infected. (Ch.O.W.: 10:09-11:26)

Տվյալ դեպքում խոսքային հոսքն ընդհատող «աղմուկի» դերում հանդես է գալիս այն փաստը, որ խոսողը հաճախ ասում է մի բան, այնուհետև դադար է տալիս խոսքը շտկելու նպատակով՝ անավարտ թողնելով հնչեցրած ասույթը: Այս երևույթը հասկանալի պատճառով հատուկ է բանավոր խոսքին: Եթե գրավոր խոսքը կառուցելիս հեղինակն ունի անհրաժեշտ ժամանակը խոսքը մանրամասն պլանավորելու համար կամ ուղղելու անհրաժեշտության դեպքում կարող է ջնջել, նորից գրել՝ ընթերցողին մատուցելով վերջնական, անթերի տարբերակը, ապա կենդանի հնչող խոսքը ժամանակային առումով այդ հնարավորությունը չի ընձեռում: Ինչպես ասում են, «բերանից դուրս խոսքը հրեղեն ձիով էլ չես բռնի»: Այսպիսով՝ It would not, what they called the, Vietnam was, There were իմաստային առումով անավարտ ասույթներ են, որոնք որևէ իմաստ չեն պարունակում, հետևաբար տեղեկատվական առումով որևէ արժեք չեն ներկայացնում: Ուստի մենք նպատակահարմար ենք գտնում «անավարտ ասույթ» տերմինը գործածել իմաստային անավարտության և բնութագրվող կառույցների մասին խոսելիս, որոնք, քանի որ տեղեկատվություն չեն հաղորդում, չեն էլ կարող հանդես գալ որպես տեղեկատվության խոսքման միջոց, հետևաբար և չեն կարող դիտարկվել սույն ուսումնասիրության շրջանակում:

Այժմ անդրադառնանք զեղչված կառույցների և միակազմ նախադասությունների տարբերակման խնդրին: Այս դեպքում նույնպես որպես տարբերակման հիմք ծառայում է տվյալ կառույցների կառուցվածքային և իմաստային ավարտունության

հատկանիշը: Ինչպես արդեն նշել ենք, զեղչված կառույցների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ, չնայած կառուցվածքային անավարտությունը, իմաստային առումով դրանք միանգամայն ավարտուն և լիարժեք են: Պարզապես վերջիններիս համարժեք ընկալման համար պահանջվում է ձևականորեն չարտահայտված ներակա բաղադրիչների վերականգնում: Ի տարբերություն զեղչված կառույցների՝ միակազմ նախադասությունների դեպքում ոչ միայն չի պահանջվում որևէ բաղադրիչի վերականգնում, այլ և նման հնարավոր վերականգնումը կարող է նույնիսկ աղավաղել կառույցի իմաստային կառուցվածքը (Казарян 2005: 85): Այլ կերպ՝ հանգում ենք զրոյական նշան/զեղչում հակադրությունը, որի լույսի ներքո պետք է փնտրել միակազմ նախադասությունների և զեղչված կառույցների տարբերությունը: «Զրոյական նշան» և «զեղչում» հասկացությունների տարբերակման անհրաժեշտություն մասին առաջին անգամ խոսել է Ծ. Բալին 1955 թվականին: Նրա կողմից զրոյական նշանը սահմանվում է որպես շարույթի որոշակի հատվածում հանդես եկող մի նշան, որը, չնայած չունի նշանակիչ, բայց ունի որոշակի նշանակություն (Казарян 2005: 85-86): Այն բացառում է արտակա կերպով արտահայտված որևէ հնչյունային կամ գրային տարրով փոխարինման հնարավորությունն առանց նախադասության իմաստային կառուցվածքի փոփոխության: Մյուս կողմից՝ զեղչումը ենթադրում է առնվազն երկու հոմանիշ կառույցների գոյություն, հետևաբար և խոսողի համար ընտրության հնարավորություն: Ասվածը կարելի է լուսաբանել անգլերեն *Why not go there immediately?* միակազմ նախադասության օրինակով (Ilyish 1971): Անշուշտ, կարող ենք այս միակազմ նախադասությունը վերածել երկկազմ՝ *Why should you not go there immediately?* նախադասության՝ ավելացնելով համապատասխան ենթակա (*you*) և ստորոգյալ (*should not go*): Սակայն ստացված երկկազմ նախադասության իմաստային կառուցվածքը միանգամայն տարբեր է առաջին՝ միակազմ նախադասության իմաստային կառուցվածքից: Առաջին նախադասությամբ ներկայացված ասույթը, չնայած ձևով հարց է հիշեցնում, իրականում արտահայտում է առաջարկություն և կամ հորդոր: Մինչդեռ երկկազմ նախադասությունն արտահայտում է

ուղիղ հարց: Յետևաբար տվյալ դեպքում «գեղջված» ստորոգյալի մասին խոսք լինել չի կարող, քանի որ նախադասության ինչպես ձևական, այնպես էլ իմաստային կառուցվածքն ինքն իրենով ամբողջական և ավարտուն է և որևէ վերականգնման կարիք չի զգում: Ավելին՝ այսպես կոչված «վերականգնումը» տվյալ դեպքում փոխում է կառույցի իմաստը: Նշանակում է՝ միակազմ նախադասությունների դեպքում չենք կարող խոսել խոսցման մասին, քանի որ դրանք լեզվում գոյություն ունեն հենց այդ տեսքով՝ որպես լեզվի համակարգի փաստեր: Դրանք խոսողին ընտրության հնարավորությունն չեն տալիս. վերջինս հնարավորությունն չունի հնարավոր գուգահեռ, հոմանիշ ձևերից ընտրելու տվյալ հաղորդակցական ակտի պայմաններում առավել սեղմ և արդյունավետ տարբերակը: Ուստի միակազմ նախադասությունները չեն կարող ծառայել որպես տեղեկատվության խոսցման միջոց, հետևաբար նպատակահարմար ենք գտնում դուրս թողնել դրանք մեր ուսումնասիրության շրջանակից՝ ելնելով աշխատանքի բուն առարկայի առանձնահատկություններից: Սակայն հարկ է նշել, որ եթե անգամ դրանցում տեղեկատվության խոսցման նշույլներ նկատվում էլ են, ապա դրանք ուղղված են խոսքին հուզական երանգավորում հաղորդելուն կամ նկարագրության պատկերավորությունն ապահովելուն՝ որոշակի ոճական նկատառումներով պայմանավորված: Խոսքն այս դեպքում անվանական միակազմ նախադասությունների մասին է, որոնք, որպես կանոն, բնորոշ են գեղարվեստական գրականությանը: Յենց այս հանգամանքով է պայմանավորված այն փաստը, որ մեր կողմից դիտարկված 620 էջ (1 էջը՝ 1800 սիմվոլ հաշվարկով) գիտական աշխատություններում և դասախոսությունների ու բանավոր ելույթների գրադարձումներում միակազմ նախադասության որևէ օրինակ չի հայտնաբերվել:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք պնդել, որ գեղջված կառույցները, բուն անավարտ ասույթները և միակազմ նախադասությունները միանգամայն տարբեր կազմություններ են,

որոնց տարբերակման հիմքում ընկած է կառուցվածքային և իմաստային ավարտունության հատկանիշը, մասնավորապես՝

ա. գեղջված կառույցները անավարտ են կառուցվածքի տեսակետից և ավարտուն՝ իմաստային առումով,

բ. բուն անավարտ ասույթները բնութագրվում են ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային անավարտությամբ,

գ. միակազմ նախադասություններն ինչպես կառուցվածքի, այնպես էլ իմաստային առումով ավարտուն են:

Յամանման կազմության ներքին համակարգում գեղջված կառույցների կարգավիճակի սահմանումից հետո կարող ենք անդրադառնալ վերջիններիս՝ անգլերեն գիտական խոսքում իրականացրած կոնկրետ գործառույթներին՝ դրանց տեստակազմիչ և գործաբանական նշանակության գնահատման լույսի ներքո: Սույն ատենախոսության շրջանակներում ուսումնասիրված անգլերեն գիտական խոսքի գրավոր և բանավոր դրսևորումների վերլուծությունը վեր է հանել գեղջված կառույցների հետևյալ գործառույթները. ասույթի առավել կարևոր բաղադրիչների առանձնացում, իմաստը խթանելու և ճշգրտելու գործառույթներ, հուզական-գնահատողական գործառույթ:

Առաջին գործառույթի հիմքում, որից, կարելի է ասել, անցված են մյուս գործառույթները, ընկած է խոսողի՝ ասույթի իմաստատեղծման մեջ առավել նշանակալի դեր կատարող բաղադրիչներն առանձնացնելու ձգտումը, որը կատարվում է ասույթի ձևական կառուցվածքից պակաս կարևորություն ունեցող բաղադրիչները դուրս թողնելու հաշվին: Արդյունքում ասույթի կառուցվածքում շեշտադրվում է տեղեկատվության նոր հատվածը: Այսպես՝

*So at first they thought they were triggering some kind of laugh reflex, but no, they quickly realized they had found the points in her neocortex that detect humor, and she just found everything hilarious whenever they stimulated these points. "You guys are so funny just standing around," was the typical comment and they weren't funny, **not while doing surgery.** (K.G.H.Th.: 5:28-6:13)*

Տվյալ օրինակում, որը բանավոր էլույթից է, խոսողը պատմում է գիտափորձի մասին, որի ժամանակ փորձել են մարդու գլխուղեղի

կեղևում հայ տնաբերել հոլմորի ընկալման համար պատասխանատու հատվածը: Ամեն անգամ, երբ խթանել են այդ կետերը, գիտափորձի ենթարկվողը արձագանքել է ծիծաղելով: Վերջինս արձագանքել է՝ նշելով, որ գիտափորձ կատարողները շատ զվարճալի տեսք ունեն, մինչդեռ վերջիններս իրականում բավականին լուրջ տեսքով կենտրոնացած են եղել իրենց աշխատանքի վրա: Այս իրավիճակը նկարագրելիս խոսողը միտումնավոր կերպով առանձնացնում է ժամանակի պարագան (not while doing surgery)՝ այս կերպ ընդգծելով գլխուղեղի կեղևում հոլմորի ընկալման համար պատասխանատու կետերի խթանման արդյունքում գիտափորձի ենթարկվողի կողմից իրականության սուբյեկտիվ ընկալման և վերջինիս շուրջ տիրող օբյեկտիվ իրավիճակի միջև առկա հակադրությունը, այսինքն՝ այն փաստը, որ գիտափորձն իրականացնողներն ամենևին էլ զվարճալի տեսք չունեին: Իսկ օբյեկտիվ իրադրությունը արտահայտվում է ժամանակի պարագայի միջոցով, որը վերը նկարագրված հակադրությունն արտահայտելու նպատակով անջատված է նախադասության հիմնական մասից: Այդ անջատումը կատարվում է ամբողջությամբ զեղչված ենթակայով և մասնակի զեղչված ստորոգյալով արտահայտված ասույթի շնորհիվ: Մասնավորապես՝ not while doing surgery զեղչված ասույթում ձևականորեն արտահայտված չէ նախորդ ասույթի they were not funny պրեդիկատիվ հարաբերությունը: Այլ կերպ՝ վերոնշյալ հակադրությունն առավել ակնառու դարձնելու նպատակով խոսողն օգտագործում է կրկնակի ժխտում: Նա դառնում է զեղչման միջոցով, ինչը հատուկ նպատակ է հետապնդում, այն է՝ ասույթի ձևական կառուցվածքից բաց թողնելով կամ ներակա կերպով ներկայացնելով տեղեկատվության արդեն հայտնի հատվածը՝ they were not funny՝ շեշտադրել նոր, բովանդակային առումով կարևոր տեղեկատվությունը՝ while doing surgery: Լեզվական միջոցների նման ընտրությունը թույլ է տալիս առանձնացնել և շեշտադրել ասույթի՝ տեղեկատվական առումով առավել կարևոր բաղադրիչները, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում խոսողին խուսափել անհարկի կրկնությունից՝ այդպիսով նաև ժամանակ տնտեսելով և խոսքն ավելի դինամիկ, արդյունավետ ու տպավորիչ դարձնելով:

Ընտրված տեքստերում հայ տնաբերված գեղջ ման օրինակները վկայում են գիտական շարադրանքի հակիրճությունն ապահովելու հարցում գեղջված կառույցների նշանակության մասին: Յետևաբար կարելի է խոսել գեղջված կառույցների՝ տեղեկատվությունը խոացնելու և տեքստի ձևական կառուցվածքը սեղմելու մեծ ներուժի մասին, որը կարևոր տեքստակազմիչ նշանակություն ունի անգլերեն գիտական խոսքի կառուցման հարցում:

*Although the major religions of the region extoll premarital chastity, in a patriarchy, boys will be boys. Men have sex before marriage, and people more or less turn a blind eye. **Not so for women**, who are expected to be virgins on their wedding night -- that is, to turn up with your hymen intact. This is not a question of individual concern, this is a matter of family honor, and in particular, men's honor. (F.L.T.S.S.: 4:10-4:50)*

Տվյալ օրինակում գեղջումը թույլ է տալիս ելույթ ունեցողին խուսափել նախորդ համատեքստում հնչած մտքի անհարկի կրկնությունից՝ ապահովելով խոսքի հակիրճությունը: Մասնավորապես՝ հենվելով նախորդող համատեքստի վրա, որտեղ գործածվում է ամբողջական, չգեղջված կառույց (Men have sex before marriage, and people more or less turn a blind eye.), խոսողը հաջորդ նախադասության մեջ մասամբ ներակայում է պրեդիկատիվ հարաբերությունը՝ թողնելով միայն ժխտում արտահայտող մասնիկը՝ not-ը: Վերջինս, միանալով նախորդ նախադասության մեջ հանդես եկող ենթակա-ստորոգյալ շարահյուսական կապին փոխարինող so բառին, արտահայտում է ասույթի հիմքում ընկած պրեդիկատիվ հարաբերությունը՝ հնարավորությունն տալով խոսողին ընդամենը երկու բառից բաղկացած գեղջված ասույթի միջոցով արտահայտել մի ամբողջ ծավալուն միտք:

Ընտրված տեքստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գեղջված կառույցների վերոնշյալ հիմնական գործառնությունը՝ ասույթի՝ տեղեկատվական առումով առավել կարևոր իմաստային բաղադրիչի առանձնացումը, ընկած է երկու այլ՝ իմաստը ճշգրտելու և խթանելու գործառնությունների հիմքում, որոնցով ուսումնասիրվող կառույցները հաճախ հանդես են գալիս անգլերեն գիտական խոսքում: Այսպես՝

*So if we got good fisheries management in the European Union and, say, nine other countries, how much of our fisheries would we be covering? Turns out, European Union plus nine countries covers about two thirds of the world's fish catch. If we took it up to 24 countries plus the European Union, **we would up to 90 percent**, almost all of the world's fish catch. (S.S.O.F.W.: 3:29-4:48)*

Տվյալ օրինակը լուսաբանում է գեղջման՝ ասուլթի իմաստը ճշգրտելու գործառույթը: Ելույթ ունեցողը, խոսելով ձկնորսության և ձկնային պաշարների ճիշտ կառավարման քաղաքականության մասին, դիմում է ունկնդիրներին հռետորական հարցով (how much of our fisheries would we be covering?)՝ այսպիսով նախապատաստելով վերջիններիս այդ հարցի պատասխանին: Ելույթ ունեցողի նպատակն է ցույց տալ, թե օվկիանոսի պաշարների ճիշտ շահագործման դեպքում ձկնեղենի համաշխարհային պաշարների որտուկոսը հնարավոր կլինե՞ր օգտագործել սննդի նպատակով: Հարցի պատասխանը խոսողը հնչեցնում է հարցին հաջորդող երկրորդ նախադասության շրջանակներում՝ **we would up to 90 percent** գեղջված կառույցի միջոցով: Չեղջված կառույց օգտագործելով՝ խոսողը ասուլթի մակերեսային կառուցվածքից բաց է թողնում արդեն հայտնի տեղեկատվությունը, որը հեշտությամբ վերականգնվում է նախորդ՝ հարցական նախադասությամբ ձևակերպված ասուլթից: Մասամբ գեղջելով ստորոգյալը (we would...up to)՝ խոսողն ունկնդրի ողջ ուշադրությունը հրավիրում է նոր տեղեկատվության վրա (up to 90 percent), որը, ըստ էության, պարունակում է վերոնշյալ հարցի պատասխանը: Նախորդ ասուլթի համար տվյալ գեղջված կառույցը կատարում է իմաստը ճշգրտելու գործառույթ, այն է՝ ծառայում է նախորդ ասուլթով արտահայտված մտքի զարգացմանը և ավարտունության ձևավորմանը՝ այդպիսով մասնակցելով ողջ հաղորդակցական ակտի հաջող իրականացմանը:

*We still have an opportunity to not only bring the fish back but to actually get more fish that can feed more people than we currently are now. **How many more?** Right about now, we can feed about 450 million people a fish meal a day based on the current world fish catch... (S.S.O.F.W.: 5:41-6:29)*

Տվյալ օրինակը վեր է հանում հակառակ երևույթը, այն է՝ երբ գեղջված կառույցը ոչ թե ճշգրտում է նախորդող համատեքստում

արտահայտված միտքը, այլ նախապատրաստում է ունկնդիրին հաջորդող տեղեկատվության իմաստային կառուցվածքում, խոսողի մտադրությանը համապատասխան, առավել կարևոր բաղադրիչի ճանաչմանը, առանձնացմանը և ընկալմանը՝ այդպիսով կատարելով իմաստը խթանելու գործառույթ: Տվյալ օրինակում ելույթ ունեցողը, ցանկանալով ունկնդիրների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, թե որքանով կավելանա մարդկանց թիվը, որոնց ձկնորսության և ձկնաբուծության ճիշտ կազմակերպման դեպքում հնարավոր կլինի կերակրել, օգտագործում է զեղչված կառույց: Նախադասության ձևական կառուցվածքում զեղչելով ենթական ու ստորոգյալը՝ ներակայում է ամբողջ պրեդիկատիվ հարաբերությունը՝ թողնելով և ավելի ակնառու դարձնելով քանակական աճի իմաստն արտահայտող *How many more* որոշիչը: Վերջինս էլ իր հերթին խթանում է ունկնդիրների ուշադրությունը, հուշում վերջիններիս հաջորդող խոսքում փնտրել և առանձնացնել տվյալ հարցի պատասխանը, որը հանդես է գալիս որպես տեղեկատվության նոր, առավել կարևոր բաղադրիչ: Այսպիսով՝ տվյալ դեպքում զեղչումը՝ որպես լեզվական միջոցների տնտեսման դրսևորում, ծառայում է ասույթի իմաստի խթանմանը: Այն ուղղորդում է հաղորդակցության մասնակիցների ուշադրությունը դեպի ասույթի կառուցվածքում տեղեկատվական առումով առավել կարևոր բաղադրիչը, ինչն իր հերթին ապահովում է հաղորդակցության արդյունավետությունը:

Ինչպես լեզվի բոլոր մյուս գործառական ոճերում, գիտական խոսքում նույնպես զեղչումը հանդես է գալիս հուզական-արտահայտչական գործառույթով, որի վերջնական պատակն այս դեպքում, սակայն, ոչ թե խոսքի հասցեատիրոջ վրա գեղագիտական ազդեցություն գործելն է, այլ խոսքն ավելի պատկերավոր և դրանով իսկ ավելի համոզիչ ու ընկալելի դարձնելը: Այսպես՝

*Well, right about the same time, around 1950, concerns developed about the loss of Southeast Asia. That's what led the United States into the Indochina wars, the worst atrocities of the post-war period -- **partly lost, partly not.** (Ch.O.W.: 8:46-9:05)*

Տվյալ օրինակում, որը Ն. Խոմսկու դասախոսությունից է, վերջինս, խոսելով ԱՄՆ աշխարհակալ քաղաքականության մասին,

անդրադառնում է Յնդկաչինական պատերազմին՝ որակելով այն որպես հետպատերազմական շրջանի դաժանագույն վայրագություն, որի արդյունքում ԱՄՆ-ի կրած պարտությունը համարում է մասնակի: Վերջին փաստը շեշտադրելու, խոսքն ավելի տպավորիչ դարձնելու և դրանով իսկ ունկնդիրների ուշադրությունը պահելու նպատակով դիմում է գեղջման: Մասնավորապես՝ նախ գեղջում է նախորդող համատեքստից վերականգնելի արեդիկատիվ հարաբերությունը (...*Indochina wars...which were partly lost...**), ապա կրկնում է *partly* մակբայը՝ վերջինս երկրորդ անգամ գործածելիս խուսափելով նաև *lost* դերբայի գործածությունից և թողնելով միայն ժխտական *not* մասնիկը: Այսպիսով՝ իրար պես միավանկ և միևնույն [o] ձայնավորը պարունակող *lost* և *not* բառերը, առանձին-առանձին միանալով *partly* մակբային, բարեհնչություն և մեղեդայնություն են հաղորդում խոսքին՝ այն դարձնելով առավել պատկերավոր և դինամիկ: Միևնույն ժամանակ դրանք ունկնդիրների ուշադրությունը հրավիրում են պատերազմում կրած պարտության ոչ միանշանակ լինելու կարևոր հանգամանքի վրա: Այս օրինակը ցույց է տալիս նման հնարների կարևորությունը տվյալ դասախոսության պես երկարատև՝ մոտ 1 ժամ տևողությամբ ելույթների ժամանակ լսարանին չհոգնեցնելու և լսարանի ուշադրությունը պահելու, ինչպես նաև առանց այն էլ լայնածավալ և հագեցած նյութը ելույթին հատկացված կոնկրետ սահմանափակ ժամանակում տեղավորելու և հնարավորինս սպառիչ կերպով ներկայացնելու առումով:

Այսպիսով՝ գեղջումը, որը լեզվական կառույցի որևէ կառուցվածքայնորեն անհրաժեշտ տարրի ներակայումն է, ծառայում է տեղեկատվության խոացմանը: Մասնավորապես՝ որոշակի հաղորդակցական իրադրության շրջանակներում գեղջված կառույցները, հանդես գալով որպես տեքստակազմիչ տարրեր, իրականացնում են կոնկրետ հաղորդակցական-գործաբանական գործառույթներ՝ կարևոր բաղադրիչների առանձնացում, իմաստը խթանելու և ճշգրտելու գործառույթներ, ինչպես նաև հուզական-գնահատողական գործառույթ, որոնց զուգահեռ իրացվում է գեղջման՝ որպես լեզվական տնտեսման միջոցի գործաբանական

ներու ժը: Այս հանգամանքը թույլ է տալիս դիտարկել զեղչումը որպես գիտական անգլերենին բնորոշ՝ տեքստի տեղեկատվայնության ապահովմանն ուղղված շարահյուսական գործընթաց:

2.2. Երկրորդական ստորոգում պարունակող կառույցները՝ որպես լեզվական տնտեսման դրսևորում

Ինչպես նշել ենք, գիտական խոսքին բնորոշ է շարադրանքի սեղմությանը ունենու հակիրճությունը, ինչը կապված է գիտության զարգացման ընդհանուր միտումների հետ: Գիտական շարադրանքի այս առանձնահատկությունը դրսևորվում է ասույթի ձևական կառուցվածքի կրճատման և իմաստային բեռնվածության գուգահեռաճի միջոցով: Մյուս կողմից՝ գոյություն ունի նաև գիտական տեքստի շարահյուսական կազմակերպման հակառակ միտում, այն է՝ հնարավորինս մանրամասնել ասույթը, ինչն իր հերթին բերում է նախադասության շարահյուսական կառուցվածքում իմաստային հարաբերությունների արտակա արտահայտմանը: Հակառակ ուղղությամբ գործող, բայց միաժամանակ իրար փոխընդդրացնող այս երկու միտումներով էլ հենց պայմանավորված է, մի կողմից, դերբայական դարձված պարունակող պարզ ընդարձակ, մյուս կողմից՝ բարդ նախադասությունների բարձր հաճախականությունը գիտական դիսկուրսում: Ինչպես նկատում են Գ.Յ. Սուլգանիկը և Տ.Ս. Դրոնյանան, գիտական դիսկուրսում գերակշռում են բարդ և պարզ ընդարձակ նախադասությունները՝ որպես հեղինակային մտքի բարդ փաստարկման արդյունք, պատճառահետևանքային հարաբերությունների արտահայտման միջոց, որը նպաստում է տեղեկատվության՝ հնարավորինս սեղմ, հետևաբար և արդյունավետ ձևով հաղորդմանն ու պահպանմանը (Солганик, Дроняева 2005: 40): Բարդ նախադասության տարբեր մասերի միջև առկա են բազմազան իմաստային հարաբերություններ, այդ թվում՝ ժամանակային, պատճառահետևանքային, պայմանի և այլն: Բարդ ստորադասական նախադասությունները, որոնք հանդես են գալիս որպես տարբեր փոխկապակցված երևույթների միջև առկա իմաստային հարաբերությունների արտահայտման լեզվական միջոց, նաև ապահովում են շարադրանքի տրամաբանականությունը՝ թույլ

տալ ով հիմնավորել և փաստարկել առաջ քաշված դրույթը, հետևաբար և նպաստում են մտքի հստակ շարադրմանը (Солганик 2007: 216): Նշված առանձնահատկությունները է պայմանավորված բարդ ստորադասական նախադասությունների և վերջիններիս հետ շարահյուսական հոմանշության հարաբերության մեջ գտնվող՝ դերբայական դարձված պարունակող պարզ ընդարձակ նախադասությունների կարևորությունը գիտական շարադրանքի համար: Քանի որ, մեր ուսումնասիրության առանձնահատկությունն ինչ էլ նեղ, մեզ համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում դերբայական դարձվածները, հարկ ենք համարում նախևառաջ հստակեցնել դրանց կարգավիճակը տարբեր բաղադրիչների միջև բարդ իմաստային հարաբերություններ արտահայտող շարահյուսական կառույցների համակարգում: Մասնավորապես՝ մեր խնդիրն է հստակեցնել դերբայական դարձված պարունակող նախադասությունների տեղն ու դերը մեկից ավելի ստորոգում ունեցող կառույցների շարքում, ինչը թույլ կտա համեմատել դրանք բարդ նախադասությունների հետ շարահյուսական հոմանշության տեսանկյունից, որից հետո միայն կարող ենք քննարկել դերբայական դարձվածների՝ որպես էզվական տնտեսման միջոցների գործառույթները անգլերեն գիտական խոսքում:

Ինչպես նշում է Վ.Ա. Կուրդյուովը (Курдюмов 1999: 50), «ստորոգելիություն» տերմինն առաջին անգամ ներմուծել է Ա.Ս. Պեշկովսկին՝ այն նույնացնելով նախադասության մեջ բայ-ստորոգյալի առկայության հետ [7]: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ չնայած ստորոգելիությունը, որը ստորոգման արտահայտությունն է, ավանդաբար վերագրվում է ստորոգյալին՝ որպես նախադասության գլխավոր անդամին, որևէ հատկանիշ կարող է ենթակային վերագրվել նաև նախադասության այլ անդամների միջոցով, որոնք կարող են արտահայտել սուբյեկտ-պրեդիկատ հարաբերություններ (Старикова 1985: 35) [8]: Այսպիսով՝ կարող ենք պնդել, որ և՛ սուբյեկտը, և՛ պրեդիկատը կարող են արտահայտվել արտակա և ներակա ձևերով: Վերջին դեպքում կարող ենք խոսել երկրորդական ստորոգման (secondary predication) մասին, որը, որպես կանոն, արտահայտվում է բայի անդամ ձևերի միջոցով: Վերջիններս,

ինչպես նշում է Ե.Ն. Ստարիկովան, իրենց գործառնության ին հնարավորություններով ամենևին չեն զիջում բայի դիմավոր ձևերին, իսկ որոշ դեպքերում նույնիսկ իրացնում են այնպիսի նուրբ իմաստային տարբերություններ, որոնք հնարավոր չէ արտահայտել բայի դիմավոր ձևերի միջոցով (Старикова 1985: 37): Ներակա ստորոգման միջոցով սուբյեկտին հատկանիշ վերագրող երկրորդական պրեդիկատը կարող է հանդես գալ որպես նախադասության ինքնուրույն անդամ, ինչպես նաև կարող է կազմել բարդ նախադասության մաս (Степанян 1997: 5): Այստեղ հանգում ենք ներակա կամ երկրորդական ստորոգում արտահայտող կառույցների, տվյալ դեպքում՝ անգլերեն գիտական խոսքում որպես լեզվական տևտեսման միջոց հանդես եկող դերբայական դարձվածների կարգավիճակի որոշարկման խնդրին: Հարցադրումը հետևյալն է. արդյո՞ք դրանք պետք է դիտարկել որպես պարզ ընդարձակ նախադասության անդամ հանդես եկող ինքնուրույն պրեդիկատային միավորներ, թե՞ բարդ նախադասության բաղկացուցիչ մաս կազմող ինքնուրույն նախադասություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարզ նախադասությունը բնութագրվում է մեկ պրեդիկատիվ գծի առկայությամբ, մինչդեռ բարդ նախադասությանը բնորոշ է երկու և ավելի ստորոգում, դժվար է միանշանակ կարգավիճակ տալ դերբայական դարձվածներին, քանի որ վերջիններս, լինելով ներակա կամ երկրորդական ստորոգման կրող, բազմապատկում են նախադասության պրեդիկատիվ գիծը՝ լրացուցիչ պրեդիկատիվ հարաբերություններ մոծելով նախադասության կառուցվածք: Մյուս կողմից, սակայն, ներակա ստորոգում արտահայտելով, դրանք չունեն արտակա կերպով արտահայտված ձևական ենթակա և ստորոգյալ, ինչն անհնար է դարձնում դրանց ինքնուրույն գործածությունը խոսքում:

Այնուամենայնիվ, լեզվաբանության մեջ ինչպե՞ս են որակվում դերբայական դարձված պարունակող նախադասությունները: Այս հարցը կարող է դասվել այն հարցերի շարքին, որոնք մինչ օրս միանշանակ պատասխան չեն ստացել: Այսպես՝ նախադասության կառուցվածքը երկրորդական ստորոգմամբ բարդացնող նմանատիպ կառույցները հաճախ անվանում են

կիսապրեդիկատիվ, իսկ կիսապրեդիկատիվ կառույց պարունակող նախադասությունը՝ կիսաբարդ (semi-complex/semi-composite) (Новик 2005: 123-124): Այս կապակցությամբ Գ.Ա. Չուրտովան նկատում է. «*Կիսաստորոգելիություն (полупредикативность)* տերմինն այնքան էլ հաջող ընտրված բառ չէ. այն հիշեցնում է դարոցական անեկդոտն այն մասին, որ թերակղզին (полуостров) երկու մասի բաժանված կղզի է» (Золотова 1995: 100): Վերջինս իրավամբ կարծում է, որ ցանկացած այսպես կոչված կիսապրեդիկատիվ միավոր իրականում պրեդիկատիվ է այդ բառի լրիվ իմաստով, պարզապես այդ միավորի արտահայտած ստորոգումը ներակա է: Իսկ ներակա ստորոգում արտահայտող պրեդիկատիվ կառույց պարունակող նախադասությունը համարվում է բազմապրեդիկատիվ նախադասություն: Այլ կերպ՝ կիսապրեդիկատիվ կառույցները երկրորդական ստորոգման կրող են, որը նախադասության մեջ գործում է արտակա կերպով արտահայտված հիմնական ստորոգմանը զուգահեռ: Վերջինիս հետ փոխազդելով՝ այն ձևավորում և արտահայտում է համապատասխան իմաստային հարաբերություններ, որոնք նույնական չեն երկու և ավելի արտակա ստորոգում պարունակող բարդ նախադասության (ստորադասական կամ համադասական)՝ բաղադրիչների (զլխավոր և ստորադաս կամ համադաս նախադասությունների) միջև առկա իմաստային հարաբերությունների հետ: Այս կապակցությամբ տեղին է նշել, որ կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները գտնում են, որ երկրորդական ստորոգում արտահայտող կամ կիսապրեդիկատիվ կառույցները նախադասությունների փոխակերպումներ են: Մենք, սակայն, ընդունելով վերոնշյալ կառույցների միջև առկա հոմանշության հարաբերությունը, երկրորդական ստորոգման կառույցները նախընտրում ենք դիտարկել ոչ թե որպես համապատասխան նախադասությունների փոխակերպումներ, այլ որպես միևնույն նախադրույթի ներկայացման առավել տնտեսող տարբերակ: Մեր այս դիրքորոշումը հիմնավորվում է նաև հոմանշության իրողության առանձնահատկությամբ, մասնավորապես՝ այն հանգամանքով, որ «հոմանիշները տարբեր հնչյունական, քերականական, կառուցվածքային ձևեր, կիրառության տարբեր ոլորտներ ունեցող

լեզվական այն միավորներն են, որոնք արտահայտում են մոտ, մերձակա կամ երբեմն նույնիսկ նույնական իմաստներ: Լեզվի մեջ, ինչպես ընդունված է ասել, չեն կարող լինել ճիշտ նույն իմաստ ունեցող լեզվական ձևեր, ուստի և նույնական արտահայտությունն այս դեպքում կարող է սոսկ պայմանական լինել, քանի որ այս գուգահեռ ձևերը որոշ դեպքերում կուներենան առնվազն իմաստային, նրբերանգային կամ կիրառական այլ տարբերություններ: Այսինքն՝ հոմանշության դեպքում բառերը կամ քերականական ձևերը իրենց հիմնական իմաստներով համընկնում են, բայց արտահայտության ձևերով ու եղանակներով որոշակիորեն տարբեր են» (Եզեկյան 2005: 95): Այսպիսով՝ վստահաբար կարող ենք պնդել, որ երկրորդական ստորոգման կառույցները ոչ թե արտակա ստորոգում արտահայտող ստորադաս կամ համադաս նախադասությունների պարզ փոխակերպումներն են, այլ դրանց շարահյուսական հոմանիշները, որոնք տարբերվում են նուրբ իմաստային և կիրառական առանձնահատկություններով: Այսպես՝

*In Chapter 20, ‘Spatial reference in discourse’, Luna Filipović discusses spatial reference in a cross-linguistic perspective **focusing on its universal and language-specific aspects.** (J.A.C.H.P.: 16)*

Բերված օրինակում ընդգծված դերբայական դարձվածը նախադասության՝ արտակա ստորոգում պարունակող մասի հետ կապված է ձևի և հավելման իմաստային հարաբերություններով, որոնք տվյալ համատեքստում հանդես են գալիս միաձուլված կերպով: Եթե փորձենք դերբայական դարձվածը (focusing on its universal and language-specific aspects) փոխարինել արտակա ստորոգում պարունակող համապատասխան հոմանիշ նախադասությամբ (and focuses on its universal and language-specific aspects*), բայի անդեմ՝ –ing ձևի փոխարեն դիմավոր բայ օգտագործելու արդյունքում կներկայացվեն իրարից անկախ ընթացող հավասարազոր գործողություններ (Luna Filipović discusses spatial reference... and focuses on its universal and language-specific aspects*): Այսինքն՝ կստացվի, որ տվյալ լեզվաբանը առանձին դիտարկում է տարածական վերաբերությունը (Luna Filipović discusses spatial reference...), այնուհետև անդրադառնում դրա համընդհանուր և կոնկրետ լեզվին քննորոշ հայեցակերպերին (focuses on its universal and language-specific

aspects*): Մինչ դեռ հեղինակը, դերբայ ական դարձված օգտագործելով, մտադրություներ ունի ցույց տալու, որ տվյալ լեզվաբանը խնդիրը դիտարկում է նշված երկու հայեցակետերի տեսանկյունից: Այսինքն՝ դերբայ ական դարձվածը, մեկ բառածևում խտացնելով մեկից ավելի իմաստներ, թույլ է տալիս արտահայտել այնպիսի իմաստային-տրամաբանական հարաբերություններ, որոնք կորչում են արտակա ստորոգում պարունակող հոմանիշ կառույցի գործածության դեպքում: Յետևաբար առանց նախադասության իմաստային կառուցվածքի խախտման մեկը մյուսով փոխարինելը, ըստ էության, հակասում է հոմանշության բուն էությանը: Յենց լեզվական տնտեսման սկզբունքով պայմանավորված՝ բացարձակապես նույնական ձևեր լեզվում գուցա հեռու գոյություն ունենալ չեն կարող, ինչը նշանակում է, որ թեկուզև աննշան չափով, բայց նախադասության իմաստային կառուցվածքն անպայմանորեն փոփոխություններ կրում է փոխարինման դեպքում:

Երկրորդական ստորոգում պարունակող կառույցների կարգավիճակի հստակեցումը կապված է բազմաստորոգելիության իրողության հետ: Ա.Գ. Չոլոտովան վերջինս սահմանում է որպես մեկ հաղորդակցական միավորի սահմաններում երկու կամ ավելի պրեդիկատիվ միավորների փոխադեցություն, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ է սուբյեկտ-պրեդիկատ փոխհարաբերությունն իր քերականական առանձնահատկություններով (ժամանակ, եղանակ, դեմք): Դրանք կարող են հանդես գալ միմյանցից անկախ կամ փոխկապված կերպով՝ հարաբերական նշանակությամբ (Золотова 1995: 102): Յետևաբար Ա.Գ. Չոլոտովան առաջարկում է նախադասությունները դասակարգել ոչ թե որպես պարզ և բարդ, այլ միապրեդիկատիվ (մեկ ստորոգում պարունակող) և բազմապրեդիկատիվ (երկու և ավելի ստորոգում պարունակող): Եթե հետևելու լինենք վերջինիս տեսակետին, պետք է երկրորդական ստորոգման կառույցներ (դերբայ ական դարձվածներով և այլն) պարունակող նախադասությունները համարենք բազմապրեդիկատիվ: Գոյություն ունի նաև հակառակ տեսակետը: Յամաձայն վերջինիս՝ քանի որ երկրորդական ստորոգման կառույցներն իրենց կառուցվածքում դիմավոր բայի

բացակայության պատճառով չեն կարող հանդես գալ որպես ինքնուրույն նախադասություն, այդպիսի կառույց պարունակող նախադասությունները համարվում են միապրեդիկատիվ, սակայն բազմանախադրույթային (полипропозитивные) (Фомина 2007: 7): Այլ խոսքով՝ երկրորդական կառույց պարունակող նախադասությունների միջոցով ներկայացվում են երկու կամ ավելի նախադրույթներ: Սակայն միայն մեկ ստորոգումն ունի արտակա քերականական ձևակերպում, մինչդեռ մյուս ստորոգումը կամ ստորոգումները ներկայացված են բայի անդամ ձևերի միջոցով, հետևաբար խոնարհված բայով արտահայտված ստորոգում պարունակող մասից անկախ, առանձին գործածություն չունեն [9]: Ավելին՝ դրանց իմաստը խոսքում իրացվում է միայն արտակա ստորոգման հետ փոխարարություն մեջ: Այլ կերպ ասած՝ երկրորդական ստորոգմամբ ներկայացված նախադրույթը չի կարող ինքնուրույն նախադասություն կազմել: Այն ներառվում է արտակա քերականական ձևակերպում ունեցող, առաջնային ստորոգմամբ արտահայտված նախադրույթ ներկայացնող նախադասության մեջ՝ այդպիսով բարդացնելով վերջինիս իմաստային կառուցվածքը: Այստեղ մենք հանգում ենք ձևի և բովանդակության հակադրամիասնության խնդրին: Մասնավորապես՝ նախադասության ձևական և իմաստային կառուցվածքները չեն կարող դիտարկվել իրարից առանձին, քանի որ բովանդակության պլանի ցանկացած միավոր պետք է ունենա իր ձևական արտահայտության համապատասխան միավորը (Bolinger 1952, 1977): Հետևաբար այն տեսակետը, թե երկրորդական ստորոգում պարունակող կառույց ներառող նախադասությունները երկու կամ ավելի նախադրույթ են ներկայացնում՝ լինելով միապրեդիկատիվ կամ պարունակելով մեկ ստորոգում, հերքվում է: Այսինքն՝ բազմանախադրույթային նախադասությունը նաև բազմապրեդիկատիվ է. այն պարունակում է երկու կամ ավելի ստորոգում: Ընդ որում, հիմնական նախադրույթն արտահայտվում է առաջնային, արտակա ստորոգման միջոցով, մինչդեռ երկրորդական ստորոգման միջոցով ներկայացված կախյալ կամ երկրորդական նախադրույթները խոսքում իրացվում են հիմնական նախադրույթի հետ սերտ կապի մեջ՝ արտահայտելով

իրականության տարբեր երևույթների, իրողությունների միջև բազմազան տրամաբանական կապեր:

Այսպիսով՝ դերբայական դարձվածներն արտահայտում են երկրորդական կամ ներակա ստորոգում, իսկ այն նախադասությունները, որոնցում դրանք հանդես են գալիս, մեկից ավելի ստորոգում պարունակող բազմանախորոյթային կառույցներ են: Ընդ որում, երկրորդական ստորոգումը միահյուսված է արտակա քերականական ձևակերպում ստացած առաջնային ստորոգմանը: Դանշանակում է, որ դերբայական դարձված պարունակող նախադասությունը միջանկյալ դիրք է գրավում պարզ և բարդ նախադասության միջև [10]: Բացի այդ, երկրորդական ստորոգման հաշվին նախադարձը հնարավորինս քիչ լեզվական միավորներով արտահայտելու միջոցով դերբայական դարձվածները ծառայում են տեղեկատվության խտացմանը: Այս հանգամանքը թույլ է տալիս դիտարկել դրանք որպես լեզվական տնտեսման միջոցներ, որոնք, ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, բավականին լայն գործածություն ունեն անգլերեն գիտական խոսքի բանավոր և, հատկապես, գրավոր դրսևորումներում՝ պայմանավորված գիտական շարադրանքի տեղեկատվական հագեցվածության, ինչպես նաև սեղմության ու կոնկրետության պահանջներով:

2.3. Դերբայական դարձվածների կիրառությունը որպես լեզվական տնտեսման միջոց

Ինչպես արդեն նշել ենք, շարահյուսական (քերականական) հոմանիշները չեն կարող միանգամայն նույնական լինել: Այսինքն՝ ձևական արտահայտության տարբերությունները անպայմանորեն բերում են բովանդակային տարբերությունների, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են գործառական տարբերությունների [11]: Չենց այս սկզբունքով առաջնորդվելով էլ սույն ուսումնասիրության շրջանակներում համարելու ենք դերբայական դարձվածները համապատասխան քերականական հոմանիշների հետ շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական մակարդակներում, ինչի արդյունքում հնարավոր

կլիսի վեր հանել դրանց՝ որպես լեզվական տնտեսման միջոցների գործառույթները անգլերեն գիտական խոսքում [12]:

Ինչպես ցույց է տալիս փաստական նյութի մեր վերլուծությանը, դերբայական դարձված պարունակող նախադասությունները բավականին լայն գործածություն ունեն անգլերեն գիտական դիսկուրսում: Դրանք հանդես են գալիս որպես իրականության բազմաբնույթ երևույթների և իրողությունների միջև կապերի վերաբերյալ տեղեկատվությունը հնարավորինս սեղմ կերպով հաղորդելու և պահպանելու, հետևաբար և գիտական շարադրանքի հակիրճությունն ու կոնկրետությունն ապահովելու արդյունավետ միջոց: Որպես այդպիսին՝ դերբայական դարձվածներն այդ կապերն արտահայտում են տարբեր իմաստային-տրամաբանական հարաբերությունների միջոցով, որոնք առկա են արտակա ստորոգում պարունակող գլխավոր մասի դիմավոր բայի և երկրորդական ստորոգման կառույցի անդամ բայի միջև: Ընդ որում, նշված հարաբերությունները դիտարկվում են հարաբերական ժամանակայնության համատեքստում, այն է՝ գործողությունների միաժամանակյա ընթացքի, մեկը մյուսին նախորդելու կամ հաջորդելու առումով, ինչպես նաև այսպես կոչված «գլխավոր» և «երկրորդական» գործողությունների հակադրության հենքի վրա (Маслов 1983: 42): Այս կապակցությամբ կարևոր է ընդգծել, որ բազմաթիվ լեզվաբանների կողմից առանձնացվում են նշված ժամանակային փոխհարաբերություններին զուգահեռ հանդես եկող տարբեր իմաստային-տրամաբանական հարաբերություններ (պատճառահետևանքային, պայմանի, ձևի, զիջման, վերաբերության, բնութագրման և այլն) (Бондарко 1984, Чубарян 2006, Talmay 2001, Бариева 2005, Недялков 2001, 2003, 2005, Касевич 1988):

Գոյություն ունեն տարբեր տերմիններ վերոնշյալ կառույցների միջոցով ներկայացված «իրավիճակների» անվանման համար: Մասնավորապես՝ Լ. Թալմին խոսում է այնպիսի կառուցվածքով նախադասությունների մասին, որտեղ ներկայացված են միմյանց հետ կապված «առաջնային» իրադարձությունը (Ground event) և «երկրորդական» իրադարձությունը (Figure event): Նման նախադասությունները, ըստ հեղինակի կողմից օգտագործվող

տերմինաբանության, ներկայացնում են «փոխկապված իրադարձություններ» (cross-related events), որոնք գտնվում են ժամանակային, պատճառի, զիջման, հավելման և միջարքայլ իմաստային հարաբերությունների մեջ (cross-event relations) (Talmy 2001: 345): Ակնհայտ է, որ Լ. Թալմին խոսում է արտակալամ առաջնային և ներակալամ երկրորդական ստորոգման կառույցներով ներկայացված հիմնական և երկրորդական իրողությունների կամ նախադրույթների մասին: Ընդ որում, արտակալամ ստորոգմամբ ներկայացված հիմնական իրողությունը կամ նախադրույթը համապատասխանում է Լ. Թալմի «առաջնային իրադարձությանը» (Ground event), իսկ ներակալամ ստորոգմամբ (տվյալ դեպքում՝ դերբայական դարձվածի միջոցով) ներկայացված երկրորդական իրողությունը կամ նախադրույթը համապատասխանում է Լ. Թալմի «երկրորդական» իրադարձությանը (Figure event): Դրանցյունը անտուկ կապի և փոխազդեցության հիման վրա ձևավորվում է բազմանախադրույթային նախադասության ընդհանուր իմաստային կառուցվածքը: Երկրորդական ստորոգման կառույցների միջոցով գիտելիքների ներկայացման ճանաչողական հիմքերի նկարագրության համար կիրառվում են նաև «միկրոիրադարձություն» և «մակրոիրադարձություն» տերմինները (Croft, Cruse 2004, Langacker 1991, Болдырев 2002): Մակրոիրադարձությունը մեկնաբանվում է որպես մտավոր մակարդակի միավոր, որը հանդես է գալիս ընկալվող երևույթի ամբողջական պատկերի տեսքով որպես չմասնատված ընկալման արդյունք (Болдырев 2002): Այլ խոսքով՝ մակրոիրադարձությունը համապատասխանում է առաջնային և երկրորդական ստորոգումներով ներկայացված իմաստային կառուցվածքների փոխազդեցության հիման վրա ձևավորված բազմանախադրույթային նախադասության իմաստային բովանդակային կառուցվածքին: Իսկ առաջնային և երկրորդական կառույցներով ներկայացված իրողությունները կամ նախադրույթները բնականաբար նպատակահարմար է անվանել միկրոիրադարձություններ: Մակրոիրադարձության շարահյուսական ձևակերպումը (construing, shaping) (Croft, Cruse 2004) ամենաընդհանուր գծերով գիտելիքների կառուցման ճանաչողական

գործընթաց է, որում մի միկրոփրադարձությունն ընկալվում է մյուսի հենքի վրա (Langacker 1991): Այսինքն՝ հաղորդակցության ժամանակ խոսքի հասցեատերը երկու միկրոփրադարձություններն ընկալում է ոչ թե առանձին-առանձին, այլ մշակելով ստացված տեղեկատվությունը՝ կապ է հաստատում այդ երկու միկրոփրադարձությունների միջև՝ դրանք տեղակայելով մեկ ամբողջական կառուցվածքի՝ մակրոփրադարձության շրջանակներում: Այսպես՝

*Our work on the use of condoms as evidence also illustrated a common tension advocates face **working for a more immediate and achievable change while remaining committed to larger, longterm goals of a movement.***
(A.W.Mc.E.H.R.A.C.J.S.W.: 99)

Գիտական հոդվածի տեքստից վերցված տվյալ օրինակում դերբայական դարձվածի (working for a more immediate and achievable change while remaining committed to larger, longterm goals of a movement) միջոցով ներկայացվում է նախադասության՝ արտակաստորոգում պարունակող մասում նկարագրված իրավիճակին գուգահեռ ընթացող, ավելին՝ այդ իրավիճակը պայմանավորող գործողությունն: Արտաքուստ դերբայական դարձվածը ճշգրտում է, թե արտակաստորոգմամբ արտահայտված իրավիճակը (a common tension advocates face) երբ է տեղի ունենում (երբ են առավել մեծ դժվարություն հանդիպում նրանք, ովքեր պաշտպանում են իրավապահ մարմինների կողմից մարմնավաճառության դեմ գրառվելու մեջ կասկածվող անձանց իրավունքները): Սակայն խորքային մակարդակում, բացի ժամանակային հարաբերությունից, միաժամանակ հանդես է գալիս վերաբերության իմաստային հարաբերությունը (որ հարցում է դրսևորվում այն դժվարությունը, որին հանդիպում են նշված անձանց իրավունքների պաշտպանները): Նշված իմաստային հարաբերությունը կկորչեր, եթե փորձեինք դերբայական դարձվածը փոխարինել ստորադաս նախադասությամբ (when they work for a more immediate and achievable change...*): Նման փոխարինումը կազդեր նախադասության ողջ իմաստային կառուցվածքի վրա, այսինքն՝ միկրոփրադարձությունների միջև իմաստային կապերի

փոփոխության արդյունքում կփոխվեր նաև մակրոփրադարձության պատկերը:

Մյուս կողմից՝ դերբայական դարձվածի շարահյուսական կառուցվածքից բաց են թողնված կամ ներակա կերպով են ներկայացված սուբյեկտը և բայի եղանակային ու ժամանակային իմաստները կրող օժանդակ բայը՝ որպես թույլ հաղորդակցական դիսամիզմ ու նեցող թեմատիկ տարրեր, որոնք հայտնի են անմիջապես նախորդող համատեքստից [13]: Վերջիններիս ներակայման շնորհիվ առավել շեշտադրված է դերբայով ներկայացված ռեմատիկ մասը (working for a more immediate and achievable change...): Դերբայական դարձվածի միջոցով հայտնի սուբյեկտը և օժանդակ բայը ներակայելու արդյունքում ուժեղ ու անմիջական կապ է հաստատվում արտակաև ներակա կերպով ներկայացված երկու միկրոփրադարձությունների միջև: Դերբայական դարձվածով ներկայացված միկրոփրադարձությունը հանդես է գալիս որպես մի վիճակ, որի հենքի վրա տեղի է ունենում նախադասության գլխավոր մասում ներկայացված գործողությունը: Ինչ վերաբերում է դերբայական դարձվածի ներսում while շաղկապով ներմուծված երկրորդ դերբայական դարձվածի գոյությանը (while remaining committed to larger, longterm goals of a movement), այն, բացի միաժամանակ ընթացող գուգահեռ գործողություններից՝ ժամանակային հարաբերություններից, ցույց է տալիս հակադրություն, որն իր հերթին հիմնված է զիջման իմաստային հարաբերության վրա (հասնել շտապ փոփոխությունների՝ շարժման երկարաժամկետ նպատակներին հավատարիմ մնալով հանդերձ): Այստեղ գուգահեռ նշմարվում է նաև հավելման իմաստ (հասնել փոփոխությունների, ինչպես նաև շարունակել հավատարիմ մնալ երկարաժամկետ նպատակներին): Բացի այն, որ while շաղկապով ներկայացված դերբայական դարձվածը համապատասխան հոմանիշ ստորադաս նախադասությամբ փոխարինելու դեպքում (while they remain committed to larger, longterm goals of a movement*) կկորչեին ժամանակային և հավելման իմաստները, նաև կխախտվեր նախադասության հաղորդակցական ուղղվածությունը: Մասնավորապես՝ նախորդ դերբայական դարձվածն իր շարահյուսական կառուցվածքով պահանջում է գուգահեռ ձև,

որպեսզի երկուսով, որպես մեկ ամբողջությամբ ներկայացնելով միկրոփրադարձությունը, հենք ծառայեն նախադասությանն ռեմատիկ մասում ներկայացված միկրոփրադարձության համարժեք ընկալման համար:

Ի դեպ, բազմաթիվ են while շարկապով ներմուծվող դերբայական դարձվածները, որոնք ժամանակային իմաստից առավել ընդգծված արտահայտում են հակադրության, զիջման կամ հավելման իմաստներ, որոնք հաճախահանդես են գալիս միախառնված տեսքով: Այսպես՝

*After Friederike had her first personal experience with MDMA, she 'knew immediately that it could be used therapeutically'. She and her husband joined the training group **whilst also working in her own private psychotherapeutic practice providing non-drug psychotherapy, Holotropic Breathwork group therapy and Family Constellation work.** (S.F.M.L.C.I.G.P.Z.O.I.C.: 1)*

Տվյալ դեպքում while շարկապի հոմանիշ whilst շարկապով դերբայական դարձվածը ներկայացնում է արտակա ստորոգմամբ արտահայտված գործողությանը գուգահեռ ընթացող գործողություն, որի շարունակվելու պայմաններում կատարվում է նախադասության գլխավոր մասում ներկայացված միկրոփրադարձությունը: Եթե փորձենք դերբայական դարձվածը փոխարինել արտակա ստորոգում պարունակող նախադասությամբ (օրինակ՝ while/whilst they also worked in her own private psychotherapeutic practice...* կամ and they also worked in her own private psychotherapeutic practice...*), կա՛մ զիջման, կա՛մ հավելման իմաստային հարաբերությունը կպահպանվի: Արդյունքում կփոխվի միկրոփրադարձությունների փոխհարաբերության տեսակը, ինչն էլ իր հերթին կազդի ողջ մակրոփրադարձության ընդհանուր իմաստային կառուցվածքի վրա: Բացի այդ, դերբայական դարձվածի կառուցվածքում հայտնի սուբյեկտի և օժանդակ բայի ներակայման շնորհիվ շեշտադրվում է արտակա ստորոգմամբ արտահայտված միկրոփրադարձությանը գուգահեռ ընթացող գործողությունը՝ ներկայացնելով այն հանգամանքները, որոնց պայմաններում ընթանում է գլխավոր նախադասության գործողությունը:

Feminists are not a monolithic group, of course, and even this group of feminist academic anthropologists disagreed with one another about how to interpret

Fernández's actions. Some supported her while blaming the conservatives for stopping a proposed new abortion law, while others were more critical. (M.R.R.R.J.L.A.: 138)

Տվյալ օրինակում while շարկապով ներմուծված դերբայական դարձվածք, որը ներկայացնում է արտակա ստորոգմամբ արտահայտված գործողության հետ հակադրության մեջ գտնվող գործողություն (ոմանք աջակցեցին նախագահին, մինչդեռ մեղադրեցին պահպանողականներին), հնարավոր կլիներ առանց նախադասության իմաստային կառուցվածքի խախտման փոխարինել արտակա ստորոգմամբ ներկայացված համապատասխան հոմանիշ նախադասությամբ (while they blamed the conservatives for stopping a proposed new abortion law*), եթե չլիներ while շարկապով ներկայացված հաջորդ նախադասությունը (while others were more critical): Վերջինս հակադրության իմաստային հարաբերության մեջ է գտնվում նախադասության ամբողջ առաջին հատվածի հետ (Some supported her while blaming the conservatives for stopping a proposed new abortion law): Այսինքն՝ արտակա ստորոգում պարունակող առաջին նախադասության և հաջորդող դերբայական դարձվածի միջև առկա հակադրության հարաբերությունից բացի, տվյալ բարդ նախադասության իմաստային կառուցվածքում առկա է ավելի բարձր մակարդակի հակադրության իմաստային հարաբերությունն արտակա ստորոգում պարունակող երկու պարզ նախադասությունների միջև (Some supported her, ..., while others were more critical): Յետևաբար նշված երկու պարզ նախադասություններով ներկայացված միկրոիրարարձություններն են կազմում ողջ բարդ նախադասության մակարդակում արտահայտված հակադրության երկու գլխավոր բևեռները: Նշանակում է հենց դրանք էլ հանդես են գալիս որպես ասույթի ռեմատիկ, այսինքն՝ հաղորդակցական դինամիզմի տեսակետից ուժեղ, հաղորդակցությունը առաջ մղող մասեր, որոնց շեշտադրումը հնարավոր չէր լինի, եթե երկրորդական հակադրությունն արտահայտող հատվածը (while blaming the conservatives for stopping a proposed new abortion law) ներկայացվեր ստորադաս նախադասությամբ: Յայտնի սուբյեկտի և օժանդակ բայի ներակայման շնորհիվ է, որ դերբայական դարձվածին տրվում է

այսպես կոչված «երկրորդական» տեղեկատվությունը ներկայացնող թեմատիկ բաղադրիչի կարգավիճակ: Դերբայական դարձվածով ներկայացված միկրոփրոպարձությունն ասես ներառված է ավելի խոշոր՝ արտակաստորոգմամբ ներկայացված միկրոփրոպարձության (Some supported her...) մեջ: Տվյալ դեպքում դերբայական դարձվածն իրականացնում է նախորդ և հաջորդ բաղադրիչները շեշտադրելու և դրանով իսկ դրանց միջև կուռ կապապահովելու գործառույթ:

*Taking positions just makes this worse because people's egos become identified with their positions. Hence, **before working on the substantive problem**, the 'people problem' should be disentangled from it and dealt with separately. (F.U.P.G.Y.N.A.G.: 11)*

Տվյալ օրինակում դերբայական դարձվածը (gerundial phrase) անմիջականորեն ծառայում է միկրոփրոպարձությունը հնարավորինս սեղմ ձևով ներկայացնելուն: Տվյալ դեպքում սուբյեկտն անորոշ, ընդհանուր է: Ենթադրվում է, որ before working on the substantive problem դերբայական դարձվածի միջոցով ներկայացված գործողությունը հեղինակները վերագրում են ընթերցողի հավաքական կերպարին, այսինքն՝ որպես ցուցում կամ խորհուրդ հղում են գրքի բոլոր ընթերցողներին: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հաջորդ գործողությունն արտահայտված է կրավորական սեռի կառույցով (the 'people problem' should be disentangled from it and dealt with separately): Զետևաբար հեղինակները նպատակահարմար են գտել դերբայական դարձվածի միջոցով ներակայել սուբյեկտը: Զամապատասխան հոմանիշ ստորադաս նախադասության գործածման դեպքում այն, միևնույն է, ներկայացված էր լինելու կա՛մ անորոշ դերանունով (օրինակ՝ before one works on the substantive problem*), կա՛մ ընդհանրական իմաստով գործածված you դերանունով (օրինակ՝ before you work on the substantive problem*): Վերջինս, նախադասության շարահյուսական կառուցվածքը ծանրաբեռնելուց բացի, որևէ էական դեր չէր խաղալու իմաստաբանական կառուցվածքի տեսակետից: Մինչդեռ դերբայական դարձվածի միջոցով սուբյեկտը ներակա կերպով ներկայացնելու արդյունքում թուլանում է նաև նախադասության առաջին հատվածի հաղորդակցական դինամիզմը, որի

հաշվին էլ ավելի ընդգծվում է հաղորդակցական առումով կարևոր, նոր տեղեկատվությունը՝ should be disentangled from it and dealt with separately:

Նմանատիպ մեկնությունն ունի հետևյալ օրինակը, որտեղ դերբայական դարձվածը գուտ իրականացնում է նախադասության՝ առավել ուժեղ հաղորդակցական դիսամիզմով օժտված տարրերը՝ ռեման ընդգծելու գործառույթ՝

Perhaps the most famous use of the one-text procedure was by the United States at Camp David in September 1978 when mediating between Egypt and Israel. (F.U.P.G.Y.N.A.G.: 116)

Քանի որ գործողության սուբյեկտի մասին նշվում է անմիջապես նախորդող համատեքստում (...was by the United States...), և դերբայական դարձվածում նոր տեղեկատվությունը երկու երկրների միջև որպես միջնորդ հանդես գալու փաստն է, հետևաբար հակիրճության նկատառումներով և նոր տեղեկատվությունն ընդգծելու նպատակով դերբայական դարձվածի միջոցով ներկայվում է սուբյեկտը և եղանակ ու ժամանակ ցույց տվող օժանդակ բայը: Այդպիսով մնում է միայն ռեման: Սակայն ամբողջ դերբայական դարձվածը, օժտված լինելով ավելի ցածր աստիճանի հաղորդակցական դիսամիզմով, քան արտակա ստորոգմամբ ներկայացված հատվածը (the most famous use of the one-text procedure was by the United States), իր հերթին ծառայում է ընդգծելու արտակա ստորոգմամբ ներկայացված միկրոիրարարձության՝ նոր տեղեկատվություն ներկայացնելու առումով առաջնային լինելը:

Դիտարկենք մեկ ուրիշ օրինակ՝

*A trip wire should provide you with some margin in reserve. If **after reaching the standard reflected in your trip wire** you decide to call in a mediator, you have left him with something on your side to work with. You still have some room to move. (F.U.P.G.Y.N.A.G.: 102)*

Տվյալ օրինակում նույնպես դերբայական դարձվածի (gerundial phrase) և համապատասխան հոմանիշ ստորադաս նախադասության տարբերությունը պայմանավորված է նախադասության թեմատեմատիկ կազմակերպմամբ: Մասնավորապես՝ դերբայական դարձվածը հանդես է գալիս պայմանի ստորադաս նախադասության սահմաններում (If ... you decide to call in a mediator), որտեղ պայմանի իմաստային

հարաբերությունն ավելի կարևոր է, քան ժամանակայինը: Դրահամար էլ գործողություններն են հաջորդման իմաստային հարաբերությունը ներկայացվում է ներակա ստորոգմամբ, որի հաշվին առավել ընդգծվում է արտակա ստորոգմամբ արտահայտված գործողությունը: Վերջինս ցույց է տալիս այն միկրոփրադարձությունը (If ... you decide to call in a mediator), որն անհրաժեշտ պայման է գլխավոր նախադասությանը ներկայացված գործողության (you have left him with something on your side to work with) համար: Հետևաբար after reaching the standard reflected in your trip wire միկրոփրադարձությունը դերբայական դարձվածով արտահայտելն այս դեպքում կարևոր դեր է կատարում ողջ ասույթի՝ տեղեկատվական առումով կարևոր բաղադրիչների միջև սերտ կապ ապահովելու և դրանով իսկ ամբողջ միկրոփրադարձությունը որպես մեկ ամբողջություն ներկայացնելու հարցում:

Ի տարբերություն կոնկրետ ժամանակային հարաբերությունն արտահայտող շաղկապների՝ անշաղկապ դերբայական դարձվածները հաճախ տարբերվում են համապատասխան հոմանիշ ստորադաս նախադասություններից նաև իմաստային կառուցվածքով: Այսպես՝

Having thought about your interests, you should go into a meeting not only with one or more specific options that would meet your legitimate interests but also with an open mind. An open mind is not an empty one. (F.U.P.G.Y.N.A.G.: 54)

Տվյալ օրինակում անշաղկապ դերբայական դարձվածը (Having thought about your interests), բացի կոնկրետ կատարված գործողությունից, ցույց է տալիս նաև որպես այդ գործողության արդյունք հանդես եկող վիճակը, որի պայմաններում միայն կարող է կատարվել արտակա ստորոգմամբ ներկայացված գործողությունը (you should go into a meeting not only with one or more specific options that would meet your legitimate interests but also with an open mind): Եթե փորձեինք տվյալ անշաղկապ դերբայական դարձվածը փոխարինել հոմանիշ շաղկապավոր դերբայական դարձվածով (օրինակ՝ after thinking about your interests*) կամ համապատասխան ստորադաս նախադասությանը (after you think about your interests կամ when you have thought about your interests), կներկայացվեին պարզապես ժամանակային առումով իրար հաջորդող երկու հավասարազոր գործողություններ, առաջին

միկրոփրադարձությունը կդադարեր ընկալվել որպես վիճակ կամ պայման, որի առկայությունը տեղի է ունենում երկրորդ միկրոփրադարձությունը:

Ինչպես երևում է վերոնշյալ օրինակների վերլուծությունից, դերբայական դարձվածի միջոցով, վերջինիս շարահյուսական կառուցվածքով պայմանավորված, խոսքում հաճախ իրացվում են միաժամանակ մի քանի իմաստային-տրամաբանական հարաբերություններ՝ ի տարբերություն ստորադաս նախադասության, որը դիմավոր բայի առկայության շնորհիվ շատ ավելի կոնկրետ և միանշանակ է իմաստային կառուցվածքի, հետևաբար և գլխավոր նախադասության հետ ունեցած իմաստային-տրամաբանական հարաբերության առումով: Այսպես՝

Reflecting on conversations with Argentine feminist anthropologists, social scientists, and reproductive rights activists, this paper analyzes why the Argentine movement to legalize abortion relies on the contested concept of human rights. (M.R.R.R.J.L.A.: 136)

Նշված օրինակում ունենք նախադասության՝ արտակա ստորոգում պարունակող մասի հետոչ այնքան հստակ ու միանշանակ իմաստային-տրամաբանական հարաբերության մեջ գտնվող դերբայական դարձված: Արտաքուստ ներկայացված է գործողության ձևի և միջոցի իմաստային հարաբերություն: Մինչդեռ իրականում դերբայական դարձվածով ներկայացված իրադարձությունը արտակա ստորոգմամբ ներկայացված իրադարձությանն առնչվում է նաև հավելման իմաստային հարաբերությամբ: Այսինքն՝ հեղինակի խնդիրն է հոդվածի թեզիսի շրջանակում հնարավորինս հակիրճ, բայց և ընդգրկուն կերպով ընթերցողին ներկայացնել հոդվածում կատարված աշխատանքը. հոդվածում ներկայացվում են ինչպես կանանց վերարտադրողական իրավունքի արգենտինացի պաշտպանների հետ հեղինակի ունեցած գրույցները, այնպես էլ վերլուծվում է Արգենտինայում հղիության արհեստական ընդհատման օրինականացման համար մղվող պայքարը մարդու իրավունքների համատեքստում: Մյուս կողմից՝ դերբայական դարձվածը, իր շարահյուսական ձևով (-ing դերբայ) արտացոլելով երկու իրադարձությունների համաժամանակյա բնույթը (Reflecting on

conversations with... և this paper analyzes why...), ցույց է տալիս, որ այդ իրադարձությունները փոխկապված են, մեկը կատարվում է մյուսի հենքի վրա: Տվյալ դեպքում այդ կապը գործողության ձևի կամ միջոցի իմաստային հարաբերության վրա է հիմնված, այսինքն՝ վերլուծությունը իրականացվել է նաև այդ գրույցները դիտարկելու միջոցով: Այսպիսով՝ երկու իմաստային հարաբերություններ այս դեպքում հանդես են գալիս միախառնված կերպով, իսկ համապատասխան հոմանիշ նախադասության մեջ փոխարինելու դեպքում այդ իմաստներից մեկն անպայման կկորչեր (This paper reflects on conversations...and analyzes why...* կամ This paper reflects on conversations...by means of which it analyzes why...*):

Շաղկապի առկայությունը հաճախ կոնկրետացնում է դերբայական դարձվածի իմաստը, որը տվյալ դեպքում ծառայում է ոչ թե միկրոիրադարձությունների միջև լրացուցիչ իմաստային հարաբերություններ արտահայտելուն, այլ որպես ասույթի թեմատիկ կազմակերպման միջոց: Այսպես՝

*In positional bargaining you try to improve the chance that any settlement reached is favourable to you **by starting with an extreme position, by stubbornly holding to it, by deceiving the other party as to your true views, and by making small concessions only as necessary to keep the negotiation going.***
(F.U.P.G.Y.N.A.G.: 6)

Տվյալ օրինակում ունենք չորս գուգահեռ կառույց՝ միևնույն շարահյուսական կառուցվածքով դերբայական դարձվածներ (gerundial phrases), որոնք, արտակա ստորոգմամբ ձևակերպված միկրոիրադարձության հետ գտնվելով ձևի և միջոցի միևնույն իմաստային-տրամաբանական հարաբերության մեջ, ներկայացնում են չորս միկրոիրադարձություններ, որոնց միջոցով է հնարավոր դառնում նախադասության գլխավոր հատվածում ներկայացված միկրոիրադարձության (improve the chance that...) սահմաններում նկարագրված գործողությունը: Քանի որ միանգամից ներկայացվում են չորս միկրոիրադարձություններ, բավականին մեծ ծավալով տեղեկատվություն է հաղորդվում ընթերցողին: Ուստի ընթերցողի կողմից հաղորդակցական առումով կարևոր, նոր տեղեկատվության ընկալումը հեշտացնելու նպատակով

հեղինակները դիմում են դերբայական դարձվածների գործածությանը, որոնք իրենց կառուցվածքով թույլ են տալիս ներակա կերպով ներկայացնել ընթերցողին անմիջապես նախորդող համատեքստից հայտնի սուբյեկտը և թիվ, դեմք, ժամանակ, եղանակ ցույց տվող օժանդակ բայերը՝ այդպիսով թողնելով միայն տեղեկատվական առումով կարևոր՝ կոնկրետ գործողությունը նկարագրող դերբայները (starting with an extreme position, ...stubbornly holding to it, ...deceiving the other party ... and ... making small concessions...):

Այնուամենայնիվ, քիչ չեն նաև օրինակները, որտեղ, չնայած շաղկապի առկայությանը, դերբայական դարձվածի շարահյուսական կառուցվածքը թույլ է տալիս արտահայտել մեկից ավելի իմաստային հարաբերություններ: Այսպես՝

By devoting substantial time to working out the practical arrangements for transferring technology, they might have made their offer far more credible and far more attractive to the developing countries. By dismissing the issue as a matter of lesser importance to be dealt with later, the industrialized states gave up a low-cost opportunity to provide the developing countries with an impressive achievement and a real incentive to reach agreement on other issues.
(F.U.P.G.Y.N.A.G.: 26)

Տվյալ օրինակում ունենք երկու դերբայական դարձված (gerundial phrases), որոնք by նախդրի և գերունդի կապակցության շնորհիվ արտաքուստ արտահայտում են ձևի և միջոցի իմաստային-տրամաբանական հարաբերություն: Սակայն, երբ փորձում ենք ավելի մանրամասն վերլուծել առաջին դերբայական դարձվածը, ակնհայտ է դառնում, որ ձևի և միջոցի իմաստային հարաբերությունը զուգահեռ, նույնիսկ վերջինիցս ավելի ընդգծված, հանդես է գալիս պայմանի իմաստային հարաբերությունը: Դրան նպաստում է նաև նախադասության՝ արտակա ստորոգմամբ ձևակերպված անիրական գործողություն ցույց տվող might have made ստորոգյալը: Այսինքն՝ եթե տեղի ունենար դերբայական դարձվածով ներկայացված գործողությունը (devoting substantial time to working out the practical arrangements for transferring technology), ապա հնարավոր կլիներ նաև երկրորդ գործողությունը (they might have made their offer far more credible and far more attractive to the developing countries): Բացի այդ, գերունդի

գործածության միջոցով հեղինակի խնդիրն է նշված գործողությունը ներկայացնել որպես ժամանակային և իրադրային տեղակայումից դուրս միջոց, որին խորհուրդ է տրվում դիմել ցանկացած նմանատիպ իրավիճակում: Ժամանակային կամ իրադրային տեղակայումից դուրս, ընդհանուր գործողությունն արտահայտելուն ծառայում է այն հանգամանքը, որ գերունդը, չունենալով ժամանակաձևային կամ եղանակային ցուցիչներ, միայն կարող է ներկայացնել խոնարհված բայի հետ համաժամանակյա կամ տարաժամանակյա գործողություն (այս դեպքում –ing ձևն արտահայտում է համաժամանակյա գործողությունների հարաբերություն):

Իրավիճակը մի փոքր այլ է երկրորդ՝ By dismissing the issue as a matter of lesser importance to be dealt with later դերբայական դարձվածի (gerundial phrase) դեպքում, որտեղ միաժամանակ հանդես են գալիս ձևի կամ միջոցի և պատճառի իմաստային հարաբերությունները: Մասնավորապես՝ հարցի քննարկումը հետաձգելու պատճառով զարգացած արդյունաբերական երկրները կորցրին զարգացող երկրների առջընթացը ապահովելու հեշտ հնարավորություն (the industrialized states gave up a low-cost opportunity to provide the developing countries with an impressive achievement...): Այն հանգամանքը, որ արտաքուստ նախորդին նման այս դերբայական դարձվածը տվյալ ասույթում այլ իմաստային հարաբերությամբ է հանդես գալիս, պայմանավորված է նախադասության գլխավոր մասի արտակա ստորոգյալի արտահայտած քերականական իմաստով (gave up a low-cost opportunity): Վերջինս, խոնարհված լինելով սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևով, ցույց է տալիս փաստացի կատարված իրական գործողություն: Բացի այդ, տվյալ ասույթում, բացի միկրոիրադարձությունների միջև պատճառահետևանքային կապից, մեկ ուրիշ կարևոր նրբությունն կա. երկու իրադարձությունները տեղի են ունենում միաժամանակ: Իրադարձությունների միջև նմանօրինակ անմիջական կապի ներկայացումը հնարավոր է համաժամանակյա գործողությունների հարաբերությունն արտահայտող -ing ձևով դերբայական դարձվածի միջոցով:

Ինչպես ցույց է տալիս մեր կողմից իրականացված վերլուծությունը, անգլերեն գիտական դիսկուրսում բազմաթիվ են պատճառահետևանքային իմաստային հարաբերությունն արտահայտող դերբայական դարձվածները, որոնք -ing դերբայի ձևաիմաստային առանձնահատկությունների շնորհիվ ցույց են տալիս պատճառահետևանքային հարաբերությամբ կապված միկրոիրադարձությունների համաժամանակյա բնույթը կամ անմիջապես մեկը մյուսին հաջորդելը՝ դրանով իսկ ապահովելով դրանց միջև առկա սերտ կապի արտահայտումը, մեկի՝ մյուսի նկատմամբ երկրորդական, ուղեկցող բնույթ կրելը, որպես հենք ծառայելը: Դրա արդյունքում միկրոիրադարձությունները միաձուլվում են իրար տարբեր իմաստային և տրամաբանական կապերով՝ մակրոիրադարձությունը ներկայացնելով որպես իրականության ամբողջական, ավարտուն պատկեր: Իմաստային կառուցվածքի նկարագրված առանձնահատկություններով պայմանավորված՝ պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող դերբայական դարձվածները հաճախ համատեղում են պատճառի և ժամանակի իմաստային հարաբերություններ: Այսպես՝

Sensing the possibility of a joint gain, Turnbull indicates his willingness to discuss ways of meeting Mrs. Jones's interest. As it turns out, Turnbull and Mrs. Jones have a shared interest in Turnbull moving out as soon as possible. (F.U.P.G.Y.N.A.G.: 127)

*Frequently one side will try to postpone coming to a decision until a time they think favorable. Labor negotiators will often delay until the last few hours before a strike deadline, **relying on the psychological pressure of the deadline to make management more malleable.*** (F.U.P.G.Y.N.A.G.: 141)

*In negotiations between the United States and Mexico, the U.S. wanted a low price for Mexican natural gas. **Assuming that this was a negotiation over money**, the U.S. Secretary of Energy refused to approve a price increase negotiated with the Mexicans by a U.S. oil consortium.* (F.U.P.G.Y.N.A.G.: 49)

Եթե առաջին օրինակում դերբայական դարձվածը, միաժամանակ ժամանակի և պատճառի իմաստային հարաբերությունների իրացնելով (Sensing the possibility of a joint gain = As soon as Turnbull senses the possibility of a

joint gain*... և/կամ Since /As, Because/ Turnbull senses the possibility of a joint gain*...), ծառայում է նախադասության թեմատիկ կազմակերպմանը, ապա երկրորդ (relying on the psychological pressure of the deadline to make management more malleable) և երրորդ (Assuming that this was a negotiation over money) օրինակներում դերբայական դարձվածները, իրացնելով միայն պատճառահետևանքային իմաստային հարաբերություն, ցույց են տալիս արտակա ստորոգմամբ ներկայացված գործողությանն ուղեկցող հանգամանքներ: Տվյալ դեպքում այդպիսի հանգամանքների դերում հանդես է գալիս սուբյեկտի հոգեբանական վիճակը, որի պայմաններում տեղի է ունենում արտակա ստորոգմամբ ներկայացված գործողությունը: Ստորադաս նախադասությամբ փոխարինելով դեպքում (...because/as they relied on the psychological pressure of the deadline to make management more malleable* և As/Because he assumed that this was a negotiation over money*...) կներկայացվեր գլխավոր նախադասության գործողության համար գուտորպես պատճառ ծառայող մեկ ուրիշ գործողություն, մինչդեռ գլխավոր գործողությունն առաջ բերող և այդ գործողության կատարմանն ուղեկցող վիճակի իմաստը կկորչեր:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն դերբայական դարձվածները, որոնք մի կողմից ձևի, մյուս կողմից՝ հավելման իմաստային հարաբերություն են արտահայտում երկու միկրոիրարարձությունների միջև, սակայն ո՛չ արտակա ստորոգմամբ ներկայացված գործողության կատարման ձևն են ցույց տալիս, ո՛չ էլ վերջինիս գուգահեռ, լրացուցիչ գործողություն են ներկայացնում: Իրականում դրանք, լրացուցիչ տեղեկություն են ներմուծելով ասույթի կառուցվածք, ճշգրտում կամ մանրամասնում են արտակա ստորոգմամբ ներկայացված գործողությունը կամ վիճակը: Այսպես՝

*Policy change is often unpredictable, and the process by which policies, laws, or practices change can be extremely diverse, **reflecting shifting norm internalization in public opinion, political considerations, and judicial engagement.** (A.W.Mc.E.H.R.A.C.J.S.W.: 92)*

Տվյալ օրինակում արտաքուստ դերբայական դարձվածն արտակա ստորոգմամբ ներկայացված միկրոիրարարձության հետ ասես

հավելման իմաստային-տրամաբանական հարաբերության մեջ է գտնվում, ներկայացնում է վերջինիս գուգահեռ վիճակ: Մինչդեռ իրականում այն, լրացուցիչ տեղեկությունն ներմուծելով, հստակեցնում է the process ... can be extremely diverse միկրոիրադարձությունը: Այսինքն՝ այն բացահայտում է, թե ինչ իմաստով է նշված գործընթացը բազմակողմանի: Ասվածի մասին է վկայում նաև այն, որ երբ փորձում ենք դերբայական դարձվածը փոխարինել հավելում ցույց տվող and շաղկապով համապատասխան նախադասությամբ՝ *Policy change is often unpredictable, and the process by which policies, laws, or practices change can be extremely diverse and reflect shifting norm internalization in public opinion, political considerations, and judicial engagement**, մակրոիրադարձության ողջ բովանդակությունն աղավաղվում է, քանի որ ոչ համարժեք կերպով է ներկայացվում այն ստեղծող միկրոիրադարձությունների կապը (ոչ թե քաղաքականության ուղղությունների, օրենքների կամ գործելակերպի փոփոխության գործընթացը բազմազան է և արտացոլում է մի շարք տարբեր ոլորտներում առկա նորմերի փոփոխությունները, այլ բազմազան է այն իմաստով, որ արտացոլում է տարբեր ոլորտներին վերաբերող նորմերի փոփոխությունները): Այսպիսով՝ դերբայական դարձվածը թույլ է տալիս երկու սերտորեն կապված միկրոիրադարձություններ ներկայացնել որպես մեկ ամբողջության մասեր:

Յետաքրքիր առանձնահատկություններ են դրսևորում այն դերբայական դարձվածները, որոնք նախորդ դերբայական դարձվածների պես արտաքուստ ձևի իմաստային-տրամաբանական հարաբերությունն են արտահայտում, սակայն իրականում բացահայտում են այն հոգեվիճակը, որում գտնվելով՝ սուբյեկտը կատարում է արտակաստորոգմամբ ներկայացված գործողությունը: Այսպես՝

*People often come to a negotiation **realizing that the stakes are high and feeling threatened.** (F.U.P.G.Y.N.A.G.: 29)*

*If you come home **wanting to tell your husband about everything that went wrong at the office,** you will become even more frustrated if he says, “Don’t bother telling me; I’m sure you had a hard day. Let’s skip it.” (F.U.P.G.Y.N.A.G.: 31)*

Վերոնշյալ իսկապահովումն այն է, որ եթե փորձենք բերված երկու օրինակների դերբայական դարձվածները փոխարինել արտակա ստորոգում պարունակող համապատասխան կառույցներով, ապա ողջ մակրոիրարարձությունը կփոխվի: Այսպես՝ մի բան է ասել People often come to a negotiation realizing that... կամ you come home wanting to tell..., որտեղ ներկայացվում է այն հոգեվիճակը, որում գտնվում է սուբյեկտը բանակցելը սկսելիս կամ տուն գալիս: Մինչդեռ բոլորովին այլ իրավիճակ է ներկայացվում, երբ ասում ենք People often come to a negotiation and realize that... կամ you come home and want to tell..., որտեղ դիմավոր բայերը (realize, want) հեռացնում են երկու գործողություններն իրարից նրանով, որ շատ աղոտ է դառնում կամ նույնիսկ կորչում է համաժամանակյա գործողությունների կամ վիճակների իմաստային հարաբերությունը: Արդյունքում ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ խոսքը երկու իրար հաջորդող, իրարից անկախ իրավիճակների մասին է: Այսինքն՝ ոչ թե ներկայացվում է այն հոգեվիճակը, որում սուբյեկտը կատարում է արտակա ստորոգմամբ ներկայացված գործողությունը, այլ պարզապես ներկայացվում են սուբյեկտի կողմից կատարվող երկու առանձին, հավասարազոր գործողություններ: Այսպիսով՝ դերբայական դարձվածը թույլ է տալիս սեղմ կերպով արտահայտել մի իմաստային հարաբերություն, որը այլ կերպ դժվար կլիներ համարժեքորեն ներկայացնել:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլերեն գիտական խոսքում բավականին հաճախ հանդիպում են դերբայական դարձվածներ, որոնք, հանդես գալով նախադասության գոյականական անդամի պաշտոնում (ենթակա, գոյականական անդամի լրացումներ, ստորոգելիական վերադիր), գործածվում են այն ժամանակ, երբ գործողության սուբյեկտը կամ ընդհանուր է, կամ անհայտ: Տվյալ դեպքում կարևորը ոչ թե գործողություն կատարողին հիշատակելն է, այլ հենց գործողության փաստը ամփոփ կերպով նշելը: Հետևյալ օրինակում, որը վերցված է գիտական հոդվածի տեքստից, ներկայացված է ոչ մեծ պարբերություն, որի սահմաններում նշված գործառնությունը հանդես են գալիս 10 դերբայական դարձվածներ (gerundial phrases):

*The advocacy framework is based upon **pursuing multiple and diverse strategies for achieving impact**, including **working closely with decision-makers ('inside track')**, **applying pressure and confrontation ('outside track')**, and **articulating evidence- and interest- (or values-) based arguments**. Beyond previous frameworks for policy change, our model emphasizes the central role of coalition building and **carefully framing issues in human rights terms as critical steps in the development of advocacy strategies and campaigns**. **Describing the process and outcomes of policy change in relation to the framework is relatively straightforward**. By contrast, **attributing policy change to the specific interventions and strategies undertaken is complex, resource-intensive, often impossible, and can be counterproductive**. Even more challenging than **attributing positive change to our work is attributing "the absence of negative change" (showing that "things did not get worse")**. (A.W.Mc.E.H.R.A.C.J.S.W.: 97)*

Դերբայ ական դարձվածի՝ նշված գործառույթով այսպիսի լայն գործածությունն ուղղակիորեն կապված է գիտական խոսքի բնորոշ ոճական առանձնահատկությունների, մասնավորապես՝ գիտական տեքստի չեզոքության և օբյեկտիվության պահպանման պահանջի հետ, որը տվյալ դեպքում ապահովվում է նաև դերբայ ական դարձվածի (gerundial phrase) շնորհիվ սուբյեկտը ներակա կերպով արտահայտելու միջոցով: Մյուս կողմից՝ դերբայ ական դարձվածները ներակա ստորոգման շնորհիվ թույլ են տալիս հաղորդել մեծածավալ տեղեկատվություն ընդամենը մեկ պարզ նախադասության սահմանում:

Այսպիսով՝ դերբայ ական դարձվածների ուսումնասիրությունը շարահյուսական հոմանշության, իմաստաբանական կառուցվածքի և խոսքում իրականացրած գործառույթների համատեքստում ցույց է տալիս, որ դերբայ ական դարձվածները, յուրահատուկ շարահյուսական ձևով պայմանավորված, արտահայտում են միախառնված իմաստային-տրամաբանական հարաբերություններ՝ իրացնելով լրացուցիչ իմաստային նրբերանգներ: Այս առանձնահատկությունը պայմանավորված է դերբայ ական դարձվածների՝ ասույթում ամփոփված տեղեկատվության որոշակի հատված ներակա կերպով հաղորդելու հատկությամբ, որը թույլ է տալիս ընդգծել

Նախադասության` ուժեղ հաղորդակցական դինամիզմով օժտված բաղադրիչները: Նախադասության կամ ասույթի թեմաեմատիկ կազմակերպման գործառույթն էլ ընկած է դերբայական դարձվածների` որպես լեզվական միջոցների կիրառության հիմքում: Մասնավորապես` տեղեկատվության որոշակի հատվածի ներակայման շնորհիվ դերբայական դարձվածները թույլ են տալիս հաղորդել մեծածավալ տեղեկատվություն ընդամենը մեկ նախադասությամբ հանդես եկող մակրոիրարարձության շրջանակներում: Այս կերպ դրանք նպաստում են գիտական ոճի շարադրանքի համար անհրաժեշտ մի շարք պայմանների, այդ թվում` հակիրճության, օբյեկտիվության և չեզոքության պահպանմանը:

2.4. Լեզվական տնտեսման վերառույթային դրսևորումները

Ինչպես արդեն նշել ենք, անգլերեն գիտական դիսկուրսում հաճախ տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու հաշվին խոսքի խոսացումը տեղի է ունենում ոչ թե մեկ ասույթի, այլ ամբողջ տեքստի կամ վերառույթային մակարդակում, որտեղ տեքստի իմաստի ձևավորման հարցում կարևոր դեր են կատարում կանխենթադրույթները: Ամփոփելով լեզվաբանության մեջ տարածված տեսակետերը` կարող ենք բնութագրել կանխենթադրույթները որպես նախնական գիտելիքներ, որոնք մասնակցում են ասույթի իմաստի ձևավորմանը` ստեղծելով պայմաններ դրա ճիշտ ընկալման համար (Knell 2008, Blakemore 2002, Gonzalez 2000, Brown, Yule 1983, Ostman 1986, Chilton, Schaffner 2002, Carston 2008, Diessel 2004, Fairclough 2003): Առանձնացվում են տեքստային կանխենթադրույթները` այն նախնական գիտելիքները, որոնց սկզբնաղբյուրը հենց տեքստն է, կենցաղային կանխենթադրույթները` կյանքի տարրական իրողությունների իմացությունը, որն ընդհանուր է բոլոր լեզվակիրների համար, և հանրագիտարանային կանխենթադրույթները` գիտական (պատմական, աշխարհագրական, բնագիտական, տեխնիկական և այլն) և մշակութային բնույթի տեղեկությունների ամբողջությունը, որը հնարավոր է դարձնում տեքստի բաց թողնված, բայց վերականգնելի հատվածների ավելի խորը և ճիշտ ընկալումը (Yule 2010, Grice 1989, Нефедова 1983):

Այսպես`

...Well, right about the same time, around 1950, concerns developed about the loss of Southeast Asia. That's what led the United States into the Indochina wars....

...But the decline continues. In the last 10 years, there's been a very important event: the loss of South America. For the first time in 500 years, the South -- since the conquistadors, the South American countries have begun to move towards independence and a degree of integration...

...Well, moving on to just last year, the Arab Spring is another such threat. It threatens to take that big region out of the grand area. That's a lot more significant than Southeast Asia or South America.... (Ch.O.W.: 8:46-13:16)

Ն. Խոմսկու՝ Մասաչուսեթսի համալսարանում կարդացած դասախոսությանը նից վերցված այս հատվածում կարելի է գտնել տեքստի կանխենթադրույթների հիման վրա տեքստի մակերեսային կառուցվածքից տեղեկատվության որոշակի մասի բացթողման օրինակ: Քանի որ ելույթ ունեցողը դասախոսության նախորդ հատվածներում հանգամանորեն անդրադարձել է Հարավարևելյան Ասիայի և Հարավային Ամերիկայի կորստին, խոսելով Արաբական գարնան և Միջին Արևելքում ԱՄՆ վարած քաղաքականության մասին՝ պարզապես մեկ նախադասությամբ (...That's a lot more significant than Southeast Asia or South America...) թռուցիկ համեմատում է այն վերոնշյալ երկու տարածաշրջաններում ԱՄՆ ունեցած կորստի հետ՝ արտակա կերպով չնշելով տվյալ տարածաշրջաններում ԱՄՆ դիրքերի թուլացման, ազդեցության կորստի փաստի մասին, քանի որ վստահ է, որ ունկնդիրները հեշտությամբ նախորդող համատեքստից կվերականգնեն բաց թողնված տեղեկատվությունը: Այս կերպ՝ Ն. Խոմսկին, տնտեսելով լեզվական միջոցները և ներակա կերպով հաղորդելով տեղեկատվության որոշակի հատվածը, միաժամանակ տնտեսում է դասախոսությանը հատկացված ժամանակը, խուսափում է ավելորդ կրկնությունից՝ դրանով իսկ չհոգնեցնելով ունկնդիրներին և վերջիններիս ուշադրությունը հրավիրելով նոր տեղեկատվության, այն է՝ ԱՄՆ միջինարևելյան քաղաքականության վրա: Ունկնդիրներն էլ իրենց հերթին, հենվելով տեքստի կանխենթադրույթների վրա, համարժեք կերպով վերականգնում են ներակատեղեկատվությունը:

Good afternoon. My name is Uldus. I am a photo-based artist from Russia. I started my way around six years ago with ironic self-portraits to lay open so many stereotypes about nationalities, genders, and social issues — ["I am Russian. I sell drugs, guns, porno with kids!"] ["Vodka = water. I love vodka!"] (Laughter) — using photography as my tool to send a message. ["Marry me, I need a visa."]. (B.W.Ph.T.S.: 0:11-0:40)

Տվյալ օրինակը լուսաբանում է կենցաղային կանխենթադրույթների դերը տեղեկատվության որոշակի հատվածներակա կերպով հաղորդելու, ինչպես նաև ներակա տեղեկատվությունը վերականգնելու ու համարժեք ընկալելու հարցում: Ելույթ ունեցողը, ով ազգությամբ ռուս ֆոտոարվեստագետ է, ներկայացնում է իր կատարած աշխատանքը, որով փորձել է լուսանկարների միջոցով կոտրել ազգությունների, սեռերի, սոցիալական դերերի վերաբերյալ կարծրատիպերը: Ֆոտոարվեստագետը խոսքը սկսում է՝ ունկնդիրներին պատմելով, որ իր գործունեությունը սկսել է մոտ վեց տարի առաջ՝ ազգային, գենդերային և սոցիալական տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ կարծրատիպեր ներկայացնող ինքնալուսանկարներ անելով: Հնչող բանավոր խոսքին զուգահեռ մեծ էկրանին ցուցադրվում են այդ լուսանկարները, որոնցից մեկում պատկերված է ելույթ ունեցողը՝ ձեռքին մի ցուցանակ, որի վրա գրված է. «Օղի=Ջուր: Ես սիրում եմ օղի (Vodka = water. I love vodka!): Երկրորդ լուսանկարում ելույթ ունեցողը պատկերված է՝ ձեռքին «Ամուսնացի՛ր ինձ հետ. ինձ վիզա է հարկավոր (Marry me, I need a visa.)» գրությունը: Տեսնելով այս լուսանկարներում պատկերված գրությունները՝ ողջ դահլիճը սկսում է ծիծաղել: Ի՞նչն է առաջացնում նրանց ծիծաղը. այն կարծրատիպերը, որ ամբողջ աշխարհն ունի ռուս ժողովրդի մասին, մասնավորապես՝ վերջիններիս մեծ սերը օղու նկատմամբ, որը, համաձայն տարածված կարծիքի, ռուսները խմում են այնքան հաճախ, որ դա համարվում է սովորական երևույթ, ինչպես օրինակ՝ ջուր խմելը: Այս կարծրատիպը թույլ է տալիս վերականգնել տեքստի մակերեսային կառուցվածքից բաց թողնված հետևյալ տեղեկատվությունը. օղին ռուսների համար ջրի պես բան է, օրգանիզմի համար կենսական անհրաժեշտություն, առանց որի

դժվար է պատկերացնել նրանց առօրյան: Այս պիսով՝ այս կարծրատիպը տվյալ դեպքում հանդես է գալիս կենցաղային կանխենթադրույթի դերում: Վերջինս ելույթ ունեցողին հնարավորություն է տալիս համապատասխան տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու և դրանով իսկ լեզվական միջոցներ տնտեսելու շնորհիվ հատուկ ոճական երանգավորում հաղորդել խոսքին և հոլմորային էֆեկտ ստեղծել: Երկրորդ լուսանկարում կենցաղային կանխենթադրույթի դերում հանդես է գալիս այն կարծրատիպը, որ հետխորհրդային պետությունների, այդ թվում՝ Ռուսաստանի քաղաքացիների համար ԱՄՆ վիզա ստանալու միջոց է ամուսնությունը ԱՄՆ քաղաքացիություն ունեցող անձի հետ: Յետևաբար ելույթ ունեցողը, քաջ գիտակցելով, որ ունկնդիրների գիտակցության մեջ նույնպես արմատացած է այս կարծրատիպը, ինչպես նաև այն, որ վերջիններս գիտեն, որ լուսանկարում պատկերված է ինքը՝ ազգությամբ ռուս կին, այս մանրամասները արտակա կերպով իր խոսքում չի ներկայացնում՝ թողնելով ունկնդիրներին վերծանել երկու պարզ նախադասության (Ամուսնացի՛ր ինձ հետ. ինձ վիզա է հարկավոր (Marry me, I need a visa.)) հետևում թաքնված այս տեղեկատվությունը: Դա թույլ է տալիս լեզվական միջոցների տնտեսմամբ խոսքն ավելի տպավորիչ, հոլմորով հարուստ, միևնույն ժամանակ տեղին ու ազդեցիկ դարձնել:

Այժմ դիտարկենք հանրագիտարանային կանխենթադրույթների դերը տեքստի մակերեսային կառուցվածքից տեղեկատվության որոշակի հատված բաց թողնելու հարցում, ինչը բնորոշ է գիտական խոսքին:

Այսպես՝

In a few weeks, we'll be commemorating the 50th anniversary of "the most dangerous moment in human history." Now, those are the words of historian, Kennedy adviser, Arthur Schlesinger. He was referring, of course, to the October 1962 missile crisis, "the most dangerous moment in human history." Others agree. Now, at that time, Kennedy raised the nuclear alert to the second-highest level, just short of launching weapons. He authorized NATO aircraft, with Turkish or other pilots, to take off, fly to Moscow and drop bombs, setting off a likely nuclear conflagration. (Ch.O.W.: 34:16-35:04)

Տվյալ օրինակում Ն. Խոմսկին անդրադարձ է կատարում 1962 թվականի հոկտեմբերին Կուբայում խորհրդային միջուկային հրթիռների տեղակայման առթիվ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև տեղի ունեցած 13-օրյա բախմանը, որը պատմության մեջ հայտնի է Կարիբյան (Կուբայի) ճգնաժամ անվամբ, երբ միայն հրաշքով Սառը պատերազմը չվերածվեց նոր համաշխարհային պատերազմի: Ելույթ ունեցողը, ենթադրելով, որ մարդիկ, ովքեր եկել են ունկնդրելու իր դասախոսությունը, բավարար չափով տիրապետում են պատմությանը, ունեն համապատասխան գիտելիքներ, հարկ չի համարում մանրամասնել, թե ինչ ասել է 1962 թվականի հոկտեմբերի հրթիռային ճգնաժամ: Դրա մասին գիտելիքն այս դեպքում հանդես է գալիս հանրագիտարանային կանխենթադրույթի դերում: Այն թույլ է տալիս ելույթ ունեցողին խնայել լեզվական միջոցներն ու ելույթին հատկացված ժամանակը և դրանով իսկ ունկնդիրների ուշադրությունը հրավիրել նոր ու ավելի կարևոր տեղեկատվության վրա:

Անգլերեն գիտական դիսկուրսում բազմաթիվ են նաև օրինակները, որտեղ տեքստի խոսքման հարցում որպես որոշիչ գործոն հանդես է գալիս իրադրությունը, որում տեղի է ունենում հաղորդակցությունը: Տվյալ դեպքում տեքստի խոսքումը տեղի է ունենում տեղեկատվության այնպիսի հատվածների բացթողման շնորհիվ, որոնք հնարավոր է վերականգնել հաղորդակցության պահին հաղորդակցության մասնակիցներին շրջապատող առարկաների, ինչպես նաև խոսակիցների կիրառած հարալեզվական միջոցների՝ ժեստերի ու դիմախառի միջոցով: Առաջին դեպքում անգլերեն գիտական խոսքում հանդես եկող խոսքումը տեղի է ունենում աղյուսակների, գծապատկերների, նկարների և այլ տեսաձայնային միջոցների առկայության շնորհիվ, որոնք ամփոփ կերպով ներկայացնում են փաստական տվյալներ պարունակող այն տեղեկատվությունը, որը ամբողջական նախադասություններով արտահայտված լինելու դեպքում ոչ միայն անտեղի կիսեր խոսողի ժամանակը, այլև անհարկի կոժվարացներ դրա ընկալումը: Ինչպես հայտնի է, թվերով արտահայտված քանակական տվյալներն առավել

մատչելի և ընկալելի են, երբ տեսանելի են և ներկայացված են համակարգված ձևով: Ի դեպ, տեղեկատվության խտացման այս միջոցը հատուկ է ինչպես գրավոր գիտական տեքստերին, այնպես էլ բանավոր ելույթներին: Դիտարկենք հետևյալ օրինակը.

And that's something the oceans have been doing for us for a long time. As far back as we can go, we've seen an increase in the amount of food we've been able to harvest from our oceans. It just seemed like it was continuing to increase, until about 1980, when we started to see a decline. You've heard of peak oil. Maybe this is peak fish. I hope not. I'm going to come back to that. But you can see about an 18-percent decline in the amount of fish we've gotten in our world catch since 1980. And this is a big problem. It's continuing. This red line is continuing to go down... (S.S.O.F.W.: 1:30-2:04)

Այս օրինակը բանավոր ելույթից է, որի ժամանակ խոսողը ներկայացնում է ձկնային պաշարների քանակական փոփոխության պատմությունը՝ բանավոր խոսքն ուղեկցելով էկրանին ցուցադրվող գծապատկերով: Նա իր խոսքում նշում է, որ մինչև 1980 թվականը ձկնային պաշարները շարունակում էին աճել, որից հետո սկսում են քանակապես անկում ապրել: Սակայն բանավոր խոսքում չեն նշվում քանակական աճի և նվազման կոնկրետ ցուցանիշները՝ արտահայտված թվերով՝ ըստ տարեթվերի, որոնք, փոխարենը, ունկնդիրները տեսնում են էկրանին պատկերված գծապատկերի վրա: Բացի այդ, աճը ցույց տվող կորը գծապատկերի վրա նշված է կապույտ գույնով, իսկ նվազումը պատկերողը՝ կարմիրով, և խոսքի ընթացքում ելույթ ունեցողը, անդրադառնալով ձկնային պաշարների քանակական անկմանը, նշում է. «...Այս կարմիր գիծը շարունակում է իջնել...»: Գծապատկերին նայելով՝ ունկնդիրները միանգամից հասկանում են, թե խոսքն ինչի մասին է, ինչը թույլ է տալիս ելույթ ունեցողին խուսափել ավելորդ ժամանակ և լեզվական միջոցներ վատնելուց:

Ժեստերը և դիմախաղը գրեթե միշտ ուղեկցում են բանավոր խոսքին՝ իրենց ուրույն մասնակցությունն ունենալով իմաստաստեղծման գործընթացին, ինչը դրսևորվում է դրանց իրականացրած տարբեր գործառույթների միջոցով: Մասնավորապես՝ դրանք խոսքին հաղորդում են արտահայտչականության, իրականացնում են բացատրական և նկարագրական գործառույթ,

ինչպես նաև փոխարինում են լեզվական տարրերին՝ այդպիսով հանդես գալով որպես լեզվական տնտեսման միջոց: Այս վերջին գործառնությունը դրանք տեղեկատվությունը ներակա կերպով ներկայացնելու միջոցով հաճախնպաստում են տեքստի խտացմանը:

Այսպես՝

...You know, when the telephone arrived people did not know how to deal with it. They didn't know what to say /DC gestures as if picking up the phone/: when they picked up the phone /DC gestures as if picking up the phone/ they would shout and say, "Who is that? Are you there?", and so on. Today we just go /DC gestures as if picking up the phone again/ "Hello!" or we give the telephone number /again DC gestures as if picking up the phone/ or whatever it is... (C.E.N.T.E.: 1:03-1:19)

Տվյալ օրինակը, որը Դեյվիդ Քրիսթալի՝ անգլերենի վրա նորագույն տեխնոլոգիաների ազդեցության վերաբերյալ ելույթից է, լուսաբանում է, թե ինչպես կարող է խոսողի մեկ ժեստը փոխարինել մի ամբողջ ասույթի: Խոսելով հեռախոսի նկատմամբ մարդկանց վերաբերմունքի մասին, երբ այն նոր-նոր էր գործածության մեջ մտել, Դեյվիդ Քրիսթալն ասում է. «Սկզբում մենք չգիտեինք՝ ինչ ասել»: Եվ ձեռքով շարժում է անում՝ իբր վերցնում է հեռախոսը՝ այսպիսով ընդամենը մեկ շարժումով «ասելով»՝ երբ վերցնում էինք խոսափողը: Այնուհետև շարունակելում է՝ ասելով. «Իսկ այսօր մենք պարզապես ասում ենք՝ ալո (Today we just go "Hello!")»: Միաժամանակ ձեռքով անում է նույն՝ երևակայական խոսափողը վերցնելը պատկերող շարժումը՝ դրանով իսկ, առանց խոսքային միջոցներ գործածելու, դահլիճում ներկա գտնվողներին «ասելով». «...Իսկ այսօր մենք խոսափողը վերցնում ենք և պարզապես ասում՝ ալո»: Այսպիսով՝ խոսողը տնտեսում է լեզվական միջոցները ժեստերի օգնությամբ խոսքի ձևականորեն արտահայտված կառուցվածքից ամբողջական նախադասություններ, հետևաբար և դրանցով հաղորդվող արտակա տեղեկատվությունն քայքայելու միջոցով: Դա ծառայում է մի քանի նպատակի՝ խուսափել անհարկի կրկնություններից, դրանով իսկ արտահայտչականությունն հաղորդել խոսքին, խնայել ժամանակը՝ հնարավորինս կարճ խոսելով և, որպես վերջնարդյունք, ելույթը տպավորիչ և հետաքրքիր դարձնել դահլիճում հավաքվածների համար:

The internet arrives not so long ago. You, guys, here, most of you have never known a world without the internet, those of us who are slightly less young /DC gestures to point to himself and the man who hosts the talk/ well remember a world without the internet... (C.E.N.T.E.: 2:20-2:35)

Այս օրինակում, խոսելով այն մասին, որ, ի տարբերություն նրանց, ովքեր համեմատաբար ավելի տարիքով են, երիտասարդները չեն պատկերացնում աշխարհն առանց համացանցի, Դեյվիդ Քրիսթալը «...ովքեր համեմատաբար ավելի տարիքով են... (...those of us who are slightly less young...)» արտահայտությունն արտաբերելիս ձեռքով շարժում է անում՝ մատնանշելով իրեն և ուսանողների հետ հանդիպումը վարողին, ով իր հասակակիցն է: Այդպիսով՝ խոսողը առանց լեզվական միջոցների ճշգրտում է, թե «համեմատաբար ավելի տարիքով» ասելով՝ ում նկատի ունի: Սրանով խոսողը ոչ միայն խուսափում է ավելորդ, անհարկի ասույթի գործածությունից, այլև ավելի արտիստիկ ու անմիջական է դարձնում իր ելույթը և դրամիջոցով տեղի ունեցող շփումն ուսանողների հետ:

Այսպիսով՝ վերասույթային մակարդակում տեքստը սեղմելու առանձնահատկությունների մեր վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ անգլերեն գիտական խոսքում նշված մակարդակում լեզվական տնտեսման միջոցի դեր հաճախ կատարում են խոսքնկերների՝ տեքստային, կենցաղային և հանրագիտարանային կանխենթադրույթների տեսքով հանդես եկող համատեղ գիտելիքը, գրավոր կամ բանավոր խոսքին ուղեկցող գծապատկերային, աղյուսակային և այլ տիպի պատկերները, ինչպես նաև (բանավոր խոսքի դեպքում) խոսողի կիրառած հարալեզվական միջոցները: Դրանք, ծառայելով տեքստի շրջանակներում տեղեկատվության որոշակի հատված ներակա կերպով հաղորդելուն և ներակա տեղեկատվությունը համարժեք կերպով վերականգնելուն, իրականացնում են տեքստակազմիչ գործառույթ:

ՆԱՆՈՒԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Դ. Քրիսթալի «Լեզվաբանության և հնչյունաբանության բառարանում» նախադրույթը (proposition) մեկնաբանվում է որպես փիլիսոփայությանը նից փոխառված տերմին, որը լեզվաբանական վերլուծությանը ներդրում սովորաբար վերաբերում է հաստատական նախադասության նշանակությանը: Յետևաբար դրան կարող է վերագրվել ճշմարտության արժեք (truth value): Այնուհետև նշվում է, որ միևնույն նախադրույթը կարող է արտահայտվել տարբեր լեզվական ձևերով, ինչպես օրինակ՝ The cat ate the meat, The meat was eaten by the cat և այլն: Մյուս կողմից՝ միևնույն նախադասությունը կարող է արտահայտել մի քանի նախադրույթներ: Օրինակ՝ Those nice red apples cost a lot նախադասությունն արտահայտում է հետևյալ նախադրույթները՝ the apples cost a lot, the apples are nice և the apples are red (Crystal 2008: 392-393): «Օքսֆորդի լեզվաբանական տերմինների համառոտ բառարանում» նախադրույթը սահմանվում է որպես այն ամենը, ինչ արտահայտված է պնդում պարունակող նախադասությամբ (CODL 2007: 324): Այլ կերպ՝ նախադրույթը վերաբերում է նախադասությամբ ներկայացված իրողությանը:

2. Ընդհանուր իմաստով «զեղչում» տերմինը (անգլերեն՝ ellipsis), որը ծագել է հունարեն ellipse բառից (վերջինս նշանակում է բացթողում, խախտում, թերություն), համաձայն իր ստուգաբանության, նշանակում է լեզվի տարբեր մակարդակներին պատկանող միավորների տարատեսակ բացթողումներ (Morozova 2005: 8):

3. Լ.Գ. Ղազարյանը նկատում է, որ զեղչման մեկնաբանությունը լեզու-խոսք երկատման տեսանկյունից, որը հանդիպում է 20-րդ դարի 50-60-ական թվականների լեզվաբանների աշխատություններում, սկիզբ է դրել զեղչման սահմանման հարցում երկու տարբեր մոտեցումներին, որոնք են՝ ա. զեղչում պարունակող կազմությունները դիտարկել որպես լեզվի համակարգում գոյություն ունեցող ինքնատիպ կառույցներ, բ. դրանք դիտարկել որպես մարդու խոսքային գործունեության անմիջական արդյունք (Kazaryan 2005: 86):

4. Չեղչված կառույցների մասին խոսելիս հարկ է նաև անդրադառնալ զեղչման և պարզեցիկ տարանջատման խնդրին:

Ինչպես զեղչումը, պարզելացիան նույնպես ծառայում է լեզվական միջոցները տնտեսելուն, սակայն դա անում է փոքր-ինչ այլ կերպ: Մասնավորապես, ի տարբերություն զեղչման, պարզելացիայի ենթարկված կառույցում լեզվական միջոցների տնտեսումը տեղի է ունենում ոչ թե ավելորդ տեղեկատվությունը բաց թողնելու, այլ ողջ կառույցի իմաստային բեռնվածությունը հիմնական մասի վրա թողնելու և դրա կրկնությունից խուսափելով նոր տեղեկատվությունը պարզելաթի միջոցով ներկայացնելու ու շեշտադրելու տեսքով: Բացի այդ, պարզելացիան հանդես է գալիս որպես հնչերանգի հաշվին ձևակերպված, առավելապես բանավոր խոսքի տարր, որը գրավոր խոսքում ֆիքսվում է կետադրության միջոցով՝ կատարելով խոսքի արտահայտչականությունը բարձրացնող շարահյուսական հնարի դեր: Եվ պատահական չէ, որ մեր կողմից դիտարկված գիտական հոդվածներում պարզելացիայի որևէ օրինակ չի հանդիպել, իսկ դասախոսությունների ու բանավոր ելույթների գրադարձումներում հայտնաբերվել է պարզելացիայի գործածության ընդամենը 3 դեպք: Յետևաբար կարող ենք պնդել, որ գիտական խոսքում պարզելացիան ունի գործածության շատ ցածր հաճախականություն: Ավելին՝ անգամ գործածության հազվագյուտ դեպքերում այն բնորոշ է անգլերեն գիտական խոսքի բանավոր դրսևորումներին, որտեղ մշտապես կատարում է շեշտադրման և խոսքին արտահայտչականության հաղորդման միևնույն գործառնությունը, որով հանդես է գալիս նաև բոլոր մյուս գործառնական ոճերում: Այլ խոսքով՝ պարզելացիան՝ որպես լեզվական տնտեսման միջոց, ընդհանուր առմամբ այնքան էլ էական դեր չի խաղում անգլերեն գիտական տեքստերի ստեղծման և հաջող իրացման հարցում:

5. Էլիմինացիան (elimination) առաջին անգամ ուսումնասիրվել է ֆրանսիացի լեզվաբանների, առաջին հերթին՝ Ծ. Բալիի և Ռ. Գոդելի կողմից որպես փոխակերպական մեթոդի հնարքներից մեկը (Kazaryan 2005: 83):

6. Օ.Վ. Գոֆմանը նկատում է, որ լեզվաբանական գրականության մեջ «անավարտ նախադասություն» և «զեղչված նախադասություն» տերմինները հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ, սակայն

իրականում դրանք լեզվի միանգամայն տարբեր փաստեր են (Гофман 2006: 13):

7. Վ.Ա. Կուրդյուովը նշում է, որ դժվար թարգմանվող «ստորոգելիություն (предикативность)» տերմինն անգլերենում հաճախ ներկայացվում է predicativity/predicateness համարժեքով, սակայն այս թարգմանությունը այն անպայմանորեն կապվում է նախադասության մեջ ստորոգյալի առկայության հետ (сказуемость), հետևաբար հեղինակն առավել նախընտրելի է համարում sentencehood փոխաբերությունը (Курдюмов 1999: 50):

8. Այսպիսով՝ նախադասության շարահյուսական կառուցվածքի այն ավանդական սկզբունքը, համաձայն որի՝ նախադասության ենթական պետք է անպայմանորեն արտահայտված լինի ուղղական հոլովով, իսկ ստորոգյալի գործառնությունը կարող է կատարել միայն բայի դիմավոր ձևը, խախտվում է: Անգլերենում գոյություն ունեն նորմատիվ կառույցներ, որոնցում պահպանված չէ տվյալ սկզբունքը, սակայն դրանք, անկասկած, ունեն ստորոգելիություն (Бариева 2005: 27): Այլ կերպ՝ դրանց հիմքում ընկած է ներակալերարվ ներկայացված սուբյեկտ-պրեդիկատ հարաբերությունը, որը մակերեսային կառուցվածքում արտակալերարվ ձևակերպված չէ:

9. Ն.Վ. Լագայը նշում է, որ նախադրության արտահայտման երկու շարահյուսական միջոց կա՝ առաջնային, այն է՝ պրեդիկատիվ կառույցով ձևակերպված, և երկրորդական, այն է՝ ոչ պրեդիկատիվ կառույցով ձևակերպված: Որպես վերջիններիս օրինակ բերում է դերբայական դարձվածները (Лгай 2007: 8): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Ն.Վ. Լագայի գործածած «ոչ պրեդիկատիվ» տերմինը վկայում է երկրորդական ստորոգում արտահայտող կառույցների կարգավիճակի վերաբերյալ լեզվաբանության մեջ առկա տարբեր, հաճախ նաև իրարամերժ մոտեցումների մասին: Այնուամենայնիվ, մենք չենք կարող ընդունել նշված տիպի կառույցների՝ ոչ պրեդիկատիվ լինելու հանգամանքը: Անշուշտ, դրանք արտահայտում են ստորոգում, սակայն յուրահատուկ կերպով: Այդ պատճառով էլ մենք դրանք համարում ենք պրեդիկատիվ կառույցներ, սակայն ներակաստորոգում արտահայտող:

10. Այս առումով մենք հարում ենք Մ.Յ. Բլոխի տեսակետին, ով դերբայական դարձվածով նախադասությունները դասում է կիսաբարդ (semi-composite/semi-complex) նախադասությունների շարքին՝ վերջիններս սահմանելով որպես “a sentence with more than one predicative lines which are expressed in fusion” (Blokh 1983: 340):

11. Լեզվաբանական հետազոտություններում բազմիցս հիշատակվել է Լեզվի եռաչափության մասին, որով պայմանավորված է Լեզվական երևույթների ուսումնասիրության հարցում եռափուլ մոտեցման անհրաժեշտությունը (Daneš 1974, Halliday 1974, Leech 1983, Levinson 1983, Yule 2002, Searle 1998, Cutting 2002, Widdowson 1996, Grice 1975): Յետևաբար մենք նույնպես մեր հետազոտության շրջանակներում հենվելու ենք այս սկզբունքի վրա:

12. Դերբայական դարձվածները նաև անվանում են «կրճատված ստորադաս նախադասություններ» (abbreviated clauses) տերմինով, որի հեղինակն է Ռ. Քվերկը (Quirk 1972):

13. Ժ. Ֆիրբասն իր կողմից մշակված «հաղորդակցական դինամիզմի (ՅԴ)» գաղափարը համարում է նախադասության առկայական տրոհման տեսության հիմնական հասկացույթներից մեկը՝ թեման, ռեման և այս տեսության մյուս առանցքային հասկացույթները սահմանելով ՅԴ-ի միջոցով: Նա նշում է, որ ՅԴ-ի գաղափարը հիմնված է այն փաստի վրա, որ Լեզվական հաղորդակցությունը ոչ թե կայուն, այլ դինամիկ գործընթաց է: Ըստ Ժ. Ֆիրբասի՝ ՅԴ-ն հաղորդակցության այն հատկանիշն է, որը դրսևորվում է հաղորդվելիք տեղեկատվությունը զարգացնելու և այդ զարգացումն առաջ տանելու միջոցով: Լեզվական միավորի ՅԴ աստիճան ասելով՝ Լեզվաբանը նկատի ունի, թե որքանով է տվյալ Լեզվական միավորը նպաստում հաղորդակցության զարգացմանը կամ «այն առաջ մղելուն», այսինքն՝ հայտնի տեղեկատվության հիման վրանոր տեղեկություն և հայտնելուն (Firbas 1971: 135-136):

ԳԼՈՒԽ 3

ՓՈՒԽԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ Լ ԵԶԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

3.1. Փոխաբերությունը՝ որպես իմաստի խոսքման

Լեզվաճանաչողական կադասար

Փոխաբերությունը հաճախ դիտարկվում է որպես բանաստեղծական և հռետորական խոսքին բնորոշ ոճական հնարք, որը, կարելի է ասել, հանդես չի գալիս առօրյա կենցաղային հաղորդակցության շրջանակներում: Ավելին՝ ընդունված է կարծել, որ փոխաբերությունը բացառապես լեզվական երևույթ է, այսինքն՝ այն վերաբերում է լեզվական միավորների ոլորտին, այլ ոչ թե մտածողությանը: Այս դասական մոտեցման իրավացիության հերքմամբ հանդես եկան Ջ. Լակոֆը և Մ. Ջոնսոնը իրենց հեղինակած «*Metaphors We Live By*» աշխատությամբ, որով առաջ քաշեցին և հիմնավորեցին այն տեսակետը, որ փոխաբերությունը կազմում է մեր առօրյա ի անբաժան մասը՝ դրսևորվելով ոչ միայն լեզվում, այլ և մեր մտածողության և գործունեության մեջ: Այլ կերպ ասած՝ մեր առօրյա կենցաղային հասկացողային համակարգը, որի շրջանակներում մենք մտածում և գործում ենք, իր բնույթով հիմնված է փոխաբերության վրա: Սա նշանակում է, որ մարդու ոչ միայն խոսքը, այլ և (և առաջին հերթին) մտածողական գործընթացները «փոխաբերական» են, այսինքն՝ փոխաբերությունների գոյությունը հնարավոր է խոսքում կամ դրանք ստանում են լեզվական արտահայտություն այն պարզ պատճառով, որ նախևառաջ գոյություն ունեն մարդու հասկացողային համակարգում: Յետևաբար Ջ. Լակոֆն ու Մ. Ջոնսոնը առաջարկում են փոխաբերությունները դիտարկել որպես փոխաբերական հասկացույթներ (Lakoff, Johnson 1980): Այսպիսով՝ մեր խնդիրն է ցույց տալ, թե ինչպես է խոսողի հասկացողային համակարգում տեղի ունենում իրականության երևույթների, առարկաների և դրանց միջև առկա հարաբերությունների արտացոլումը ամբողջական պատկերների՝ փոխաբերական հասկացույթների տեսքով, որոնք խոսողի մտքում իրականության

«խոսքում» միջոցի դեր են կատարում: Բացի այդ, կարևոր է բացահայտել, թե ինչպես են այդ պատկերները վերարտադրվում խոսքում փոխաբերությունների տեսքով, որոնք տվյալ դեպքում հանդես են գալիս որպես տեղեկատվության խոսքում միջոցի մաստաբանական-ճանաչողական մակարդակում: Հավասարապես կարևոր է նաև այն գործոնների վերհանումը, որոնք օգնում են խոսքի հասցեատիրոջը համարժեք կերպով ընկալել հաղորդվող տեղեկատվությունը, այսինքն՝ տվյալ դեպքում, հիմնվելով սեփական հասկացության ին համակարգի վրա, մտքում վերստեղծել և գվական «փաթեթավորմամբ»՝ փոխաբերությամբ մատուցված պատկերը՝ որպես իրականության խոսքված դրվագ, և մտովի վերականգնել իրականության այն երևույթները, առարկաները և դրանց միջև առկա հարաբերությունները, որոնք տվյալ պատկերի միջոցով փորձել են երկայացնել խոսողը:

Փոխաբերության ճանաչողական տեսության համաձայն՝ մարդու գիտակցության մեջ հասկացույթների խմբերի միջև գոյություն ունեն խորքային կառուցվածքային հարաբերություններ, որոնք թույլ են տալիս այս կամ այն հասկացույթն ընկալել մեկ ուրիշ հասկացույթի միջոցով (Крюкова 2000: 6): Փոխաբերությունը նշված խորքային հարաբերությունների իրացման արդյունք է, «մեր հասկացության ին համակարգի գլխավոր միջոցը, որի օգնությամբ մենք օբյեկտների մի խումբն ընկալում ենք օբյեկտների մեկ ուրիշ խմբի միջոցով» (Ченки 1996: 70): Որպես ասվածի ապացույց՝ կարելի է բերել անգլերենի up և down հասկացույթների վրա հիմնված փոխաբերությունների օրինակը [1]: Քանի որ ուղիղ կեցվածքը, որպես կանոն, ցույց է տալիս, որ անձը հպարտ է, ինքնավստահ, ունի բարձր տրամադրություն և այլն, happy հասկացույթը հաճախ հանդես է գալիս up (դեպի վեր, վերև, ավելի բարձր) իմաստն արտահայտող բառերի վրա հիմնված այնպիսի փոխաբերություններում, ինչպիսիք են՝ My spirits rose, That boosted my spirits, I'm feeling high և այլն: Մինչդեռ կորացած, կծկված, կուչ եկած կեցվածքը սովորաբար զուգորդվում է վիատվածության ու տխրության հետ: Հետևաբար sad հասկացույթը հաճախ իրացվում է down (դեպի ներքև, ցած, վար) բառի միջոցով, ինչպես օրինակ՝ I'm

feeling down փոխաբերու թյան մեջ: Այսպիսով՝ հուզական վիճակ ցույց տվող happy-sad հասկացույթները ֆիզիկական հատկանիշի (ուղիղ կամ կուչ եկած կեցվածք) առաջացրած գուգորդումների հիման վրա ընկալվում են ուղղություն ցույց տվող up-down հասկացույթների միջոցով: Իսկ փոխաբերությունն իր կառուցվածքում խտացնում և ամփոփ կերպով ներկայացնում է մարդու ֆիզիկական և հուզական վիճակի կապի մասին այսպատկերացումները:

Փոխաբերությունը հանդես է գալիս որպես միջոց, որի օգնությամբ խոսողը հաղորդում է նոր տեղեկատվությունն խոսքի հասցեատիրոջը հայտնի տեղեկատվության միջոցով: Օրինակ՝ This relationship is a dead-end street փոխաբերության մեջ (Lakoff, Johnson 1980: 44) հայտնի տեղեկատվությունն ամփոփված է a dead-end street բառակապակցության ուղիղ իմաստի մեջ: Մինչդեռ նոր է փակուղու (dead-end street) հատկանիշի վերագրումը անձնական հարաբերություններին (This relationship ...): Այսինքն՝ նոր է այն տեղեկությունը, որ տվյալ հարաբերությունները մտել են փակուղի, բարելավման որևէ հեռանկար չունեն: Այսպիսով՝ համադրելով a dead-end street բառակապակցության բառարանային իմաստը նշանակության հետ, որով այն հանդես է գալիս տվյալ համատեքստում, ընկալում ենք այս փոխաբերությունը: Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք բնութագրել փոխաբերության ընկալումը որպես մի գործընթաց, որի ժամանակ խոսքի հասցեատերը նոր տեղեկատվությունը համադրում է իր հիշողության մեջ ամրակայված արդեն իսկ հայտնի, հին տեղեկատվության հետ, ինչի հետևանքով ուղեղում տեղի է ունենում նախկին ազդակների՝ հիշողության մեջ պահպանվող հետքերի և դրսից եկող նոր ազդակների փոխազդեցություն [2]: Նման փոխազդեցության արդյունքում էլ ձևավորվում է **որակապես տարբեր, նոր կառույց, որի ներսում տեղի է ունենում տարբեր իրողությունների «միաձուլում», որն էլ սպյմանավորում է իմաստային խտացման մեխանիզմի գործառությունը:**

Հարց է առաջանում. ինչի՞ հիման վրա է տեղի ունենում նոր և հին տեղեկատվության համադրումը: Ինչպես արդեն նշել ենք, մտածողության գործընթացն իր բնույթով փոխաբերական է, և

այսպես կոչված «փոխաբերականացման» հիմքում ընկած է համաբանությունը՝ որպես չգիտակցվող ընդհանրացում: Վերջինս դիտարկվում է որպես տրամաբանական գործողություն, որը թույլ է տալիս մի առարկայի բնորոշ առանձնահատկությունները վերագրել մեկ ուրիշ առարկայի այդ առարկաների միջև առկա որոշակի ընդհանրության հիման վրա (Croft, Cruse 2004, Суровцев, Сыров 1999): Դիտարկենք Man is a wolf փոխաբերությունը (Croft, Cruse 2004: 206), որտեղ մարդ արարածին վերագրվում է գիշատչի հատկանիշ: Բանն այն է, որ հաճախակի են դեպքերը, երբ գայլերը հարձակվում են ընտանի անասունների վրա՝ գյուղացիներին պատճառելով մեծ նյութական կորուստներ: Այդ պատճառով մարդուն բնորոշ այնպիսի բացասական որակներ, ինչպիսիք են ագահությունը, դաժանությունը, հանուն սեփական շահի այլոց վնասելը, հաճախ զուգորդվում են գայլի կերպարի հետ: Նշված հատկանիշները հանդես են գալիս այն ընդհանրության դերում, որն ընկած է այս փոխաբերության հիմքում: Մյուս կողմից՝ բանահյուսության, առասպելաբանության մեջ, կրոնում գայլը, բացի չարիքի մարմնավորումից, հաճախ հանդես է գալիս նաև որպես խիզախության, ուժի, հավատարմության խորհրդանիշ: Յետևաբար տվյալ փոխաբերությունը, կախված համատեքստից, կարող էր մեկնաբանվել նաև որպես դրական հատկանիշի վերագրում մարդուն: Դա նշանակում է, որ փոխաբերությունը հաճախ իրացվում է ոչ թե օբյեկտիվ ընդհանրության, այլ տվյալ իրողությանը այս կամ այն հատկանիշի սուբյեկտիվ վերագրման հիման վրա: Ընդ որում, նման սուբյեկտիվ վերագրման հիմքերը կարող են միանգամայն վերացական լինել: Յետևաբար, ինչպես իրավամբ նկատում է Է.Վ. Գուբերնատորովան, փոխաբերությունը չի համեմատում իրողությունները՝ ընդգծելով միայն դրանք միավորող կայուն հարաբերությունը կամ հատկանիշը, այլ «դեմ հանդիման է հանում» դինամիկ հասկացություններ՝ փոխաբերության համալիր տեքստային կառուցվածքում խոսքնեղով այդ հասկացությունների կայուն և անկայուն բաղադրիչները: Կայուն բաղադրիչների նկատմամբ հատկապես անկայուն բաղադրիչների գերակայությունն է ընդլայնում խոսքի հասցեատիրոջ կողմից փոխաբերության

մեկնաբանության շրջանակը՝ ստիպելով վերջինիս հասկացության ին համակարգին օգտագործել ճանաչողական կառույցների ճկունության ու իրականացել իմաստային բաղադրիչների ճկուն ինտեգրում (Губернаторова 2003: 35): Այսպիսով՝ փոխաբերության իրացման գործընթացում, ի տարբերություն օբյեկտիվ միավորող հատկանիշի վրա հիմնված համեմատության, գործի են դրվում ոչ միայն ռացիոնալ ընդհանրության հայտնաբերմանը միտված, այլև նախևառաջ ոչ օրինաչափ, ոչ ավանդական բնույթի համաբանության բացահայտմանն ուղղված մտավոր գործընթացները: Վերջիններս ներառում են հաղորդակցության մասնակիցների ոչ միայն ռացիոնալ մտածողությունը, այլև փոխաբերությամբ ներկայացված իրականության ամբողջական պատկերի զգայական ընկալումը և վերաարումը վերջիններիս կողմից, որի արդյունքում ձևավորվում է այսպես կոչված «խտացված» նոր հասկացությա: Դա էլ, ստանալով լեզվական արտահայտություն, խոսքում իրացվում է որպես համալիր «խտացված» իմաստային ամբողջություն:

Չաշվի առնելով վերոնշյալը՝ մենք նպատակահարմար ենք գտնում փոխաբերությունը դիտարկել **որպես էներգիայի, տեղեկատվության և նյութի (հնչյուններով կամ գրային նշաններով ներկայացված լեզվական միավորի) եռամիասնություն կամ խտացում**, որը հանդես է գալիս որպես փոխաբերության բնորոշ առանձնահատկություն: Այժմ հարկ է անդրադարձնալ փոխաբերության՝ որպես իմաստային խտացման կառույցի նշված երեք բաղադրիչներին:

Պ.Ա.Ֆլորենսկին նկատում է. «խոսքի գործընթացը...անհատական և համամարդկային բանականության էներգիաների փոխներթափանցումն է: Այդ իսկ պատճառով խոսքում, որտեղ հանդիպում են այդ երկու էներգիաները, առկա են թե՛ մեկը, թե՛ մյուսը...» (տե՛ս Кузьмина 1999: 211): Փոխաբերությունն այն կառույցն է, որի ներսում տեղի է ունենում նշված երկու էներգիաների համատեղումը կամ խտացումը: Այսինքն՝ փոխաբերության դեպքում համամարդկային բանականության էներգիան հանդես է գալիս քարացած ավանդական ձևի (ուղիղ, բարարանային իմաստներով

հանդես եկող լեզվական միավորների), մինչդեռ անհատական էներգիան՝ այդ ձևը լցնող ոչ ավանդական, հաճախ նաև հուզական բովանդակության (հաղորդակցական ակտի շրջանակներում այդ լեզվական միավորների յուրահատուկ համադրման արդյունքում ի հայտ եկած նոր ամբողջական, խտացված իմաստի) տեսքով: Դրանց հակադրամիասնության շնորհիվ տեղի է ունենում նոր տեղեկատվության հաղորդումը և համարժեք ընկալումը խոսքի հասցեագրողի և հասցեատիրոջ հասկացության ին համակարգերում ամուր և ստած հայտնի տեղեկատվության հետգուգորդման միջոցով:

Ուստի, հետևելով Է.Վ.Գուբերնատորովայի տեսակետին,

փոխաբերությանը կարող ենք դիտարկել որպես «տեղեկատվության քվանտ, որը խախտում է խոսքի հասցեատիրոջ հասկացության ին համակարգի հարաբերական կայունությանը՝ միաժամանակ խթանելով դրանում նոր/երկրորդային կառույցի առաջացումը... Փոխաբերության իմաստավորման և մեկնաբանության արդյունքում վերականգնվում է վերջինիս հասկացության ին համակարգի հարաբերական կայունությանը, տեղի է ունենում վերակազմակերպում» (Губернаторова 2003: 39): Հենց այդ փուլի ընթացքում էլ ամբողջական է դառնում իմաստային խտացման մեխանիզմի աշխատանքը: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել այն սկզբունքների բացահայտման կարևորությունը, որոնք թույլ են տալիս խոսողին հնչեցնել կամ գրել մի բան, մինչդեռ նկատի ունենալ բոլորովին այլ բան, ինչպես նաև թույլ են տալիս խոսքի հասցեատիրոջը գրավոր կամ բանավոր կերպով ստացված հաղորդումից վերծանել, թե իրականում ինչ նկատի ունի խոսողը, երբ վերջինիս կողմից գործածված բառերի իմաստներն ակնհայտորեն չեն համապատասխանում նրա հեղինակած ասույթի իմաստին: Այլ կերպ՝ հանգում ենք խոսողական ակտերի տեսությանը, որի դիտանկյունից Ջ. Սերլը **փոխաբերությունը դիտարկում է որպես խոսողի իմաստի և նախադասության բառացի իմաստի տարբերության մասին դրույթի մասնավոր դրսևորում**: Որպես տվյալ երևույթի այլ դրսևորումներ նա նշում է անուղղակի խոսողական ակտերը և հեգնանքը, իսկ փոխաբերական իմաստը բնորոշում է որպես խոսողի ասույթի իմաստ (Searle 1990): Գիտական

դիսկուրսում փոխաբերության գործառույթները վեր հանելու նպատակով անհրաժեշտ է պարզել այն գործոնները, որոնք թույլ են տալիս խոսողին փոխաբերության միջոցով հաղորդել տեղեկատվություն (արտահայտել իմաստ), որն ուղղակիորեն վերծանելի չէ այդ փոխաբերությունը կազմող լեզվական միավորների՝ բառերի իմաստներից (նախադասության բառացի իմաստից), իսկ խոսքի հասցեատիրոջը՝ վերականգնել և համարժեք կերպով ընկալել այդ տեղեկատվությունը: Ինչպես ցույց կտա գործնական օրինակների վերլուծությունը, այդ գործոնների շարքում մեծ է նաև արտալեզվական գիտելիքների դերը:

Փոխաբերության՝ որպես իրականության այս կամ այն դրվագի ներկայացմանը ծառայող ճանաչողական կադապարի դերը իմաստաբանական-ճանաչողական մակարդակում տեղեկատվության խոսցման, հետևաբար և լեզվական միջոցների տնտեսման հարցում հիմնավորվում է նաև նյարդաֆիզիոլոգիայի տեսանկյունից: Ապացուցված է շրջապատող իրականության ամբողջական, համալիր պատկերի ստեղծման նպատակով գլխուղեղի աջ և ձախ կիսագնդերի դիսամիկ և ֆունկցիոնալ փոխազդեցության մասին դրույթը: Որպես նշված փոխազդեցության արդյունքում ուղեղի կողմից ճանաչված և ամբողջական պատկերի մեջ խոսցված իրականության դրվագը խոսքային միջոցներով հնարավորինս յուրօրինակ, ոչ ստանդարտ կերպով ներկայացնելու միջոց հանդես է գալիս փոխաբերությունը: Ըստ Ն.Պ. Բեխտերևայի՝ ուղեղի արդյունավետ աշխատանքի հիմնական սկզբունքը դիսամիկությունն է, որն ուղղակիորեն կապված է ուղեղի ճկունության և տնտեսման հատկության հետ: Ճանաչողության կարծրատիպային միջոցները, շրջապատող իրականության վերաբերյալ կարծրատիպային տեղեկատվությունն ուղեղի աշխատանքը դարձնում են «միապաղաղ», և որպես այդ միապաղաղության դեմ պայքարի միջոց ուղեղն ընտրում է «համակարգի դիսամիկ վերակազմակերպումը», որը հնարավոր է դառնում ոչ կարծրատիպային տեղեկատվություն պարունակող փոխաբերության միջոցով (Бехтерева 1974: 185): Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ մտավոր գործընթացները, այդ թվում՝ խոսքամտածողական գործընթացը, ունեն բազմաթիվ ճկուն

օղակներ, որոնք պատասխանատու են ոչ կարծրատիպային տեղեկատվության մշակման և վերամշակման համար: Իսկ ինչ վերաբերում է տնտեսման սկզբունքին, վերջինս, հիմնված է ինտելոզի ուղեղի ինտեգրատիվ գործառույթի վրա, հանդես է գալիս որպես ուղեղի համակարգերի արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայման: Որպես նշված սկզբունքի էզզվամտածողական համահարաբերական իմաստաբանական-ճանաչողական մակարդակում հանդես է գալիս փոխաբերության մեթոդներ կայացված ճանաչողական կադասարը: Այսպիսով, էլնելոզ մեր ուսումնասիրության առարկայի առանձնահատկություններին, նպատակահարմար ենք գտնում փոխաբերությունը դիտարկել որպես **իրականության ոչ կարծրատիպային ճանաչողության և վերարտադրման էզզվամտածողական կադասարի վրա հիմնված իմաստի խոսքում, որը թույլ է տալիս, էզզվական միջոցների գործածությունը նվազագույնին հասցնելով հանդերձ, իրականության այս կամ այն դրվագը խոսքայնացնել հնարավորինս ամբողջական և ընդգրկուն պարկերի ստեղծմամբ՝ արդյունքում նաև արագացնելով տեղեկատվության հաղորդման գործընթացը:** Անշուշտ, փոխաբերությունը՝ որպես իմաստային խոսքման մեխանիզմ, հատուկ է մարդկային մտածողությանն ընդհանրապես՝ անկախ էզզվի գործածության ոլորտից, սակայն սույն ուսումնասիրության շրջանակներում մեր խնդիրն է պարզել փոխաբերության՝ որպես իմաստի խոսքման տեսքով իրացվող էզզվական տնտեսման միջոցի գործառույթներն անգլերեն գիտական խոսքի գրավոր և բանավոր դրսևորումներում: Նշված խնդրի իրականացման համար նախևառաջ անհրաժեշտ է անդրադառնալ գիտական դիսկուրսում փոխաբերության գործածության առանձնահատկություններին, ինչն էլ հաջորդ ենթագլխի քննության առարկան է:

**3.2. Փոխաբերության գործառույթան
յ ու ր ա հ ա տ կ ու թ յ ու ն ն եր ը գ ի տ ա կ ան դ ի ս կ ու ր ս ու մ**

Վերջին ժամանակներում բազմաթիվ գիտական աշխատություններին շրջանակներում հաճախ անդրադարձ է կատարվում գիտական դիսկուրսի տարբեր ժանրային դրսևորումներում փոխաբերության գործառույթանը և դերին:

Գիտական հաղորդակցության ոլորտում փոխաբերության դերի մեկնաբանության հարցում գոյություն ունի երկու հիմնական մոտեցում: Համաձայն առաջին և առավել տարածված մոտեցման՝ փոխաբերությունը գիտական խոսքում կատարում է գրեթե նույն գործառնությունը, ինչ գեղարվեստական ստեղծագործության շրջանակներում: Այսինքն՝ փոխաբերությունը գիտական ուղղվածությամբ տեքստերում նույնպես հանդես է գալիս որպես ոճական հնարք, կատարում է խոսքին արտահայտչականություն և հաղորդելու գործառնություն: Սակայն, ի տարբերություն գեղարվեստական գրականության, որտեղ փոխաբերության միջոցով հեղինակը փորձում է գեղագիտական ազդեցություն գործել ընթերցողի վրա, գիտական խոսքում փոխաբերությունը ծառայում է շարադրանքի մատչելիությունն ապահովելուն և ըմբռնումը հեշտացնելուն, քանի որ թույլ է տալիս ավելի պատկերավոր կերպով ներկայացնել գիտական աշխատության շրջանակներում մեկնվող այս կամ այն երևույթը: Այս դեպքում, իհարկե, զուգահեռ իրացվում է նաև փոխաբերության գեղագիտական գործառնությունը: Այլ խոսքով՝ փոխաբերությունը «կոտրում» է գիտական շարադրանքի միապաղաղությունը, չեզոքությունը, հետաքրքրությունն և դինամիկությունն հաղորդում դրան՝ այդ կերպ օգնելով խոսողին գրավել և պահել խոսքի հասցեատիրոջ հետաքրքրությունն ու ուշադրությունը խոսքի առարկայի նկատմամբ:

Ի տարբերություն առաջին մոտեցման, որը փաստորեն փոխաբերությունը դիտարկում է որպես իրականության ներկայացման այլ ընտրանքային, պատկերավոր միջոց, փոխաբերության ճանաչողական տեսության դրույթների վրա հիմնված երկրորդ մոտեցումը **փոխաբերությունը համարում է գիտական գործունեության հիմնական սկզբունք, գիտական մտածողության հիմքում ընկած հիմնական մեխանիզմ** (Мишанкина 2010: 23): Այսինքն՝ փոխաբերությունը ոչ թե պարզապես ոճական հնարք է, որի գործածությունը պայմանավորված է կոնկրետ հեղինակի անհատական ոճի առանձնահատկություններով, այլ էզովամտածողական գործունեության, մասնավորապես՝ գիտական մտածողության և որպես դրա արդյունք հանդես եկող գիտական

խոսքի անբաժան մաս, բնորոշ առանձնահատկություն, գոյաբանորեն պայմանավորված տարր: Որպես այդպիսին փոխաբերությունը թույլ է տալիս հանդես գալ այն հանգամանքը, որ այն իր կառուցվածքում խոսցնում է հին և նոր տեղեկատվությունը, այսինքն՝ հնարավոր է դարձնում այս կամ այն իրողության ընկալումը մեկ ուրիշ իրողության մասին գիտելիքների հաշվին: Վ. Գեյզենբերգը պնդում է, որ «... մատերիայի փոքրագույն մասնիկների նկարագրության համար օգտագործվում են միանգամայն տարբեր, նույնիսկ հակասական պատկերներ ... Իսկ գործընթացի համարժեք նկարագրությունն ի վերջո հաջողվում է միայն տարբեր պատկերների փոխներգործության հաշվին... Ֆիզիկոսը, խոսելով ատոմների աշխարհում տեղի ունեցող գործընթացների մասին, հաճախ օգտվում է ոչ ճշգրիտ փոխաբերական լեզվից և, ինչպես բանաստեղծը, ձգտում է պատկերների ու համեմատությունների օգնությամբ ցանկալի ուղղության վրա դնել խոսքի հասցեատիրոջ միտքը» (Гейзенберг 1963: 217-218): Ջ. Լակոֆն ու Մ. Ջոնսոնն էլ իրենց հերթին նկատում են, որ «այսպես կոչված նեղ ինտելեկտուալ հասկացությունները, ինչպես օրինակ՝ գիտական տեսության մեջ հանդիարդ հասկացությունները հաճախ, միգուցե և միշտ, հիմնված են փոխաբերությունների վրա, որոնք ունեն ֆիզիկական և/կամ մշակութային հիմք» (Lakoff, Johnson 1980: 18-19): Մյուս կողմից՝ փոխաբերության գործածությունը գիտական դիսկուրսում թելադրված է նաև գիտական ոճի առանձնահատկություններով՝ մի կողմից՝ շարադրանքի հակիրճության, մյուս կողմից՝ բովանդակության ընդգրկունության պահանջներով: Ինչպես երևում է փոխաբերության մեր սահմանումից, փոխաբերությունը միաժամանակ բավարարում է նշված երկու պահանջներն էլ:

Փոխաբերության բնույթի վերոնշյալ երկու մեկնաբանությունները, ըստ երևույթին, ոչ թե արտահայտում են երկու հակադիր մոտեցումներ, այլ փոխադարձաբար լրացնում են մեկը մյուսին: Ինչպես արդեն նշել ենք, փոխաբերությունը դրսևորվում է ոչ միայն խոսքում, այլև մտածողության մեջ: Փոխաբերությունների գոյությունը խոսքում հնարավոր է այն պարզ պատճառով, որ նախևառաջ դրանք գոյություն ունեն մարդու

հասկացու թայ ին համակարգում, մարդու մտածողական գործընթացներն ինքնին «փոխաբերական» են: Յետևաբար, փոխաբերությունը որպես հուզական կամ ճանաչողական որակելով, նկատի ունենք խոսքում դրա իրականացրած առաջնային գործառույթը, քանի որ յուրաքանչյուր փոխաբերությունն իր բնույթով, գոյաբանությամբ ճանաչողական է: Մյուս կողմից՝ որքան էլ տվյալ փոխաբերությունը խոսքին հուզականությունն հաղորդելու տեսանկյունից չեզոք լինի (խոսքն իհարկե գիտական խոսքում հանդես եկող, գիտական հաղորդակցության առանձնահատուկ նպատակներին ծառայող փոխաբերությունների մասին է), կոնկրետ անհատի, հեղինակի կողմից ստեղծված լինելով՝ այն այս կամ այն չափով, թեկուզ շատ աննշան կերպով պարունակում է սուբյեկտիվ գնահատականի և հուզականության որոշակի տարրեր: Այլ հարց է, թե տվյալ դեպքում փոխաբերության խոսքային իրացման ժամանակ որ գործառույթն է գերակշռում՝ սուբյեկտիվ գնահատման, թե անվանողական: Ըստ այդմ էլ տարբերակում ենք հուզական (որտեղ գերակշռում է սուբյեկտիվ գնահատման գործառույթը) և բուն ճանաչողական (որտեղ համապատասխանաբար գերակշռում է անվանողական գործառույթը) տեսակները [3]:

Ինչպես հուշում են փոխաբերության այս երկու տեսակների անվանումները, հուզական փոխաբերության հիմքում ընկած է խոսողի կողմից խոսքի օբյեկտին սուբյեկտիվ-հուզական գնահատական տալը և դրա համարժեք ընկալումը խոսքի հասցեատիրոջ կողմից, որի արդյունքը խոսքի հասցեատիրոջ հուզական աշխարհի վրա ներազդելով նրա վրա գեղագիտական ազդեցություն գործելն է: Ասվածից կարելի է ենթադրել, որ նշված գործառույթով հանդես եկող հուզական փոխաբերության գործառույթան հիմնական ոլորտը գեղարվեստական գրականությունն է, մինչդեռ բուն ճանաչողական փոխաբերության հիմքում ընկած է տարբեր օբյեկտների (դրանք կարող են լինել առարկաներ, երևույթներ, հարաբերություններ և այլն) տարբեր հատկությունների միջև ընդհանրությունների հաստատումը, այսինքն՝ մի օբյեկտի ճանաչումը մեկ ուրիշի միջոցով: Նման գործառույթը առավել ապես ծառայում է գիտական

հաղորդակցության նպատակներին: Ինչպես իրավամբ նկատում է Մ.Ա. Բուրմիստրովան, «ճանաչողական փոխաբերությունն այսպես թե այնպես էական դեր է խաղում գիտական տեքստերի ստեղծման հարցում...» (Бурмистрова 2005: 47-48):

Խոսելով գիտական դիսկուրսում հանդես եկող փոխաբերության գործառնության յուրահատկությունների մասին՝ չենք կարող չանդրադառնալ այսպես կոչված «պատրաստի» (ready-made) փոխաբերություններին, որոնք առկա են լեզվում որպես քարացած արտահայտություն և կարող են հանդես գալ բազմաթիվ տեքստերում միևնույն իմաստով: Ավելին, բազմակի գործածության արդյունքում դրանք նույնիսկ դադարել են ընկալվել որպես փոխաբերություն և ավելի շուտ ընկալվում են որպես փոխաբերական իմաստով (կամ փոխաբերության վրա հիմնված երկրորդային, ածանցյալ իմաստով) գործածված բառ կամ բառակապակցություն, որը, որպես կանոն, արձանագրված է բառարաններում որպես լեզվական (ոչ թե խոսքային) միավոր: Խոսքը Ի.Ռ. Գալպերինի կողմից սահմանված «ծեծված» կամ «մեռած» փոխաբերությունների մասին է (trite or dead metaphors) (Galperin 1977: 141): Տվյալ նախադասության մեջ՝ *This is not a research field of mine. I can illustrate only from my own experience...* (C.P.P.C.T.Ch.L.G.S.I.: 1), ունենք a research field of mine բառակապակցությունը: Այն, ի սկզբանե փոխաբերության վրա հիմնված լինելով (տվյալ գիտնականի կողմից կամ գիտաճյուղի շրջանակներում քննվող խնդիրների ամբողջությունը համեմատվում է field բառով ներկայացված «դաշտի»՝ որպես որոշակի սահմաններով այլ տարածքներից անջատված առանձին հողատարածքի հետ), կորցրել է փոխաբերականությունը, քանի որ տարբեր տեքստերում տվյալ նշանակությամբ հաճախ գործածվելու արդյունքում field բառը ձեռք է բերել երկրորդ՝ «բնագավառ» իմաստը: Փոխաբերության այս տեսակը մենք անվանում ենք կայուն կամ քարացած և վերագրում ոչ թե խոսքի, այլ լեզվի ոլորտին: Եվ քանի որ այդ այսպես կոչված «փոխաբերությունները» խոսողի կողմից կոնկրետ հաղորդակցական ակտի շրջանակներում լեզվական միջոցների յուրօրինակ ընտրության և համադրման արդյունք չեն, այլ պարզապես պատրաստի կերպով առկա են լեզվում որպես բառերի

երկրորդային, փոխաբերական իմաստների իրացում, կարելի է ասել, դրանք հանդես չեն գալիս որպես լեզվական տնտեսման միջոց: Մինչդեռ, ուսումնասիրված գրավոր և բանավոր տեքստերի վերլուծություները երևան է հանել բազմաթիվ փոխաբերություններ, որոնք կարելի է միավորել մեկ խմբում՝ **անհատական-հեղինակային** անվան տակ [4]: Վերջիններս զուտ խոսքային միավորներ են, ստեղծված կոնկրետ հեղինակի կողմից կոնկրետ հաղորդակցության շրջանակներում, հետևաբար և անընկալելի տվյալ համատեքստից դուրս: Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ լեզվական միջոցների յուրօրինակ ընտրության և ոչ ստանդարտ համադրման հաշվին անհատական-հեղինակային փոխաբերությունները հանդես են գալիս որպես որքան հնարավոր է քիչ լեզվական միջոցներով հնարավորինս մեծ ծավալով տեղեկատվության փոխանցման միջոց: Հետևաբար որպես լեզվական տնտեսման միջոց գիտական դիսկուրսում առավելապես հանդես են գալիս հենց անհատական-հեղինակային փոխաբերությունները:

Այսպիսով՝ անգլերեն գիտական խոսքի գրավոր և բանավոր դրսևորումներում հանդես եկող փոխաբերությունները կարող ենք բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝ քարացած կամ ծեծված փոխաբերություններ, հուզական փոխաբերություններ և բուն ճանաչողական փոխաբերություններ (փոխաբերության վերջին երկու տեսակները բնականաբար համարվում են անհատական-հեղինակային), որոնց գործառության յուրահատկություններն անգլերեն գիտական խոսքում բացահայտվում են ստորև ներկայացված գործնական օրինակների վերլուծության միջոցով:

Ինչպես արդեն նշել ենք, գիտական խոսքին առավել բնորոշ են բուն ճանաչողական փոխաբերությունները, թեպետ վերլուծված օրինակներում թեկուզև հազվադեպ, բայց հանդիպում ենք նաև փոխաբերության հուզական տեսակին: Օրինակ՝

It has been argued by some that Einstein's richly creative output in this period was partly thanks to his role at the patent office. Inspecting innumerable practical applications no doubt helped hone his analytical skills. He also had plenty of time sitting at a desk and carrying out relatively undemanding tasks, which allowed his creative imagination to get to work. He himself came to believe that he probably had

*benefitted from being outside the academic machine, **which would have demanded a conveyor belt of research papers from him.** The temptation, he felt, would have been to churn out mundane work. The patent office allowed him to focus on only the extraordinary. (S.Th.E.: 46)*

Տվյալ օրինակում փոխաբերությունը հիմնված է machine բառի ուղիղ իմաստի և փոխաբերական իմաստի փոխադրեցության վրա: Տվյալ բառն իր փոխաբերական իմաստով (մարդկանց խումբ, ուժեր ղեկավարում են կազմակերպություն կամ այդ կազմակերպության անդամներն են (machine բառի երրորդ իմաստ, OALD 2006: 886)) հանդես է գալիս academic machine արտահայտության մեջ, որը նշանակում է «համալսարանական ոլորտում ներգրավված գիտնականներ», մինչդեռ *which would have demanded a conveyor belt of research papers from him* փոխաբերությունը հնարավոր է համարժեք կերպով հասկանալ machine բառի առաջին՝ «հաստոց» իմաստի համատեքստում: Այսինքն՝ ակադեմիական ոլորտում ներգրավված գիտնականների գործունեությունը համեմատվում է գործարանային հաստոցի հետ, քանի որ նրանցից պահանջվում է սեղմ ժամկետներում կանոնավոր կերպով գրել գիտական աշխատությունների ճիշտ այնպես, ասես նրանք գործարանային հաստոց լինեն, որն ավտոմատ կերպով հարահոսի ժապավենի վրա (conveyor belt) անդադար արտադրանք է մատակարարում: Այսպիսով՝ ընդամենը մեկ փոխաբերությամբ ստեղծված պատկերի միջոցով հեղինակը ամփոփ կերպով ներկայացնում է համալսարանական ոլորտում աշխատող գիտնականների գործունեության բնույթը՝ շեշտելով նրանցից պարբերաբար ակնկալվող գիտական աշխատությունների հսկայական ծավալը, և միաժամանակ տալիս է իր սուբյեկտիվ բացասական գնահատականը գիտական գործունեության հանդեպ նման մոտեցմանը: Դիտարկենք ևս երկու օրինակ.

*We always hear that **texting is a scourge**... The idea is that texting spells the decline and fall of any kind of serious literacy, or at least writing ability, among young people in the USA and now the whole world today... (Mc.T.K.L.: 0:11-1:00)*

*...Yes, there are some famous figures that have gone into print and said **text-messaging, especially, is a disaster for the English language.** There is a*

*commentator in Britain who everybody knows in Britain. His name is John Humphrys. Because he runs the morning breakfast show and so everybody listens, you see he's very well-known, and in the Daily Mail a few years ago he was on record as saying that the **young people of today are ruining the English language**, they are doing to English what the Vandals and the Goths did to society all those five hundred centuries ago, **raping and pillaging the English language destroying it with your abbreviations, your horrible abbreviations, don't you know what you're doing... Kind of attitude ... (C.E.N.T.E.: 9:35-10:28)***

Բանավոր խոսքից վերցված այս երկու օրինակներում հեղինակները բջջային հեռախոսով կարճ հաղորդագրություններ ուղարկելու միջոցով տեղի ունեցող հաղորդակցությունը համեմատում են պատուհասի, աղետի հետ (texting is a scourge, text-messaging, especially, is a disaster for the English language), իսկ երկրորդ օրինակում հեղինակը մարդկանց կողմից կարճ հաղորդագրություններում հապավումների առատ գործածությունը համեմատում է բարբարոս ցեղերի՝ վանդալների, գոթերի կողմից արշավանքների ժամանակ կատարված ավիրածությունների, խռատագումների ու թալանի հետ (people of today are ruining the English language, raping and pillaging the English language destroying it with your abbreviations, your horrible abbreviations): Այսինքն՝ փոխաբերաբար գործածված ընդամենը մի քանի բառերի միջոցով ելույթ ունեցողները վերստեղծում են աղետի կամ պատերազմական գործողությունների հետևանքով տեղի ունեցած համատարած ավիրածության ու կոտորածի ամբողջական պատկերներ: Վերջիններիս միջոցով նրանք ներկայացնում են կարճ հաղորդագրությունների՝ լեզվի վրա թողած կործանարար ազդեցության վերաբերյալ մարդկանց շրջանում տիրող կարծիքը՝ միաժամանակ արտահայտելով այդ հարցի շուրջ իրենց սուբյեկտիվ վերաբերմունքը՝ հագեցած հուզականության տարրերով: Յեղինակներն իրենք համակարծիք չեն այսպես մտածող մարդկանց հետ, և հենց այդ պատճառով էլ նրանց խնդիրն է որքան հնարավոր է մեծ սուբյեկտիվության ու հուզականության տարրերով ներկայացնել այդ վերաբերմունքը կարճ հաղորդագրությունների նկատմամբ՝ ապացուցելու համար, որ այն հիմնված է հույզերի

ազդեցութեան տակ ծնված կարծիքների, այլ ոչ թե առողջ ու սթաի դատողութեան վրա, և գուրկ է օբյեկտիվ հիմքերից:

Ինչ վերաբերում է ծեծված կամ քարացած փոխաբերութեաններին, ապա տվյալ խմբում առանձնացրել ենք հետևյալ ենթատեսակները.

ա. Առանձին բառեր, որոնք խոսքում հանդես են գալիս բառարաններում ամրագրված, փոխաբերութեան վրա հիմնված երկրորդային, ածանցյալ իմաստներով: Այսինքն՝ դրանք, ի սկզբանե խոսքում հանդես գալով որպես փոխաբերութեան, աստիճաբար մուտք են գործել լեզվի ոլորտ և այլևս որպես այդպիսին չեն ընկալվում: Օրինակ՝

*Even the basic terminology for describing page elements is in its **infancy**. (C.B.N.W.H.C.N.T.T.I.: 12)*

*The human energy **field** consists of seven energy centres called Chakras...Our values, beliefs are **stored** in the energy systems which **shape** physical behaviours. (S.Ch.S.A.C.: 1)*

*It is about the intuition that comes from our experiences and beliefs and **sits** somewhere in our subconscious mind. (S.Ch.S.A.C.: 3)*

*With all of this, we see that there's a new 21st century battle **brewing**, and governments don't necessarily take a part. (B.G.U.C.W.N.H.: 4:12-4:20)*

*And that even 5000 years ago, people were already building on something much older, with its origins **stretching back** tens of thousands of years – to the geometric signs of Ice Age Europe and far beyond...(P.S.F.A.C.E.: 11:23-11:58)*

*It's not just a question of unfair or ineffective laws. Some countries have good laws, laws which could stem the **tide** of HIV. (F.F.E.B.L.: 6:32-6:59)*

*Where you criminalize people living with HIV or those at greatest risk, you **fuel** the epidemic. (F.F.E.B.L.: 12:11-13:00) [5]*

Նշված օրինակներից ակնհայտ է, որ բառերի երկրորդային բառարանային իմաստների իրացման միջոցով հանդես եկող ծեծված կամ քարացած փոխաբերութեանը որևէ առանձնահատուկ գործառույթ չի իրականացնում խոսքում, բացի անվանողական

գործառույթից, որը հատուկ է բառին՝ որպես լեզվական միավորին ընդհանրապես: Ավելին՝ փոխաբերության այս տեսակն այնպիսի դեր չի կատարում գիտական խոսքում, որը բնորոշ է միայն գիտական ոճին, կամ որով հանդես չի գալիս որևէ այլ գործառական ոճում: Փոխաբերության այս տեսակը (բառարաններում ամրագրված, փոխաբերության վրա հիմնված երկրորդային իմաստներով հանդես եկող բառերը) որևէ արտահայտչականություն կամ հուզականություն էլ չի հաղորդում խոսքին: Յետևաբար դրանք քիչ հետաքրքրություն են ներկայացնում մեր ուսումնասիրության համար: Դրանք հանդես չեն գալիս որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց խոսքի մակարդակում ընդհանրապես, իսկ գիտական խոսքում՝ մասնավորապես: Դրանց՝ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոցի դերն ակնհայտ է լեզվի մակարդակում կամ հարացուցային հարաբերությունների ոլորտում: Մասնավորապես՝ ծեծված կամ քարացած փոխաբերությունների տեսքով իրացվող ճանաչողական կադապրը հանդես է գալիս որպես բազմիմաստության առաջացման աղբյուր, այսինքն՝ լեզվական միավորների՝ բառերի քանակի պահպանմամբ հանդերձ բառիմաստների ավելացման, հետևաբար և բառապաշարի հարստացման միջոց:

բ. Կայուն արտահայտություններ, այդ թվում՝ դարձվածքներ, ասացվածքներ, հայտնի ասույթներ, որոնք ի սկզբանե խոսքում հանդես են եկել որպես փոխաբերական իմաստով օգտագործված բառակապակցություն, որը ժամանակի ընթացքում նույն իմաստով անընդհատ գործածվելու արդյունքում ձեռք է բերել լեզվական միավորի կարգավիճակ՝ հստակ իմաստով ամրագրվելով լեզվի բառարաններում: Կամ լեզվի գործածության կոնկրետ իրավիճակում (առօրյա-կենցաղային հաղորդակցության շրջանակներում կամ հայտնի ստեղծագործություններում) դրանք հանդես են եկել որպես ուղիղ իմաստով գործածված ազատ բառակապակցություն, սակայն, հետագայում տվյալ բառակապակցության առաջին գործածության համատեքստին արտակա կամ ներակա կերպով անդրադարձ կատարելու միջոցով մեջբերվելով այլ իրադրություններում, ձեռք են բերել փոխաբերական իմաստ: Այդ

արտահայտող յոյսերը փոխաբերական իմաստով այնքան հաճախ են գործածվել տարբեր իրավիճակներում, որ ի վերջո խոսքի ու որտից ներթափանցել են լեզվի համակարգ, որի ապացույցն այն է, որ դրանք իրենց հստակ իմաստներով ամրագրված են լեզվի բառարաններում: Այսպես՝

*Now there are laws in many parts of the world which reflect the best of human nature...Unfortunately, these good laws are counter-balanced by a mass of really bad law – law which is grounded in moral judgement and in fear and in greatest risk. These laws **fly in the face of** science and they are grounded in prejudice and in ignorance and in a rewriting of tradition and a selective reading of religion. But you know? You don't have to take my word for it. We're going to hear from two people who are **on the sharp end of the law.** (F.F.E.B.L.: 04:28-05:34)*

*For many of us here HIV is not an abstract threat. **It hits very close to home.** (F.F.E.B.L.: 14:23-14:48)*

*Mileva's role in the annus mirabilis has long been a source of contention. She was undoubtedly a gifted physicist and mathematician and it is to be supposed that Einstein shared his ideas with her and that she assisted him with processing data. However, some historians have suggested that Mileva was really the “**power behind the throne**”, contributing crucial ideas that should have seen her credited as the co-creator of the theory. In reality, there is scant evidence to support such an assertion. What we can be more certain of is that she keenly felt the loss of her own career as her husband's **went into the stratosphere.** (S.Th.E.: 83)*

*Yet the situation in Europe was only getting worse. Hyperinflation in Germany **fanned the flames** of anti-Jewish sentiment and in 1922 Germany's Jewish foreign minister, Walter Rathenau, was savagely assassinated in a nationalist attack. (S.Th.E.: 102) [6]*

Ի տարբերություն նաև ծեծված փոխաբերությունների առաջին խմբի, որոնք միանգամայն չեզոք են և, անվանողական գործառույթից բացի, որևէ դեր չեն կատարում, այս խմբի այսպես կոչված «փոխաբերությունները» արտահայտչականությունն ու պատկերավորությունն են հաղորդում խոսքին: Այնուամենայնիվ դրանք նույնպես հանդես չեն գալիս որպես տեքստի

շրջանակներում տեղեկատվության խոսքման միջոց, քանի որ
 Լեզվում պատրաստի տեսքով առկա միավորներ են, այլ ոչ թե
 խոսքում ըստ իրավիճակի ստեղծվող կազմության ունեներ: Դրանք
 ավելի շատ վերաբերում են դարձվածքաբանության ոլորտին [7] և,
 կարելի է ասել, չեն ել ընկալվում որպես փոխաբերություն:
 Սակայն մեր ուսումնասիրության առանձնահատկությունների
 տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նման
 կայուն արտահայտությունների, մասնավորապես՝ դարձվածքների և
 ասացվածքների հիման վրա ստեղծված **անհատական-հեղինակային
 փոխաբերությունները**, որոնք, որպես կանոն, դուրս են գալիս մեկ
 նախադասության սահմաններից և, ինչպես ցույց է տալիս հետևյալ
 վերլուծությունը, էական դեր են կատարում տեղեկատվությունը
 սեղմելու առումով: Այսպես՝

*You will have seen from this brief outline how the goals shifted with each
 employment scenario. The academic CUP, with its concerns for intellectual content
 and internationalism, led to a demand for a set of encyclopedias **as far away from
 coffee-table books as it is possible to get.** With the more down-market Penguin,
 the encyclopedias changed their character. **The coffee-table came a bit nearer.**
 Several features of the CUP approach were cut (such as the cross-referencing
 system), and a new series of ‘pocket’ reference books were produced, requiring a
 very different set of editorial skills... Penguin stopped publishing encyclopedias in
 January of this year, blaming Wikipedia and other online resources for a serious
 falling-off of print sales. A few months later, finding that other encyclopedia
 contracts were not forthcoming, Adpepper closed down the encyclopedia division.
**Who pays the piper, calls the tune. And if pipers do not bring in the income,
 they have no future.** The Internet side, by contrast, went from strength to strength,
 as will be clear below. It has been a roller-coaster of a ride, therefore, over the past
 22 years, and what is interesting, from the viewpoint of the present conference, is
 the way my close encounters with these various industries has virtually dictated my
 research priorities in applied linguistics... Whether the research demands can be
 met is hardly ever a matter of academic judgment. Costs are always there in the
 background. **Is there enough money in the system to pay the pipers?** Often
 there isn’t. And if an economic downturn comes along, there definitely isn’t. For
 example, in relation to the localization exercise, it would have been possible to*

translate the lexical database into a dozen languages, but the cost of hiring and training translators proved to be prohibitive. (C.P.P.C.T.Ch.L.G.S.I.: 3-7)

Տվյալ օրինակում ունենք մեկ կայուն արտահայտության՝ coffee-table book, և մեկ ասացվածքի՝ who pays the piper, calls the tune վրա հիմնված փոխաբերությունների մի շարք: Անդրադառնալով առաջին կայուն արտահայտությանը՝ հարկ է նշել, որ այն տարբեր համատեքստերում հանդես է գալիս նույն իմաստով, այն է՝ մեծ չափսերի, հաստ կազմով ոչ գեղարվեստական բովանդակությամբ գիրք, որը լի է նկարներով, պարունակում է շատ փոքր տեքստային հատվածներ, և որը, որպես կանոն, դրվում է սենյակի այն հատվածում, օրինակ՝ հենց սուրճի սեղանին, որը նախատեսված է հյուրերը նդունելու համար: «Սուրճի սեղանի» գրքերի նպատակն է ծառայել որպես գրույցի թեմա, խթանել խոսակցությունը (https://en.wikipedia.org/wiki/Coffee_table_book): Եվ քանի որ այս տեսակ գիրքը նախատեսված է ցանկացած մարդու համար, ով սուրճի սեղանի շուրջ կարող է պարզապես թերթել այն ժամանակ անցկացնելու նպատակով, դրանում արժարժվող թեմաները ներկայացված են շատ թռուցիկ կերպով, առանց մասնագիտական բառապաշարի գործածության: Յետևաբար coffee-table book տերմինը հաճախ գործածվում է բացասական իմաստով՝ այս կամ այն թեման ներկայացնելու հարցում մակերեսային մոտեցում նկարագրելու համար: Յենց այդ իմաստով են տվյալ արտահայտությունը և դրավրա հիմնված The coffee-table came a bit nearer փոխաբերությունն օգտագործված այս համատեքստում: Մասնավորապես՝ հեղինակը, խոսելով այն մասին, թե ինչպես է ինքը՝ որպես լեզվաբան, ստիպված եղել ճկունություն ցուցաբերել տարբեր գործատուների համար աշխատելիս՝ հարմարեցնելով իր խմբագրական հմտությունները կոնկրետ գործատուի՝ շուկայի պահանջարկով պայմանավորված պահանջներին, ներկայացնում է այն փոփոխությունները, որոնք տեղի ունեցան հանրագիտարանների հրատարակության ոլորտում: Սկզբում հրատարակիչը շեշտը դնում էր ինտելեկտուալ բովանդակության վրա (...with its concerns for intellectual content...), ինչով պայմանավորված՝ պահանջվում էր, որ հանրագիտարանները «հնարավորինս հեռու լինեն սուրճի սեղանի գրքերից» (...led to a

demand for a set of encyclopedias as far away from coffee-table books as it is possible to get), այսինքն՝ հնարավորինս լուրջ ու գիտական մոտեցում գուցաբերվի դրանց պատրաստման գործում: Ապա մեկ այլ հրատակչի կամ գործատուի կողմից, որի նպատակն է սպառողների հնարավորինս լայն զանգվածի համար արտադրանք տալ, հանրագիտարանների բնույթը, հետևաբար և դրանց խմբագրմանն առաջադրվող պահանջները փոխվեցին (With the more down-market Penguin, the encyclopedias changed their character): Նշված փոփոխության կամ տարբեր հրատարակչների մոտեցումների տարբերության մասին այս ծավալուն տեղեկատվությունը համառոտ կերպով հաղորդելու նպատակով հեղինակը, հիմնվելով ընթերցողին նախորդ համատեքստից հայտնի coffee-table book արտահայտության վրա, դիմում է The coffee-table came a bit nearer (սուրճի սեղանը մի փոքր մոտեցավ) փոխաբերության օգնությամբ: Վերջինս խոսքով կերպով արտացոլում է հանրագիտարանների ստեղծման հարցում մոտեցման փոփոխությունը. դրանք դառնում են ավելի հասարակ ու հանրամատչելի: Մյուս կողմից՝ նշված փոխաբերության գործածության շնորհիվ հեղինակը, էթիկայի նկատառումներից ելնելով, խուսափում է հանրագիտարանների որակի փոփոխության մասին ուղիղ կերպով, այսինքն՝ ուղիղ իմաստով օգտագործված բառերով խոսելուց, որոնք կարող էին ինչ-որ տեղ պիտակավորող որակումների տպավորություն թողնել:

Երկու նույն պատճառով հեղինակը, խոսելով առցանց ռեսուրսների առկայության պատճառով տպագիր հանրագիտարանների վաճառքի անկման և դրա հետևանքով հրատարակչի կողմից հանրագիտարանների պատրաստմամբ զբաղվող բաժնի փակման մասին, օգտագործում է Who pays the piper, calls the tune (ով վճարում է փողահարին, նա էլ պատվիրում է երաժշտությունը) ասացվածքի վրա հիմնված if pipers do not bring in the income, they have no future (եթե փողահարները եկամուտ չեն ապահովում, նրանք ապագա չունեն) փոխաբերությունը: Այսինքն՝ հեղինակը գործատուին (տվյալ դեպքում՝ հրատարակչին) ներակայ կերպով համեմատում է փողահարին վճարողի և երաժշտություն պատվիրողի հետ, մինչդեռ փողահարի «դերում» հանդես է գալիս բիզնեսի ոլորտում աշխատող լեզվաբանը

(տվյալ դեպքում՝ խմբագիրը): Ենթադրելով, որ անգլերեն լեզվին տիրապետող ընթերցողին ծանոթ է տվյալ ասացվածքը, հեղինակը վստահ է, որ նա այդ գիտելիքի հիման վրա կկարողանա վերծանել տվյալ փոխաբերության իմաստը և համարժեք կերպով ընկալել ներակա կերպով հաղորդված տեղեկատվությունը: Յետևաբար հեղինակը, խոսելով կոնկրետ իր՝ որպես լեզվաբանի տեսանկյունից և շահերից, բայց միևնույն ժամանակ չցանկանալով անձնական երանգ հաղորդել իր ասելիքին, նախընտրում է ուղիղ կերպով իր միտքն արտահայտելու փոխարեն գործածել տվյալ փոխաբերությունը «փողահարների» և նրանց ապահոված «եկամտի» վերաբերյալ, քանի որ փոխաբերական իմաստով գործածված «փողահար» (piper) բառի վերաբերության դաշտը բավականին ընդհանրացված է, և դրատակ կարելի է հասկանալ ոչ միայն տվյալ խմբագրին և վերջինիս՝ հրատարակչի հետ ունեցած աշխատանքային հարաբերությունը, այլ և բիզնեսի ցանկացած այլ ոլորտում ներգրավված աշխատողին և գործատուին:

*...We had the power of science and technology, the Industrial Revolution ... English is the language of science... That started then as something like two-thirds of the people who invented all the things that make modern society what it is today did so through the medium of the English language and then in the nineteenth century – economic power – **money talks always – and the language it was talking in the nineteenth century was English** because America and Britain between them had the money markets of the world ... And then in the 20th century we have cultural power with English being the language of the vast majority of the inventions that make modern society what it is. So it's English turning up in the, as it were, almost the right place at the right time during these last four hundred years or so...*
(C.G.E.D.C.: 1:05-1:53)

Տվյալ օրինակում նույնպես ունենք կայուն արտահայտության՝ money talks ասացվածքի վրա հիմնված the language it was talking in the nineteenth century was English փոխաբերությունը: Հեղինակը նկատի ունի, որ աշխարհը խոսում է փողի լեզվով, կամ ում ձեռքում գտնվում է փողը, նաեւ թելադրում է իր կանոնները: Եվ քանի որ 19-րդ դարում փողը, հետևաբար և իշխանությունը կենտրոնացած էին երկու խոշոր անգլախոս երկրների՝ ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի

ձեռքում, աշխարհը խոսում էր այդ երկրների լեզվով, այսինքն՝ անգլերեն: Անձնավորման միջոցով, այսինքն՝ փողին «խոսելու» մարդկային հատկությունն վերագրելով, անգլերեն «խոսող» փողի պատկերի մեջ խոացնելով երկրների քաղաքական ու տնտեսական հզորության և մշակութային ազդեցության փոխադարձ կապի մասին տեղեկատվությունը, հեղինակը միայն մեկ պարզ նախադասությունից բաղկացած փոխաբերության միջոցով համառոտ, բայց շատ հստակ կերպով բացատրում է անգլերենի՝ որպես համաշխարհային հաղորդակցության լեզու կայանալու պատճառներից մեկը՝ ի դեմս անգլախոս երկրների տնտեսական գերիշխանության:

Վերոնշյալ փոխաբերությունների վերլուծությանը ցույց է տալիս, թե ինչպես է փոխաբերությունը, իր մեջ խոացնելով հին (որպես լեզվի համակարգի միավոր գոյությունն ունեցող կայուն արտահայտության բովանդակությունը) և նոր (փոխաբերության բովանդակությունը) տեղեկատվությունը, ծառայում անուղղակի կերպով՝ համաբանության վրահիմնված ընդհանրական պատկերների միջոցով հեղինակի միտքն արտահայտելուն՝ դրանով իսկ ապահովելով գիտական շարադրանքի օբյեկտիվությունն ու չեզոքությունը:

Եթե վերոնշյալ փոխաբերությունները, հանդես գալով որպես իմաստաբանական-ճանաչողական մակարդակում տեղեկատվության խոացման միջոց, թույլ են տալիս խոսողին խուսափել խոսքին անձնական երանգ հաղորդելուց և հնարավորություն են ընձեռում խոսքի հասցեատիրոջ մոտ համապատասխան միտքն առաջացնող պատկերների միջոցով ասելիքը ներկայացնել անուղղակի կերպով, ապա անգլերեն գիտական խոսքի՝ մեր կողմից ուսումնասիրված գրավոր և բանավոր դրսևորումներում շատ հաճախ հանդիպում են նաև այնպիսի անհատական-հեղինակային փոխաբերություններ, որոնց բուն նպատակը խոսքի հասցեատիրոջ համար հնարավորինս մատչելի և ամփոփ կերպով գուտ գիտական հասկացությունն ներկայացնելն է: Ինչպես ցույց է տալիս հետևյալ օրինակների վերլուծությունը, գիտական նյութի մատչելիությունն ապահովելու նպատակով, որը պայմանավորված է նաև շարադրանքի

հակիրճությամբ, խոսողը փորձում է խոսքի հասցեատիրոջ համար
նոր, անհայտ գիտական երևույթը նկարագրել կամ բացատրել խոսքի
հասցեատիրոջը ծանոթ՝ ոչ գիտական աշխարհի իրողությունների
հետհամեմատելու միջոցով: Այսպես՝

The human energy field consists of seven energy centres called Chakras. The concept of Chakras is based on yogic traditions of Hinduism. The word Chakra means wheel in Sanskrit, which by its nature turns and provides motion and energy. There are seven Chakras that are located along the central channel or spine from the base of the spine to the top of the head... “The body is a vehicle of consciousness, Chakras are the wheels that carry this vehicle through its trials and transformations,” says Anodea Judith. (S.Ch.S.A.C.: 1)

Տվյալ օրինակում հոդվածի հեղինակը, փորձելով բացատրել
մարդու մարմնի և հոգու կենսագործունեության համար
պատասխանատու էներգետիկ կենտրոնների՝ չակրաների դերը և
գործունեության հիմնական մեխանիզմը, համապատասխան բառերի
ընտրության և համադրման հաշվին ընթերցողի մտքում խթանում է
ավտոմեքենայի պատկեր: Այն խորհրդանշում է մարդու մարմինը, որը
ծառայում է որպես փոխադրամիջոց գիտակցության համար: Իսկ
չակրաները այդ ավտոմեքենայի անիվներն են: Այսինքն՝ մարմնի
«շարժը» կամ գործունեությունն ապահովում են անիվի պես պտտվող
էներգիայի կուտակումները մարմնի համապատասխան
հատվածներում՝ էներգիայի հոսքի կենտրոնական ուղու՝
ողնաշարի երկայնքով: Ընթերցողին մնում է ավտոմեքենայի
կառուցվածքի մասին իր տարրական արտալեզվական գիտելիքների
հաշվին վերծանել փոխաբերության միջոցով հաղորդվող ներկա
տեղեկատվությունը: Այսինքն՝ եթե ավտոմեքենայի անիվներից
որևէ մեկը խափանվի, կամ դրանց հավասարակշռությունը խախտվի,
ավտոմեքենան չի կարող ծառայել իր նպատակին: Ծիշտունուն կերպ
մարդու մարմինը էներգետիկ կենտրոններից՝ չակրաներից թեկուզ
մեկի աշատանքի խափանման դեպքում կհիվանդանա, ինչը
կարտահայտվի ոչ միայն գուտ ֆիզիկական, այլև հոգևոր
մակարդակում, քանի որ մարմինը գիտակցության կրողն է:
Այսպիսով՝ մեկ նախադասությամբ ներկայացված փոխաբերության
հաշվին ապահովված մատչելի ու սեղմ բացատրության միջոցով

հոդվածի հեղինակը թեկուզև ընդհանուր, տարրական, բայց ամբողջական պատկերացում է տալիս մարդու էներգետիկ կենտրոնների մասին:

A multilingual's languages are 'always on', equally available to access. (C.W.W.: 2)

Բերված օրինակում հեղինակը, ցանկանալով բացատրել, որ բազմալեզվակրի տիրապետած բոլոր լեզուները գտնվում են հավասարապես ակտիվ կարգավիճակում, երբևէ դրանցից մեկը մյուսի համեմատությամբ չի մղվում հետին պլան, օգտագործում է բավականին համառոտ ու կոնկրետ *always on* փոխաբերությունը: Նա լեզուները ներակա կերպով համեմատում է «միացված», «աշխատող» սարքավորման հետ (նման համեմատության հնարավորությունն տալիս է *on* նախդրի բառիմաստը, որով վերջինս հանդես է գալիս մի շարք բայերում, ինչպես օրինակ՝ *turn on, switch on* և այլն)՝ հնարավորինս քիչ բառերով, բայց և բավականին դիպուկ կերպով նկարագրելով նշված երևույթը:

And, in many parts of so-called monolingual Britain, a multilingual experience is available even without the technology, for it is there in the mouths and hands of the children attending the school. Leave your language outside? Not any more. (C.W.W.: 5)

Այս օրինակում *in the mouths and hands of the children* փոխաբերության գործածության նպատակն է ընդգծել այն փաստը, որ բազմալեզվությունն այնքան խորն է նստած երեխաների մեջ (նրանց «բերաններում և ձեռքերում» է, այսինքն՝ մի քանի լեզվով խոսելն ու գրելը նրանց համար միանգամայն բնական երևույթ ու սովորություն է), որ ասես ֆիզիկապես նրանց անբաժան մասն է կազմում: Տվյալ դեպքում փոխաբերությունը թույլ է տալիս հեղինակին, առանց անհարկի մանրամասնելու, ասույթի բովանդակության մեջ ներառել առանցքային իմաստային բաղադրիչ, որը դժվար կլիներ նույնքան հակիրճ և դիպուկ կերպով արտահայտել, եթե չօգտագործվեր փոխաբերությունը:

One of the most important consequences of Einstein's general theory of relativity was the discovery that the universe began as a rapid expansion of space and time 13.8 billion years ago, the Big Bang. Now, according to early versions of the Big

*Bang theory, the universe has been expanding ever since **with gravity gradually putting the brakes on that expansion.** (C.R.E.Ph.: 5:28-6:14)*

Այս օրինակում հեղինակը, ներկայացնելով տիեզերքի առաջացման տեսությունը, ձգողականության ու ժիհակազդեցությունը տիեզերքի ընդարձակմանը համեմատում է այն ու ժիհակազդեցության հետ, որն աստիճանաբար արգելակելու դեպքում դադարի վիճակի է բերում ավտոմեքենան: Առօրյակյան քից բոլորիս հայտնի այս պարզ գործողության՝ ավտոմեքենայի արգելակման պատկերի միջոցով հեղինակն իր ունկնդիրներին շատ ավելի պարզ ու համառոտ կերպով է մատուցում այս ֆիզիկական երևույթի մեկնաբանությունը, քան դա հնարավոր կլիներ ֆիզիկայի բարդ տերմինաբանության ու մանրամասն բացատրության միջոցով:

*What texting is, despite the fact that it involves the brute mechanics of something that we call writing, is **fingered speech.** That's what texting is... (Mc.T.K.L.: 5:20-5:55)*

Ծիշտ նույն տրամաբանությամբ այս օրինակում հեղինակը դիմում է fingered speech փոխաբերությանը: Մասնավորապես՝ հեղինակի խնդիրն է ցույց տալ էլեկտրոնային հաղորդագրությունների (texting) առանցքային տարբերությունը սովորական գրավոր խոսքից (writing կամ written speech): Յենց այդ պատճառով էլ հեղինակը վերցնում է speech բառը և դրան ավելացնում fingered մակդիրը՝ ի տարբերություն written որոշի, որպեսզի բացատրի, որ որպես հաղորդագրություն և հաղորդվող խոսքը պարզապես գրավոր տեքստ է: Դրա ստեղծման եղանակը՝ բջջային հեռախոսի մանր, ինչ-որ տեղ անհարմար ստեղնաշարի վրա մատներով տեքստ մուտքագրելը, հենց պայմանավորում է հաղորդակցության այս ձևի լեզվական առանձնահատկությունները, այդ թվում՝ հապավումների առատությունը, որոնք թույլ են տալիս հաղորդակցվել հնարավորինս քիչ սիմվոլներով: Յենց այս բնորոշ առանձնահատկությունն էլ ենելով էլ, ըստ հեղինակի, այն պետք է դիտարկել ոչ թե որպես աղճատված գրավոր տեքստ, այլ գրավոր և բանավոր հաղորդակցության կողքին մի երրորդ տարատեսակ: Այսպիսով՝ պարզապես մակդիրի վրա հիմնված այս պարզ

փոխաբերությունն իր մեջ խտացնում, ամփոփում է մի ամբողջ գիտական մոտեցում տվյալ հարցի վերաբերյալ [8]:

*Writing is something that came along much later, and as we saw in the last talk, there's a little bit of controversy as to exactly when that happened, but according to traditional estimates, **if humanity had existed for 24 hours, then writing only came along at about 11:07p.m.** (Mc.T.K.L.: 1:00-1:46)*

Նշված փոխաբերությունը թույլ է տալիս հեղինակին, ով ցանկանում է նշել, թե երբ է առաջացել խոսքի գրավոր տարատեսակը, խուսափել հստակ ժամանակաշրջան կամ տարեթիվ նշելուց, ինչը կարող է վիճահարույց տեղեկատվություն լինել և ապացուցման կարիք ունենալ: Միևնույն ժամանակ հեղինակն այս կերպ նաև հեշտացնում է ունկնդրի՝ խոսքը վերծանողի գործն այն իմաստով, որ վերջինս կարող է միտքը չծանրաբեռնել՝ բազմանիշ թվերով ներկայացված տարեթվեր մտապահելով: Ունկնդրին ընդամենը մնում է, 24 ժամից բաղկացած օրվա կտրվածքով (if humanity had existed for 24 hours) դիտարկելով երեկոյան ժամը 11:07-ը (writing only came along at about 11:07p.m.), վերծանել հեղինակի կողմից հաղորդվող տեղեկատվությունը, այն է՝ որ գրավոր խոսքը մարդկության պատմության մեջ համեմատաբար ուշ է առաջ եկել: Այս դեպքում ևս փոխաբերությունը ծառայում է գիտական նյութը հնարավորինս մատչելի և հակիրճ կերպով ներկայացնելուն:

*So I was about 11 when I went along to my first meditation class...Now as I was there, I guess, like a lot of people, I assumed that **it was just an aspirin for the mind.** You get stressed, you do some meditation... (P.T.M.M.: 2:12-3:12)*

Այս օրինակում հեղինակը մեդիտացիայով զբաղվելը համեմատում է ասպիրինի հետ: Քանի որ բոլորիս հայտնի է ասպիրինը՝ որպես ցավը, տենդը, բորբոքային գործընթացը թեթևացնելու հատկությամբ օժտված դեղ, մեդիտացիայի հանգստացնող ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա ցույց տալու, հնարավորինս դիպուկ կերպով բացատրելու համար հեղինակը նշված փոխաբերության միջոցով ասպիրինի հատկություններ է վերագրում մեդիտացիային: Ընդ որում, մարդու օրգանիզմի վրա մեդիտացիայի բուժիչ ազդեցության վերաբերյալ նշված տեղեկատվությունը խոսքի հասցեատիրոջը հաղորդվում է

Ներակա կերպով, որը վերջինս վերծանում է՝ արտալեզվական գիտելիքի վրա հենվելով: Արտալեզվական գիտելիքների վրա հիմնված ներակա իմաստի դերը փոխաբերության միջոցով տեղեկատվության խոսքման և հաջող վերծանման գործում երևում է հետևյալ օրինակում, որտեղ ողջ փոխաբերությունը կառուցված է իրականության կոնկրետ առարկայի մասին իմացության շուրջ: Այսպես՝

*We live in a modern, global world. Terrorists have actually adapted to it. It's something we have to, too, and that means the people who are working on counterterrorism responses have to start, in effect, **putting on their Google-tinted glasses**, or whatever. (Mc.T.F.B.: 1:09-1:31)*

Նշված փոխաբերության միջոցով ընդամենը մի քանի բառի սահմաններում ամփոփված ներակա տեղեկատվությունը խոսքի հասցեատերը կարող է համարժեք կերպով վերծանել, եթե գաղափար ունի այն մասին, թե ինչ է Գուգլի «խելացի» ակնոց կոչվող սարքը (Google-tinted glasses): Դա բոլորովին վերջերս՝ 2012 թվականին, Գուգլի գաղտնի լաբորատորիայում նախագծված, ակնոցի պես կրվող «խելացի» սարք է, որն օժտված է նույն գործառույթներով, ինչ ժամանակակից սմարթֆոնները և պլանշետները: Այդ թվում՝ այն թույլ է տալիս դրանք կրողին ստանալ ամենաթարմ տեղեկությունները եղանակի, երթևեկության, տարբեր հաստատությունների տեղակայման վայրի վերաբերյալ և այլն: Շրջակա աշխարհի վերաբերյալ թարմ ու մանրամասն տեղեկատվություն հավաքագրելու հենց այս գործառույթի, ինչպես նաև նշված սարքավորման՝ գիտության վերջին ճիչերից մեկը լինելու փաստի վրա հիմնվելով էլ՝ ելույթի հեղինակը, խոսելով ահաբեկչության դեմ պայքարի նորագույն մեթոդների մասին, կոչ է անում մարդկանց «հագնել իրենց՝ Գուգլի «խելացի» ակնոցը»՝ այս փոխաբերությամբ նկատի ունենալով, որ նախ՝ նրանք պետք է շատ զգոն ու աջալուրջ լինեն իրենց շրջապատում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, ասես աշխարհին հետևելիս լինեն անընդհատ թարմ տեղեկատվություն մատակարարող «խելացի» ակնոցի միջոցով, ապա՝ նաև ճկուն լինեն այդ փոփոխություններին հարմարվելու հարցում, բաց լինեն պայքարի նորարական

մեթոդների առջև, այդ թվում՝ հակաահաբեկչական պայքարում կիրառեն նորագույն գաղափարներ ու տեխնոլոգիաներ: Այսպիսով՝ ընդամենը մեկ արտահայտության սահմաններում խոսացնելով արտալեզվական բնույթի տեղեկություններ և ունկնդիրների մոտ առաջացնելով համապատասխան զուգորդումներ՝ ելույթ ունեցողը հաղորդում է մի ամբողջ ուղերձ:

Վերոնշյալ օրինակներում գործ ունեինք մեկ բառակապակցությամբ կամ նախադասությամբ ներկայացված փոխաբերությունների հետ: Սակայն ընտրված գործնական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ հաճախ փոխաբերությունը «զբաղեցնում» է մի ամբողջ պարբերություն և նույնիսկ պարբերություններ: Ինչպես երևում է հաջորդ օրինակից, անգամ հանդիպում են տեքստեր, որոնք ամբողջությամբ հիմնված են փոխաբերության վրա: Այսինքն՝ դրանցում հեղինակի ասելիքը խոսքի հասցեատիրոջը փոխանցելու ընտրված միջոցը ներակա համեմատության վրա հիմնված փոխաբերական պատկերն է, որի իրացմանն ուղղված են տեքստում կիրառված բոլոր լեզվական միջոցները: Այսպիսի տեքստերի հիմքում ընկած փոխաբերական պատկերը հաճախ ներկայացված է հենց տեքստի վերնագրում, որն ասես խոսցված կերպով արտացոլում է տեքստի բովանդակությունը: Այսպես՝

Jason McCue: **Terrorism Is a Failed Brand**

...We are at war with a new form of terrorism. It's sort of the good old, traditional form of terrorism, but it's sort of been packaged for the 21st century. One of the big things about countering terrorism is, how do you perceive it? Because perception leads to your response to it...

*... For my part, what I wanted us to do was just to look at terrorism as though **it was a global brand, say, Coca-Cola.** Both are fairly bad for your health. If you look at it as a brand in those ways, what you'll come to realize is, **it's a pretty flawed product.** As we've said, it's pretty bad for your health, it's bad for those who it affects, and it's not actually good if you're a suicide bomber either. **It doesn't actually do what it says on the tin.** You're not really going to get 72 virgins in heaven. It's not going to happen, I don't think. And you're not really going to, in the '80s, end capitalism by supporting one of these groups. It's a load of nonsense.*

*But what you realize, it's got an Achilles' heel. **The brand has an Achilles' heel.** We've mentioned the health, but **it needs consumers to buy into it. The consumers it needs are the terrorist constituency.** They're the people who buy into **the brand**, support them, facilitate them, and they're the people we've got to reach out to. **We've got to attack that brand** in front of them.*

*There's two essential ways of doing that, if we carry on this brand theme. One is **reducing their market.** What I mean is, **it's their brand against our brand.** We've got to compete. We've got to show **we're a better product.** If I'm trying to show **we're a better product**, I probably wouldn't do things like Guantanamo Bay. We've talked there about **curtailing the underlying need for the product itself.** You could be looking there at poverty, injustice, all those sorts of things which feed terrorism.*

*The other thing to do is **to knock the product, attack the brand myth**, as we've said. You know, there's nothing heroic about killing a young kid. Perhaps we need to focus on that and get that message back across. **We've got to reveal the dangers in the product.** Our target audience, **it's not just the producers of terrorism**, as I've said, the terrorists. **It's not just the marketeers of terrorism**, which is who finance, those who facilitate it, but **it's the consumers of terrorism.** We've got to get in to those homelands. That's where they recruit from. That's where they get their power and strength. That's where their consumers come from. And we have to get our messaging in there. So the essentials are, we've got to have interaction in those areas, with the terrorists, the facilitators, etc. We've got to engage, we've got to educate, and we've got to have dialogue.*

*Now, staying on this brand thing for just a few more seconds, **think about delivery mechanisms.** How are we going to do these attacks? Well, **reducing the market** is really one for governments and civil society. We've got to show we're better. We've got to show our values. We've got to practice what we preach. But when it comes to **knocking the brand, if the terrorists are Coca-Cola, and we're Pepsi, I don't think, being Pepsi, anything we say about Coca-Cola, anyone's going to believe us.***

*So we've got to find a different mechanism, and one of the best mechanisms I've ever come across is the victims of terrorism. They are somebody who can actually stand there and say, **"This product's crap. I had it and I was sick for days. It***

burnt my hand, whatever.” You believe them, You can see their scars. You trust them...

...We don't do enough as a society. We do not look after our victims, and we do not enable them, and what I'm going to try and show is that actually, victims are the best weapon we have against more terrorism...

...We need to build an arsenal of noncombative weapons in this war on terrorism. But of course, it's ideas – is not something that governments do very well.

I want to go back to just to ... this idea of brand, and I was thinking about Coke and Pepsi, etc. We see it as terrorism versus democracy in that brand war. They'll see it as freedom fighters and truth against injustice, imperialism, etc.

We do have to see this as a deadly battlefield. It's not just [our] flesh and blood they want. They actually want our cultural souls, and that's why the brand analogy is a very interesting way of looking at this. If we look at al Qaeda. **Al Qaeda was essentially a product on a shelf in a souk somewhere which not many people had heard of. 9/11 launched it. It was its big marketing day, and it was packaged for the 21st century. They knew what they were doing. They were effectively [doing] something in this brand image of creating a brand which can be franchised around the world, where there's poverty, ignorance and injustice.**

We, as I've said, have got to hit that market, but we've got to use our heads rather than our might. If we perceive it in this way as a brand, or other ways of thinking at it like this, we will not resolve or counter terrorism...

... Now, I just want to end with saying, if we follow reason, we realize that I think we'd all say that we want to have a perception of terrorism which is not just a pure military perception of it. We need to foster more modern and asymmetrical responses to it. This isn't about being soft on terrorism. It's about fighting them on contemporary battlefields. We must foster innovation, as I've said...

...We have to ask ourselves these questions, however unpalatable. Have we been ignoring an injustice or a humanitarian struggle somewhere in the world? What if, actually, engagement on poverty and injustice is exactly what the terrorists wanted us to do? What if the bombs are just simply wake-up calls for us?...

... What is definitely uncontroversial is that, as I've said, we've got to stop being reactive, and more proactive, and I just want to leave you with one idea, which is that it's a provocative question for you to think about, and **the answer will require**

sympathy with the devil. It's a question that's been tackled by many great thinkers and writers: What if society actually needs crisis to change? What if society actually needs terrorism to change and adapt for the better? It's those Bulgakov themes, it's that picture of Jesus and the Devil hand in hand in Gethsemane walking into the moonlight. What it would mean is that humans, in order to survive in development, quite Darwinian spirit, inherently must dance with the devil...
(Mc. T.F.B.: 01:00-17:33)

Տվյալ տեքստային հատվածում, որը վերցված է բանավոր ելույթից, հեղինակը փորձում է ներկայացնել ահաբեկչության դեմ պայքարի՝ իր կողմից առաջարկվող միջոցները, որոնք բացառում են զինված կամ բռնի ուժի կիրառման վրա հիմնված պայքարի որևէ մեթոդ: Ահաբեկչությունը վերացնելու միակ խելամիտ եղանակը նա համարում է հարցի՝ խաղաղ ճանապարհով կարգավորումը, այդ թվում՝ ահաբեկիչների հետ երկխոսությունը, ահաբեկչությունը ծնող սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրների վերացումը, ինչպես նաև հանրության՝ թե ահաբեկիչների կողմն անցած, թե վերջիններիս դեմ պայքարող շերտերին ահաբեկչությունից տուժածների օրինակով հասկացնելը, որ ինչպես ահաբեկչությունը, այնպես էլ դրան նույն զենքով՝ բռնի մեթոդներով պատասխանելը, ոչ թե նվազեցնում է ահաբեկչության վտանգը, այլ բազմապատկում ավիրածությունները: Գաղափարական մակարդակում ահաբեկչության դեմ պայքարի նշանակությունը ցույց տալու նպատակով ելույթի հեղինակը դիմում է համաբանության վրա հիմնված փոխաբերության ստեղծմանը: Մասնավորապես՝ ահաբեկիչներին և նրանց դեմ պայքարողներին համեմատում է շուկա հանված երկու համազոր կոմերցիոն ապրանքների, իսկ նրանց միջև ընթացող պայքարը՝ շուկայական մրցակցության հետ՝ առաջ քաշելով այն գաղափարը, որ մրցակիցներից ով ավելի խելացի մարքեթինգային քայլեր անի, նա էլ կգրավի շուկայի առաջատարի դիրքը: Մեջբերված հատվածի հենց երկրորդ պարբերությունում հեղինակը ահաբեկչությունը համեմատում է համաշխարհային ապրանքանիշի՝ Կոկա-Կոլայի հետ այն ընդհանրության հիման վրա, որ ինչպես Կոկա-Կոլան, այնպես էլ ահաբեկչությունը վնասակար են առողջության համար: Յենց այս

ընդհանուր հատկանիշի վրա հիմնվելով էլ՝ հեղինակը համապատասխան փոխաբերությունների միջոցով պիտակավորում է ախաբեկչությունը որպես «խոտան ունեցող ապրանք» (it's a pretty flawed product), որն իրականում չի կատարում այն «խոստումը», որ գրված է թիթեղյա տարայի վրա (It doesn't actually do what it says on the tin): Նշված փոխաբերությունը հասկանալու համար անհրաժեշտ է, որ ելույթի ունկնդիրները տիրապետեն համապատասխան արտալեզվական գիտելիքի, այսինքն՝ տեղյակ լինեն «Կոկա-Կոլա» ընկերության՝ տարբեր ժամանակաշրջանների գովազդային լոգոևզներին, որոնք պատկերված են լինում Կոլայի շշի վրա: Դրանցից են՝ Coca-Cola...Makes Good Things Taste Better (1956), Things Go Better With Coke (1963), It's the Real Thing (1969), Coke Adds Life (1976), Have a Coke and a Smile (1979), America's Real Choice (1985), Always Coca-Cola (1993), Coca-Cola.Enjoy (2000), Life Tastes Good (2001), Coca-Cola...Real (2003), Open Happiness (2009) (<http://www.coca-colacompany.com/stories/coke-lore-slogans/>): Այլ կերպ՝ ինչպես Կոկա-Կոլան է երջանկություն և պարգևելու խոստումներ արտահայտող նման լոգոևզներով իրականում քայքայում սպառողների առողջությունը, ճիշտ նույն կերպ էլ իսլամիստ ախաբեկիչների գաղափարախոսությունն է իսլամ ինչպես մահապարտների գործողություններից տուժած անմեղ զոհերի, այնպես էլ հենց մահապարտների կյանքը՝ վերջիններիս խոստանալով երկնային արքայություն և բազում հաճույքներ անդրշիրիմյան աշխարհում, եթե «խմեն այդ անմահական խմիչքը», ասել է թե՛ «հանուն գաղափարի» ավիրածությունների կատարեն այս՝ երկրային կյանքում (As we've said, it's pretty bad for your health, it's bad for those who it affects, and it's not actually good if you're a suicide bomber either. It doesn't actually do what it says on the tin. You're not really going to get 72 virgins in heaven.): Նշված փոխաբերությունները ցույց են տալիս, թե ինչպես է, արտալեզվական գիտելիքի վրա հիմնվելով, հեղինակը կարողանում ներակա կերպով հաղորդել տեղեկատվությունը: Սրա նպատակը տվյալ դեպքում ոչ միայն առանց այն էլ մեծածավալ տեղեկատվությամբ հագեցած տեքստը չծանրաբեռնելն ու ելույթի համար հատկացված ժամանակում տեղավորվելն է, այլև ախաբեկչական գաղափարախոսությանը բացահայտ կերպով

գնահատական տալ ու ց խոսափելը, որը ելույթի հեղինակին հաջողվում է նաև մահապարտների՝ այդ գաղափարախոսության կողմից խաբված լինելու հանգամանքն ակնարկելու շնորհիվ: Տվյալ դեպքում փոխաբերությունը թույլ է տալիս խոսողին խոսել զգուշավորությամբ պահանջող թեմայի մասին՝ միաժամանակ խոսափելով հանրության առջև կտրուկ գնահատականներ տալ ու ց, դրանով իսկ հնարավորինս նվազեցնելով սուբյեկտիվության աստիճանը գիտական խոսքում, որը, ինչպես գիտենք, համոզիչ լինելու համար պետք է փաստերը հնարավորինս օբյեկտիվ կերպով ներկայացնի:

Շարունակելով «բրենդների պատերազմի» թեման՝ հեղինակն ընդգծում է, որ հակառակորդ «բրենդի»՝ ախաբեկչության արհեստական գարշապարը, որից կառչելով՝ կարելի է հաղթել վերջինիս, դրա «սպառողներն» են՝ այն մարդիկ, ովքեր հավատում են ախաբեկչներին, դրանով իսկ օգնում ու աջակցում նրանց (But what you realize, it's got an Achilles' heel. The brand has an Achilles' heel. We've mentioned the health, but it needs consumers to buy into it. The consumers it needs are the terrorist constituency. They're the people who buy into the brand, support them, facilitate them, and they're the people we've got to reach out to. We've got to attack that brand in front of them.): Հեղինակն ակնարկում է, որ ախաբեկչության դեմ պայքարի արդյունավետ միջոցներից մեկը դրա սպառողների շուկան կրճատելն է (reducing their market), որը հնարավոր է անել՝ սպառողների աչքի առաջ այդ «բրենդը գրոհելու» (We've got to attack that brand in front of them), իրենց կողմից առաջարկվող «ապրանքի»՝ խաղաղության, երկխոսության, համագործակցության առավելությունը դրա նկատմամբ ցուցադրելու միջոցով (What I mean is, it's their brand against our brand. We've got to compete. We've got to show we're a better product. If I'm trying to show we're a better product, I probably wouldn't do things like Guantanamo Bay): Մեր կողմից նշված՝ խաղաղության, երկխոսության, համագործակցության ներակա իմաստները show we're a better product փոխաբերություննից դուրս բերելու համար ու կնդիրները կրկին պետք է ապավինեն իրենց արտաբերական գիտելիքներին: Մասնավորապես՝ I probably wouldn't do things like Guantanamo Bay ասույթի բովանդակության վերծանման համար, որը թույլ կտա համարժեք

կերպով վերականգնել նշված փոխաբերությամբ ներակա կերպով հաղորդված տեղեկատվությունը, անհրաժեշտ է իմանալ, որ Guantanamo Bay-ը 2002 թվականին ԱՄՆ կողմից հիմնադրված հայտնի կալանավայր է, որտեղ պահվում են պատերազմական հանցագործությունների, այդ թվում՝ ահաբեկչության մեջ կասկածվող անձինք, որոնց մեծ մասը մահմեդական է: Այս կալանավայրը հայտնի է բանտարկյալների նկատմամբ իրականացվող խոշտանգումներով և մարդու իրավունքների այլ կոպիտ խախտումներով:

Նշված նպատակներին հասնելու համար նախ պետք է վերացնել հակառակորդի «ապրանքի»՝ ահաբեկչության մեծ պահանջարկը ծնող պատճառները: Դրանք են աղքատությունը և անարդարությունը, որոնք շահարկելով, այսինքն՝ խաբելով մարդկանց, թե իբր այս սոցիալ-տնտեսական ու քաղաքական չարիքների դեմ են պայքարում, ահաբեկիչները ձեռք են բերել «սպառողների»՝ հետևորդների մեծ բանակ, որոնց անտեղյակությունն ահաբեկչության հաջողության գրավականն է (We've talked there about curtailing the underlying need for the product itself. You could be looking there at poverty, injustice, all those sorts of things which feed terrorism):

Չաջորդ պարբերությունում շարունակելով խոսել ահաբեկչության շուրջ շրջանավոր առասպելը (թե իբր այս պայքարում է անարդարության և աղքատության դեմ) ի չիք դարձնելու մյուս քայլի մասին (The other thing to do is to knock the product, attack the brand myth)՝ հեղինակն ընդգծում է դրանում թաքնված վտանգները բացահայտելու կարևորությունը (We've got to reveal the dangers in the product)՝ նշված փոխաբերությունների միջոցով շարունակելով հակաահաբեկչական պայքարը ներակա կերպով համեմատել տնտեսական մրցակցության հետ: Ձգտելով նշված փոխաբերությունների միջոցով խտացված կերպով հանդես եկող՝ խաղաղ պայքարի գաղափարը ամրապնդել ու նկնդիրների գիտակցության մեջ՝ հեղինակը նրանց, ում ուղղված է բախումների դեմն առնելու նպատակով երկխոսության կոչը, բաժանում է «ահաբեկչություն արտադրողների» (producers of terrorism)՝ նկատի ունենալով հենց ահաբեկիչներին, ահաբեկչության համար «շուկա

դուրս գալու» պայմաններ ստեղծողների (marketeers of terrorism)՝ նկատի ունենալով ահաբեկչությունը ֆինանսավորողներին, և ահաբեկչության սպառողների (consumers of terrorism)՝ նկատի ունենալով այն մարդկանց, ովքեր, իրենց երկրներում տիրող ծանր սոցիալական, տնտեսական պայմաններից և քաղաքական իրավիճակից դրդված, ընկնում են ահաբեկիչների թակարդը՝ դառնալով գործիք վերջիններիս ձեռքին:

Այնուհետև՝ խոսելով իրենց «ապրանքը սպառողներին մատակարարելու մեխանիզմների» (think about delivery mechanisms), այսինքն՝ ահաբեկչության դեմ ոչ զինված ճանապարհով պայքարելու գաղափարը հանրությանը հասցնելու միջոցների մասին՝ հեղինակն ընդգծում է, որ իրենց առավելությունը հակառակորդի նկատմամբ ցույց տալու և ավագույն միջոցը իրենց քարոզածն ի կատար ածելն է: Կոպիտասած, եթե ահաբեկիչները «Կոկա-Կոլան» են, իսկ ահաբեկչության դեմ պայքարողները՝ «Պեպսին» (ինչպես գիտենք, երկու ըմպելիքներն էլ հավասարապես վտանգավոր են, բաղադրությամբ և համային առումով էլ համարյա թե նույն բանն են այն տարբերությամբ, որ Պեպսին ստեղծվել է Կոկա-Կոլայից ավելի ուշ՝ որպես վերջինիս կրկնօրինակելու և շուկայում վերջինիս դիրքերը գրավելու փորձ), այսինքն՝ եթե ահաբեկչության դեմ պայքարողները կիրառեն պայքարի նույն մեթոդները, ինչ ահաբեկիչները, առաջինները ոչնչով չեն տարբերվի վերջիններից: Յետևաբար արդյունավետ չեն և ինչի ահաբեկիչների կողմն անցած «սպառողներին» իրենց շարքերը բերելու և հակաահաբեկչական պայքարի հաջողությունն ապահովելու նրանց ջանքերը: Այսպիսով՝ հերթական անգամ ականատես ենք և ինու՛մ, թե ինչպես է փոխաբերությունը (But when it comes to knocking the brand, if the terrorists are Coca-Cola, and we're Pepsi, I don't think, being Pepsi, anything we say about Coca-Cola, anyone's going to believe us)՝ որպես իմաստաբանական-ճանաչողական մակարդակում տեղեկատվության խոսքման միջոց, թույլ տալիս տեղեկատվությունը ներակայելու հաշվին սակավաթիվ և եզրական միավորներով հաղորդել մեծածավալ տեղեկատվություն՝ միաժամանակ խուսափելով էթիկայի տեսանկյունից նուրբ թեմաների մասին ուղիղ խոսելուց, ինչը

հաճախ կարող է պարունակել քննադատություն կամ նույնիսկ մեղադրանք հնչեցնել ու վտանգ:

Որպես մարդու առողջության համար վնասակար ապրանքի՝ ահաբեկչության վտանգավորությունը ցուցադրելու և ավագույն միջոց՝ հեղինակն առաջարկում է ահաբեկչական գործողությունների արդյունքում ֆիզիկական վնաս կրած մարդկանց վառ օրինակը՝ այս դեպքում կրկին դիմելով փոխաբերության գործածությանը (“This product’s crap. I had it and I was sick for days. It burnt my hand, whatever.”):

Մոտենալով մեջբերված հատվածի վերլուծության ավարտին՝ նշենք, որ հեղինակն ամբողջացնում է ահաբեկչության՝ որպես հանրությանը մեծ ծավալներով մատակարարվող վնասակար «ապրանքի» ընդհանուր պատկերը՝ փոխաբերության միջոցով շատ համառոտ, բայց սպառիչ կերպով ներկայացնելով դրա պատմությունը: Մասնավորապես՝ հեղինակը խոսում է այն մասին, թե ինչպես ընդամենը մի քանի տարում այն հասավ այսպիսի ահռելի մաշստաբների՝ դառնալով 21-րդ դարի մեծագույն չարիքներից մեկը: Յեղինակը Ալ Քաիդան համապատասխան փոխաբերության միջոցով համեմատում է մահմեդական շուկայում՝ վաճառատանին դրված մի ապրանքի հետ, որը մինչև սեպտեմբերի 11-ը շատ քչերին էր հայտնի: Այդ օրը դարձավ ահաբեկչության գլխավոր «մարքեթինգային օրը», երբ այն, 21-րդ դարի համար «փաթեթավորված» լինելով, ներկայացվեց հանրությանը (Al Qaeda was essentially a product on a shelf in a souk somewhere which not many people had heard of. 9/11 launched it. It was its big marketing day, and it was packaged for the 21st century): Այս ողբերգական իրադարձությանը ամբ ահաբեկչությունը դարձավ «համաշխարհային բրենդ, որի արտադրանքը սկսեց վաճառվել» աշխարհի այն անկյուններում, որտեղ իշխում են աղքատությունը, անարդարությունը և տգիտությունը (They were effectively [doing] something in this brand image of creating a brand which can be franchised around the world, where there’s poverty, ignorance and injustice): Այսինքն՝ սեպտեմբերի 11-ով ահաբեկչությունը նոր բովանդակություն ու ձևաչափ ստացավ, իսկ սեպտեմբերի 11-ի սցենարով գործող ահաբեկչական խմբավորումները մեծ թափով բազմացան աշխարհի հատկապես այն

մասերում, որտեղ մեծ մասշտաբների են հասնում սոցիալական ու տնտեսական խնդիրները, ինչպես նաև քաղաքական հակամարտության ունենքը, որովհետև այդ ահաբեկչական խմբավորումների գլխավոր խաղաթուղթն անտեղյակ բնակչությանը խաբելն է, թե իբր իրենք պայքարում են հանուն այդ խնդիրների վերացման:

Այսպիսով՝ նշված տեքստային հատվածի վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես է հեղինակին հաջողվել ընդգծված բառերի շուրջ կառուցված առանձին, բայց և ողջ տեքստի երկայնքով փոխկապակցված առանձին փոխաբերությունների միջոցով տեքստի մակարդակում ստեղծել մեկ ամբողջական, ընդհանուր փոխաբերություն կամ փոխաբերական պատկեր, որը խտացված կերպով՝ մեկ նախադասությամբ, ներկայացված է հենց տեքստի վերնագրում՝ Terrorism Is a Failed Brand (Ահաբեկչությունը ձախողված բրենդ է):

Ամփոփելով ելույթը՝ հեղինակը, մեջբերելով Մ. Բուլլգակովի «Վարպետը և Մարգարիտան» վեպի հայտնի թեման, որ Յիսուսը և Սատանան (բարին ու չարը) քայլում են ձեռք ձեռքի տված, հայտնում է այն տեսակետը, որ ահաբեկչությունը միգուցե հենց այն չարիքն է, որն անհրաժեշտ է հանուն մարդկության զարգացման և բարօրության այն իմաստով, որ բացում է հասարակության աչքերն աղքատության, անարդարության և նման այլ չարիքների վրա՝ գիտակցել տալով այդ խնդիրների շուտափույթ լուծման անհրաժեշտությունը: Իսկ պայթող ռումբերը, հնարավոր է, պարզապես ահազանգ են: Յեղինակը կարծիք է հայտնում, որ ճգնաժամն անհրաժեշտ պայման է զարգացման համար, այս միտքը կրկին պատկերավոր կերպով արտահայտելով փոխաբերությունների միջոցով (the answer will require sympathy with the devil... Humans, in order to survive in development, quite Darwinian spirit, inherently must dance with the devil): Այս դեպքում devil բառի վրա հիմնված փոխաբերությունները թույլ են տալիս չկոնկրետացնել չարիքը՝ ի դեմս ահաբեկչության, աղքատության, անարդարության և այլն, այլ այդ բոլոր իմաստներն արտահայտել միաժամանակ՝ խտացնելով մեկ փոխաբերության սահմաններում:

Այս ափսոսվ՝ ներկայացված տեսական և գործնական նյութի վերլուծության արդյունքները թույլ են տալիս պնդել, որ փոխաբերությունը՝ որպես իմաստի խոսքման մեխանիզմ, թույլ է տալիս, լեզվական միջոցների գործածությունը նվազագույնին հասցնելով հանդերձ, իրականության այս կամ այն դրվագը խոսքայնացնել հնարավորինս ամբողջական և ընդգրկուն պատկերի ստեղծմամբ: Ավելին, անգլերեն գիտական խոսքում հանդես եկող անհատական-հեղինակային փոխաբերությունները, տեղեկատվության խոսքմանը զուգահեռ և դրանով պայմանավորված, իրականացնում են նաև մի շարք այլ գործառնություններ: Մասնավորապես՝ նշված կառույցները նպաստում են գիտական ուսումնասիրության նյութն ավելի մառչելի և ամփոփ կերպով ներկայացնելուն գիտական երևույթները և հասկացությունները ոչ գիտական աշխարհի իրողությունների հետ համեմատելու միջոցով: Դրանք նաև թույլ են տալիս արտահայտվել անուղղակի կերպով, ինչի արդյունքում մեղմանում է խոսքի առարկայի վերաբերյալ խոսողի դիրքորոշման սուբյեկտիվությունը: Բացի այդ, խնդրո առարկա փոխաբերությունները կոտրում են գիտական շարադրանքի միապաղաղությունը՝ ապահովելով խոսքի արագ ընկալումը և դրանով իսկ տնտեսելով թե՛ խոսողի, թե՛ խոսքի հասցեատիրոջ մտավոր ջանքերը, էներգիան ու ժամանակը: Ընդ որում, փոխաբերության գործառնությունների նշված տարբերակումը զուտ պայմանական բնույթ է կրում, քանի որ իրական հաղորդակցության մեջ դրանք հանդես են գալիս միաժամանակ, իհարկե, դրանցից մեկի՝ մյուսների նկատմամբ գերակայությամբ՝ ըստ հաղորդակցության առանձնահատկությունների:


Ամփոփելով կատարված հետազոտության արդյունքները՝ հարկ ենք համարում նաև անդրադառնալ ուսումնասիրության վերջում մեր կողմից իրականացված հաշվարկին, որի նպատակն է արտացոլել խնդրո առարկա կառույցների բաշխումը հավաքագրված և վերլուծված փաստական նյութի շրջանակներում: Ինչպես ցույց են տալիս ստացված տվյալները, լեզվական տնտեսման նշված միջոցների գործածության հաճախականությունը տարբերվում է՝ ըստ գիտական դիսկուրսի տարատեսակների, ինչպես նաև գրավոր և

բանավոր դրսևորումների՝ պայմանավորված դրանց ոճաժանրային առանձնահատկություններով: Մասնավորապես՝ վերլուծված 310 էջ բուն գիտական կամ ակադեմիական և 310 էջ գիտահանրամատչելի ուղղվածության տեքստերում (էջերի քանակը որոշվել է 1 էջը՝ 1800 սիմվոլ հաշվարկով, ընդ որում՝ բանավոր ելույթների դեպքում հաշվարկվել են դրանց գրադարձումները) արձանագրվել է ուսումնասիրված կառույցների հետևյալ քանակական և տոկոսային հարաբերությունը.

Աղյուսակ 1


Լեզվական տնտեսման միջոցը (LSU)	LSU քանակը բուն գիտական խոսքում	LSU մասնաբաժինը բուն գիտական խոսքում	LSU քանակը գիտահանրամատչելի խոսքում	LSU մասնաբաժինը գիտահանրամատչելի խոսքում
Չեղջված կառույցներ	104	21%	131	39%
Դերբայական դարձվածներ	319	66%	106	32%
Փոխաբերություններ	62	13%	98	29%
Ընդամենը	485	100%	335	100%
Էջերի ընդհանուր թիվը	310		310	

Գծապատկեր 1.1



Գծապատկեր 1.2

LSU մասնաբաժինը գիտահանրամատչելի խոսքում



Ինչպես երևում է վերոնշյալ հաշվարկից, դերբայական դարձվածները զգալիորեն գերակշռում են բուն գիտական խոսքում՝ մոտ 3 անգամ գերազանցելով գեղջված կառույցներին և մոտ 5 անգամ՝ փոխաբերություններին, ինչը կապված է գիտական դիսկուրսի տվյալ տարատեսակի խիստ գիտական ուղղվածության և վերջինովս պայմանավորված՝ շարադրանքի շարահյուսական կառուցվածքի բարդության, ինչպես նաև արտահայտչականության ստեղծող տարրերի (ինչպես օրինակ՝ փոխաբերությունն է) նվազագույն թույլատրելիության հետ: Բացի այդ, բուն գիտական կամ ակադեմիական դիսկուրսի շրջանակներում ավելի շատ ներկայացված են գիտական խոսքի գրավոր դրսևորումները, իսկ դերբայական դարձվածները, ինչպես ցույց է տալիս հաջորդադրուսակը, առավելապես բնորոշ են գրավոր խոսքին: Մինչդեռ լեզվական տնտեսման միջոցի դերում հանդես եկող նշված երեք տիպի կառույցների բաշխումը գիտահանրամատչելի խոսքում ավելի հավասարաչափ է: Ընդ որում, գործածության հաճախականությամբ առաջին տեղում գեղջված կառույցներն են, որոնց շատ չնչին տոկոսային տարբերությամբ հաջորդում են դերբայական դարձվածները (մասնավորապես՝ գերակշռում են որպես հետադասորոշիչ հանդես եկող դերբայական դարձվածները) և փոխաբերությունները: Ուսումնասիրված կառույցների այսպիսի բաշխումը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտահանրամատչելի տեքստերը, որպես կանոն, ուղղված են ոչ մասնագիտական լսարանին: Յետևաբար դրանք պահանջում են տեղեկատվության ներկայացման հնարավորինս մատչելի, թեթև և հետաքրքիր ձև: Շարադրանքի թեթևությունն ապահովում են

զեղչված կառույցները, մինչդեռ հետաքրքրաշարժությունը ստեղծում են գեղարվեստականության տարրեր ներմուծող փոխաբերությունները:


Ուսումնասիրության շրջանակներում նաև փորձ է արվել համեմատելու լեզվական տնտեսման միջոցների բաշխումը՝ ըստ գրավոր-բանավոր խոսք տարբերակման: Ընդ որում, քանի որ ի սկզբանե հավաքագրված փաստական նյութի սահմաններում գրավոր և բանավոր տեքստերի էջերի քանակն անհավասար էր, հավաստի տվյալներ ստանալու նպատակով որոշվել է համեմատել անգլերեն գիտական խոսքի յուրաքանչյուր դրսևորումից 90 էջ: Համեմատության արդյունքում հաստատվել է, որ դերբայական դարձվածները գերակշռում են գրավոր խոսքում, մինչդեռ զեղչված կառույցներն առավել բնորոշ են բանավոր խոսքին: Ինչ վերաբերում է փոխաբերություններին, դրանց քանակական կամ տոկոսային տարբերությունն առանձնապես մեծ է գրավոր-բանավոր խոսք տարբերակման լույսի ներքո, այլ, ինչպես երևում է նախորդ աղյուսակից, հիմնականում պայմանավորված է գիտական խոսքի ոճաժանրային տարբերություններով:

Աղյուսակ 2

Լեզվական տնտեսման միջոցը (LSU)	LSU քանակը գրավոր խոսքում	LSU մասնաբաժինը գրավոր խոսքում	LSU քանակը բանավոր խոսքում	LSU մասնաբաժինը բանավոր խոսքում
Չզեղչված կառույցներ	35	22%	53	46%
Դերբայական դարձվածներ	90	57%	32	28%
Փոխաբերություններ	32	21%	30	26%
Ընդամենը	157	100%	115	100%
Էջերի ընդհանուր թիվը	90		90	

Գծապատկեր 2.1


ԼՏՄ մասնաբաժինը գրավոր խոսքում



- Ձեռչված կառույցներ
- Դերբայական դարձվածներ
- Փոխաբերություններ

Գծ ապատկեր 2.2

ԼՏՄ մասնաբաժինը բանավոր խոսքում



- Ձեռչված կառույցներ
- Դերբայական դարձվածներ
- Փոխաբերություններ

ՆԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ջ. Լակոֆը և Մ. Ջոնսոնն ուղղություն են ցույց տվող այս հասկացությունների վրա հիմնված փոխաբերությունները սահմանում են որպես տարածական փոխաբերություններ (spatial metaphors) (Lakoff, Johnson 1980):

2. Ն.Պ. Բեխտերևան նկատում է, որ «ուղեղում կամի մեխանիզմ, որը լրացուցիչ հնարավորություններ է ապահովում յուրաքանչյուր նորույթի հետ բախվելիս: Նոր իրավիճակում տեղի են ունենում նյարդային բջիջների ակտիվացում, ուղեղի տարբեր հատվածների և տարրերի միջև ձևավորվում են բազմաթիվ կապեր» (Бехтерева 1974: 17): Ճիշտ նույն կերպ փոխաբերության ընկալման գործընթացում խոսքի հասցեատերը հայտնվում է նոր իրավիճակում: Տվյալ դեպքում նա բախվում է նոր տեղեկատվության հետ և, փորձելով ընկալել դրա իմաստը, մեկնաբանում է այդ տեղեկատվությունը պարունակող փոխաբերության բովանդակությունը իր նախորդ փորձի կամ հիշողության մեջ

